

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԻՐԱՎԱԲԱՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ

## ՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԵՎ

ԻՐԱՎՈՒՆՔ

Թիվ 4(50)  
2010 թ.

Գլխավոր խմբագիր՝  
Լևոն Օհանյան

Խմբագրական խորհուրդ

Սամվել Դիլբանդյան -

գլխավոր խմբագրի տեղակալ

Դավիթ Մելքոնյան -

պատասխանատու քարտուղար

Գևորգ Դանիելյան

Գագիկ Համբարձումյան

Արթուր Վաղարշյան

Սերգեյ Առաքելյան

Վիգեն Քոչարյան

Հիմնադիր և հրատարակիչ՝  
ՀՀ իրավաբանների միություն

*Խմբագրության հասցեն՝*

ՀՀ, 0025 Երևան,

Ալեք Մանուկյան 1, ԵՊՀ

իրավաբանական ֆակուլտետ:

Հեռ. 55-77-92

*Խմբագրությունը կարող է  
հրապարակել նյութեր՝ համամիտ  
չլինելով հեղինակների  
տեսակետներին:*

*10 համակարգչային էջից ավելի  
չպատվիրված նյութերը չեն  
ընդունվում:*

e-mail: [petutyun.irav@gmail.com](mailto:petutyun.irav@gmail.com)

Դասիչ՝ 77771

Տպագրական 7 մամուլ

Գրանցման թիվը՝ 798

Տպաքանակը՝ 500

Գինը՝ պայմանագրային

Հանձնված է շարվածքի

1.12.2010

Հանձնված է տպագրության

27.12.2010

СОЮЗ ЮРИСТОВ  
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

**ГОСУДАРСТВО  
И  
ПРАВО**

Номер 4 (50)  
2010 г.

---

---

Главный редактор:  
Левон Оганян

Учредитель и издатель:  
Союз Юристов РА

**Редакционный совет**

Самвел Дилбандян -  
зам. главного редактора

Давид Мелконян -  
ответственный секретарь

Геворг Даниелян  
Гагик Амбарцумян

Артур Вагаршян  
Сергей Аракелян

Виген Кочарян

***Адрес редакции:***

*РА, 0025 Ереван,*

*ул. Алека Манукяна 1,*

*юридический факультет ЕГУ.*

*Тел.: 55-77-92*

*e-mail: petutyun.irav@gmail.com*

7 усл. печ. л.

Тираж: 500

Сдано в набор 1.12.2010

Подписано к печати 27.12.2010

**ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**

**Քրեական իրավունք եւ ղսնվարոութոն**

**Սանվել Դիլբանդյան**

Անշնվարոութոնի գործերով ՊԱՇՏՊԱՆԻ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԶԻ ՄԱՍՆԱԿ-ՑՈՒԹՅՈՒՆԸ ՔՐԵԱԿԱՆ ՂԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆԸ .....4

**Գևորգ Բաղդասարյան**

«ՂԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՁԵՎ» ՀԱՍԿԱՑՈՒԹՅԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՔՐԵԱԿԱՆ ՂԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ .....14

**Արթուր Զախոյան**

ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀԱՏՈՒԿ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԿՐԻՄԻՆԱԼԻՍՏԻԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ.....21

**Տիգրան Ներսիսյան**

ԱՎԱԶՎԱԿՈՒԹՅԱՆ ՄԱՀՄԱՆԱԶԱՏՈՒՄԸ ՀԱՐԱԿԻՑ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ.....31

**Դավիթ Մելքունյան**

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՂԱՏՃԱՌՆԵՐՈՎ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐՈՒՄ ԱՌԱՋԱՑԱԾ ՀՐԴԵՀԻ ԴԵՊՔՈՒՄ ՀՐԴԵՀԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊՐԱԿՏԻԿԱՅԻՑ.....39

**Давид Тумасян**

СУБКУЛЬТУРА ОСУЖДЕННЫХ ЖЕНЩИН И ЕЕ ОСОБЕННОСТИ В РА .....44

**ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ ԵՎ ՂԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

**Սերգեյ Մեղոյան**

ԱՊԱՑՈՒՑԵԼՈՒՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՀԻՄՔԵՐԸ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՂԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ .....52

**Գոռ Մովսիսյան**

ՊԵՏԱԿԱՆ ԿՈՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԵՎ ՄԵԽԱՆԻՋՄԻ ՈՒՄՈՒՄԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ.....64

**Մանե Կարապետյան**

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՄԻԳՐԱՑԻԱՅԻ՝ ՈՐՊԵՍ ՄԻԳՐԱՑԻԱՅԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՏԵՍԱԿԻ ԱՌԱՆՁԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.....69

**Տիգրան Խաչիկյան**

ՁԵՌՔԵՐԵՐՄԱՆ ՎԱՂԵՄՈՒԹՅՈՒՆԸ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՒՄ.....76

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ**

**Գնել Մուղնեցյան**

ՂԱՏԱՐԱՆԻ՝ ՈՐՊԵՍ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿՈՂ ՍՈՒԲՅԵԿՏԻ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ ՀՀ ՎԱՐՉԱԿԱՆ ՂԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ.....86

**Հայկ Գրիգորյան**

ՀՀ ՆԱԽԱԳԱՀԻ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹԸ ՕՐԵՆՍԴԻՐ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ.....94

**ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ**

**Լևոն Գևորգյան**

ԱՐՑԱԽՅԱՆ ՀԱՎԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՄԻ ՇԱՐՔ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԻ ՇՈՒՐԶ.....102

**Նարինե Հայրիյան**

ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՅԱՑՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ-ԻՐԱՎԱԿԱՆ ՈՐՈՇ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐ.....116

**ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ ԵՎ**

**ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

**ԱՆՉԱՓԱՅԱՍՆԵՐԻ ԳՈՐԾԵՐՈՎ ՊԱՇՏՊԱՆԻ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆԸ**

**Սամվել ԴԻԼԲԱՆԴՅԱՆ**

*ԵՊՅ քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի վարիչ, իրավ. գիտ. թեկնածու, դոցենտ*

**Ք**րեական դատավարությունում անչափահասների իրավունքների ու օրինական շահերի պաշտպանության համակարգի կարևոր բաղադրատարր է որակյալ իրավաբանական օգնություն ստանալը: ՀՀ քր. դատ. օր.-ի 69-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Քրեական գործով վարույթին պաշտպանի մասնակցությունը պարտադիր է, երբ...5) հանցանքը կատարելու պահին կասկածյալը կամ մեղադրյալն անչափահաս է...»: Համանման դրույթ առկա է նաև այլ պետությունների օրենսդրությունում: Այսպես՝ ՌԴ քր. դատ. օր.-ի 51-րդ հոդվածի 1-ին մասում սահմանված է. «Պաշտպանի մասնակցությունը քրեական դատավարությանը պարտադիր է, եթե... 2) կասկածյալը, մեղադրյալը անչափահաս է»:

Հարկ է նշել, որ խորհրդային ժամանակաշրջանում ևս անչափահաս կասկածյալին, մեղադրյալին պարտադիր կարգով պաշտպան տրամադրելու հարցը որոշվում էր նույն կերպ, ինչպես հիմա: Այսպես՝ Հայկական ԽՍՀ քր. դատ. օր.-ի 45-րդ հոդվածի 1-ին մասում ասվում էր. «Պաշտպանի ներկայությունը գործի դատական քննության ժամանակ պարտադիր է... 3) անչափահասների հանցագործություններին առնչվող գործերում»: Ըստ այդմ՝ կարող ենք խոսել այդ հարցի կապակցությամբ քրեադատավարական օրենսդրության մեջ առկա իրավահաջորդության մասին: Հաշվի առնելով այն, որ այդպիսի իրավահա-

ջորդությունը լիովին համապատասխանում է ժողովրդավարական իդեալներին, այն պետք է ընդունելի համարել նաև Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության համար: Անչափահաս կասկածյալին, մեղադրյալին պարտադիր կերպով պաշտպան տրամադրելը երաշխավորում է նրա իրավունքների ու օրինական շահերի պաշտպանությունը: Դա երաշխավորում է նաև քննիչի և պաշտոնատար այլ անձանց կողմից անչափահասին բարձր որակավորմամբ պաշտպանի ծառայություններից հրաժարվելուն հարկադրելուց: Չէ՞ որ լիովին ակնհայտ է, որ հոգեպես դեռևս բավականաչափ չզարգացած անչափահասը թույլ է նաև կամքի ուժով, ինչը հնարավորություն է ստեղծում նրա վրա ազդեցություն գործելու, որից երբեմն կարող են օգտվել իրավապահական մարմինների անբարեխիղճ պաշտոնատար անձինք՝ ի վնաս անչափահասի իրավունքների և օրինական շահերի:

Պաշտպանի պարտադիր մասնակցությունը քրեական դատավարությանը կասկածյալների, մեղադրյալների իրավունքների և օրինական շահերի պաշտպանության կարևոր երաշխիք է քրեական դատավարությունում: Այս առումով նշյալ խնդրին նվիրվել են բազմաթիվ հրապարակումներ<sup>1</sup>: Ընդ որում՝ առանձնահատուկ ուշադրություն է դարձվել անչափահաս կասկածյալին, մեղադրյալին պարտադիր կերպով պաշտպան հատկացնելուն: Դա պայմանավորված է այն բանով, որ անչափահասները դասվում են այն անձանց խմբին, որոնք ավելի շատ կարիք ունեն որակյալ իրավաբանական օգնության, ինչպիսին պրոֆեսիոնալ փաստաբանի օգնությունն

---

է: Ընդ որում՝ նմանօրինակ օգնություն ցուցաբերելու հարցում կարևոր է այն պահը, երբ անչափահաս կասկածյալը, մեղադրյալը կարող են օգտվել դրանից: Այսպես՝ համաձայն ՀՀ քր. դատ. օր.-ի 69-րդ հոդվածի 2-րդ մասի՝ «Քրեական գործով վարույթին պաշտպանի մասնակցությունը պարտադիր է... 2) համապատասխանաբար՝ կասկածյալին ձեռքակալման մասին քրեական հետապնդման մարմնի որոշումը, ձեռքակալման արձանագրությունը կամ խափանման միջոց ընտրելու մասին որոշումը հայտարարելու կամ մեղադրանք առաջադրելու պահից՝ սույն հոդվածի առաջին մասի 2-րդ, 4-րդ, 5-րդ կետերով նախատեսված դեպքերում»: Համանման դրույթ կա նաև Ռուսաստանի քրեադատավարական օրենսդրությունում: Համաձայն ՌԴ քր. դատ. օր.-ի 48-րդ հոդվածի 3-րդ մասի՝ «պաշտպանը մասնակցում է քրեական գործին»:

1) անձին որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշում կայացնելու պահից սկսած՝ բացառությամբ սույն հոդվածի 2-5 կետերով նախատեսված դեպքերի:

2) կոնկրետ անձի նկատմամբ քրեական գործ հարուցելու պահից սկսած:

3) հանցագործություն կատարելու մեջ կասկածվող անձին փաստացի ձեռքակալելու պահից սկսած՝

ա) սույն Օրենսգրքի 91-րդ և 92-րդ հոդվածներով նախատեսված դեպքերում,

բ) նրա նկատմամբ սույն Օրենսգրքի 100-րդ հոդվածի համաձայն որպես խափանման միջոց կալանավորումը կիրառելու դեպքում:

3.1) սույն Օրենսգրքի 223.1-րդ հոդվածով սահմանված կարգով հանցագործության մեջ կասկածվելու մասին ծանուցում հանձնելու պահից սկսած:

4) հանցագործության մեջ կասկածվող անձին դատահոգեբուժական փորձաքննություն անցկացնելու որոշման մասին իրազեկելու պահից սկսած:

5) հանցագործության մեջ կասկածվող անձի իրավունքներին ու ազատություններին

րին առնչվող դատավարական հարկադրանքի այլ միջոցների կամ այլ դատավարական գործողությունների կիրառման պահից սկսած»:

Այս նորմերի համադրումը թույլ է տալիս նկատելու, որ, իհարկե, օրենքում ամրագրված այն նորմը, որտեղ ասվում է, որ պաշտպան տրամադրվում է քրեական գործ հարուցելու պահից, ավելի է համապատասխանում մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների պաշտպանության սկզբունքին: Ուստի, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում համանման նորմ ներառելը միանգամայն տեղին կլիներ: Մասնավորապես, ՀՀ քր. դատ. օր.-ում պետք է միանշանակորեն սահմանվի, որ անչափահասին պաշտպան է տրամադրվում նաև նրա նկատմամբ քրեական գործ հարուցելու պահից կամ նրա նկատմամբ քրեադատավարական հարկադրանք կիրառելու պահից:

Ի դեմս պրոֆեսիոնալ փաստաբանի՝ պաշտպանի մասնակցությունը անչափահաս կասկածյալների, մեղադրյալների իրավունքների և օրինական շահերի պաշտպանության կարևոր երաշխիք է: Դրան իրավաբանական գրականությունում առանձնահատուկ ուշադրություն են դարձրել<sup>2</sup>: Պաշտպանի պարտադիր մասնակցությունը քննության վաղ փուլերին կանխում է անչափահասի նկատմամբ իրավապահպան մարմինների պաշտոնատար անձանց կողմից կամայականության հնարավորությունը: Փաստաբանի օգնությունը անչափահասին հատկապես արժեքավոր է այն պատճառով, որ որակյալ է, ինչը թույլ է տալիս արդյունավետ դիմագրավել մեղադրանքի կողմին, որը մասնավորապես ներկայացնում է պրոֆեսիոնալ իրավաբան պետական մեղադրողը: Դրանով իսկ ստեղծվում են պայմաններ մրցակցային սկզբունքի գործողության համար, երբ կողմերն օրենքով օժտված են լինում իրենց դիրքորոշումները պաշտպանելու հավասար միջոցներով: Անչափահասների խոցելիությունը՝ պայմանավորված նրանց տա-

## **ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ ԵՎ**

### **ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

րիքով, պատճառ է դարձել, որ օրենսդիրն անհրաժեշտ համարի առավելագույնս ամրապնդելու նրանց դատավարական վիճակը: Դա հնարավոր է դարձել անչափահասներից պարտադիր կերպով պաշտպանփաստաբաններ տրամադրելու շնորհիվ: Այդպիսով հնարավոր է դարձել ոչ միայն չեզոքացնել անչափահասների անտեղի, բայց և հավանական հուզական բռնկումները, այլև պայմաններ ստեղծել իրավաբանորեն զրագետ պաշտպանություն կառուցելու համար:

Ս. Վ. Տետյուևը իրավացիորեն նշում է. «Պաշտպանի գործունեությունը կարևոր տեղ է գրավում անչափահասների պաշտպանության իրավունքի դատավարական երաշխիքների համակարգում, քանզի նրանց անձնային հոգեֆիզիկական առանձնահատկությունները հաճախ առաջ են բերում պասիվ դիրքորոշում դատավարության ընթացքում, անտարբեր վերաբերմունք սեփական շահերի պաշտպանության նկատմամբ, դրան հաճախ ավելանում են կեղծ ռոմանտիկան, չափահաս և անկախ երևալու ծգտումը, ինչը երբեմն ապակողմնորոշում է քննիչին և կարող է հանգեցնել դեռահասների օրինական շահերը ոտնահարող ոչ ճիշտ որոշումների»<sup>3</sup>:

Անչափահաս կասկածյալի, մեղադրյալի պաշտպանության առանձնահատկությունը քրեական դատավարության մինչդատական փուլերում այն է, որ նա իրավունք ունի իր իրավունքներն ու շահերը ներկայացնելու և օրինական ներկայացուցչի, և պաշտպանփաստաբանի միջոցով: Իրավացի է Ե. Վ. Գորբաչովան, երբ գրում է. «Ընդհանուր առմամբ անչափահասների գործով հանցագործությունների քննության ժամանակակից տարբերակը արտացոլում է «դասական» քննության համընդհանուր առանձնահատկությունը՝ ապահովելու անչափահաս մեղադրյալի պարտադիր պաշտպանությունը և կրկնակի ներկա-

յացվածությունը (պաշտպան և օրինական ներկայացուցիչ)»<sup>4</sup>: Քննության մասն տարբերակը, ինչպես երևում է, արդարացրել է իրեն որպես անչափահաս մեղադրյալի, կասկածյալի իրավունքների և օրինական շահերի երաշխիք: Այն կրկնակի երաշխիք է անչափահասի համար իր նկատմամբ իրավապահական մարմինների պաշտոնատար անձանց հնարավոր չարաշահումներից:

Անչափահաս մեղադրյալների, կասկածյալների իրավունքների և օրինական շահերի մամօրինակ «կրկնակի» երաշխիքի օգտակարությունն անվիճելի է: Սակայն իրականում ծագում են որոշ դժվարություններ առանձին դատավարական գործողությունների ժամանակ պաշտպանության ընդհանուր տակտիկան ընտրելիս: Չէ՞ որ անչափահասի և նրա օրինական ներկայացուցչի միջև կարող են ծագել որոշ տարածայնություններ այն հարցում, թե ինչ դիրքորոշում որդեգրել պաշտպանությունն իրականացնելիս: Այդ դեպքում փաստաբան-պաշտպանի համար ստեղծվում է դժվարին իրավիճակ. համաձայնե՞լ անչափահաս կասկածյալի, մեղադրյալի կամ նրա օրինական ներկայացուցչի կարծիքի հետ, թե՞ ընտրել և պաշտպանել սեփական տեսակետը, որը, նրա կարծիքով, ավելի գերադասելի է անչափահասի համար: Չէ՞ որ ՀՀ քր. դատ. օր.-ի 73-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «պաշտպանն իրավունք չունի կատարել պաշտպանյալի շահերին հակասող որևէ գործողություն», սակայն կարող է պատահել այնպես, որ ընտրված և պաշտպանին առաջարկված դիրքորոշումը գործի ի վնաս իր պաշտպանյալի: Այդ դեպքում նա կարող է արդյոք պաշտպանության ուրիշ տակտիկա ընտրել, որը տարբերվի այն մեկից, որ նրան առաջարկում է անչափահասի պաշտպանյալը կամ նրա օրինական ներկայացուցիչը: Կարծում ենք՝ այդ, փաստաբան-պաշտպանը կարող է այլ դիրքորոշում ունենալ, քան պաշտպանյալն ու նրա օրինական ներկայացուցիչը, եթե կարծում է, որ նրանց դիրքորոշումը սխալ է և տանում է իր պաշտ-

պանյալի վիճակի վատթարացման<sup>6</sup>: Սակայն նա պարտադիր պետք է ձեռնարկի բոլոր միջոցները, որպեսզի դրանում համոզի իր անչափահաս պաշտպանյալին և նրա օրինական ներկայացուցչին: Հայաստանի Հանրապետության քրեադատավարական իրավունքի վերոնշյալ նորմի ձևակերպումը նման հնարավորություն է տալիս փաստաբան-պաշտպանին: Ուստի իրավակիրառ պրակտիկան նորմատիվ հիմք ունի փաստաբանի կողմից անչափահաս պաշտպանյալի իրավունքների և օրինական շահերի արդյունավետ պաշտպանություն իրականացնելու համար:

Պաշտպանական տակտիկա ընտրելիս որոշակի ազատության առկայությունը չի բացառում, որ փաստաբան-պաշտպանը պետք է համաձայնեցնի իր դիրքորոշումը պաշտպանյալի՝ անչափահաս կասկածյալի, մեղադրյալի և նրա օրինական ներկայացուցչի դիրքորոշման հետ: Դա անհրաժեշտ է, որպեսզի պաշտպանությունը իրականացվի արդյունավետ, և դրա շնորհիվ հնարավոր լինի հասնել ցանկալի արդյունքի: Փաստաբանը պարտավոր է տեղեկացնել իր անչափահաս պաշտպանյալին և նրա օրինական ներկայացուցչին նրանց որդեգրած դիրքորոշման բոլոր հնարավոր բացասական հետևանքների մասին և միջոցներ ձեռնարկել, որպեսզի վերանայեն այդ դիրքորոշումը՝ փոխարինելով այն իրենց ավելի ձեռնտու դիրքորոշմամբ: Եթե դա նրան չի հաջողվում, նա իրավունք ունի իրավիճակից ելնելով կամ համաձայնել իր պաշտպանյալի դիրքորոշման հետ՝ ենթարկվելով նրա կամքին և համարելով դա նրա շահերին չհակասող, կամ առաջ տանել սեփական դիրքորոշումը, որը կհամապատասխանի անչափահաս կասկածյալի, մեղադրյալի շահերին՝ թեկուզև հակասելով սեփական շահերին:

Օրինական ներկայացուցչի կարգավիճակն ու նշանակությունը վաղուց արդեն իրավաբանների ուշադրության կենտրոնում են<sup>6</sup>: Ներկայումս անչափահաս օրինական ներկայացուցչի հիմնախնդիրները քրեա-

կան դատավարությունում չեն կորցրել իրենց հրատապությունը<sup>7</sup>: Կասկած չկա, որ օրինական ներկայացուցիչը քրեական դատավարության մասնակից է, որը երաշխավորում է անչափահասների իրավունքների ու օրինական շահերի պաշտպանությունը: Այդ երաշխիքը ապահովվում է շնորհիվ այն բանի, որ օրինական ներկայացուցիչը, անչափահասի մոտ առանձնահատուկ, վստահելի հարաբերություններ ձեռք բերելով, իմանալով նրա յուրահատկությունները, կարող է բավականին արդյունավետորեն նպաստել նրա իրավունքների ու ազատությունների իրացմանը: Ըստ այդմ, օրինական ներկայացուցչին պետք է դիտել անչափահասների իրավունքների ու օրինական շահերի պաշտպանության համակարգի կարևորագույն տարրերից մեկը քրեական դատավարությունում: Նրա շնորհիվ իրական է դառնում անչափահասների պաշտպանության հնարավորությունը քրեական դատավարությունում և ապահովվում է կողմերի հավասարության սկզբունքի գործողությունը:

ՌԴ գործող քր. դատ.օր.-ը օրինական ներկայացուցիչներ նախատեսում է միայն կասկածյալի և մեղադրյալի, այլև տուժողի և վկայի համար: Այսպես՝ ՌԴ քր. դատ.օր.-ի 48-րդ հոդվածում նախատեսված է. «Անչափահասների կողմից կատարված հանցագործություններին վերաբերող քրեական գործերում, քրեական գործին պարտադիր կերպով մասնակցելու համար ներգրավվում են նրանց օրինական ներկայացուցիչները սույն Օրենսգրքի 426-րդ և 428-րդ հոդվածներով սահմանված կարգով»: ՌԴ քր. դատ.օր.-ի 45-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Այն տուժողների, որոնք անչափահաս են կամ իրենց ֆիզիկական կամ հոգեկան վիճակի պատճառով զրկված են իրենց իրավունքներն ու օրինական շահերը ինքնուրույն պաշտպանելու հնարավորությունից, իրավունքներն ու օրինական շահերը պաշտպանելու նպատակով պարտադիր կարգով քրեական դատավարությունում ներգրավվում են նրանց

## **ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ ԵՎ**

### **ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

օրինական ներկայացուցիչները կամ ներկայացուցիչները»: Իսկ ՌԴ քր. դատ. օր.-ի 280 հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ «անհրաժեշտության դեպքում անչափահաս տուժողների և վկաների հարցաքննությանը մասնակցելու համար, ինչի մասին նշված է սույն հոդվածի առաջին մասում, կանչվում են նաև նրանց օրինական ներկայացուցիչները, որոնք նախագահողի թույլտվությամբ կարող են հարցեր տալ հարցաքննվողին»: Ընդ որում՝ վկայի օրինական ներկայացուցիչը ՌԴ քր. դատ. օր.-ի II բաժնում նշված չէ որպես քրեական դատավարության մասնակից: Թեպետ դա միանգամայն հստակ երևում է վերոնշյալ դրույթից:

Ինչպես տեսնում ենք, օրինական ներկայացուցիչները դիտվում են և՛ որպես քրեական դատավարության մասնակից պաշտպանության կողմից, և՛ որպես քրեական դատավարության մասնակից մեղադրողի կողմից, և՛ նույնիսկ՝ որպես մասնակիցների հատուկ խումբ, որը ներկայացնում է անչափահաս վկաների շահերը: Ընդ որում՝ Ռուսաստանի օրենսդիրը յուրաքանչյուր այդպիսի դեպքում սահմանում է նշյալ օրինական ներկայացուցիչների դատավարական վիճակը: Սակայն եթե համեմատենք նրանց դատավարական վիճակները, ապա կնկատենք, որ նրանք բոլորը օժտված են իրավունքների գրեթե նույն ծավալով, որոնք անհրաժեշտ են իրենց՝ անչափահասների շահերը պաշտպանելու համար, որոնց իրենք ներկայացնում են: Բացի այդ՝ նրանք նույն շրջանակի այն անձինք են, որոնք կարող են հանդես գալ որպես անչափահասների օրինական ներկայացուցիչներ:

Այսպես՝ ՀՀ քր. դատ. օր.-ի 76-րդ հոդվածի 1-ին մասում սահմանված է. «Տուժողի, քաղաքացիական հայցվորի, կասկածյալի, մեղադրյալի օրինական ներկայացուցիչներ են համարվում նրանց ծնողները,

որդեգորողները, խնամակալները կամ հոգաբարձուները, որոնք քրեական գործով վարույթի ընթացքում ներկայացնում են դատավարության համապատասխան անչափահաս կամ անգործունակ մասնակցի օրինական շահերը: Օրինական ներկայացուցիչ չունենալու դեպքում քրեական վարույթն իրականացնող մարմինը տուժողի, կասկածյալի կամ մեղադրյալի օրինական ներկայացուցիչ է նշանակում խնամակալության և հոգաբարձության մարմնին»:

Ակնհայտ է, որ այդպիսի միանման մոտեցումը պահանջների միասնական համակարգի համար պայմաններ, որոնք պետք է ներկայացվեն քրեական դատավարությանը մասնակցող անչափահասի օրինական ներկայացուցչի կարգավիճակին: Այսինքն՝ ստեղծվում են բարենպաստ պայմաններ քրեական դատավարությունում կողմերի հավասարության սկզբունքի կիրառման համար, որը չի ենթադրում կողմերից որևէ մեկի առավելություն:

Իրոք, չնայած անչափահաս կասկածյալների, մեղադրյալների՝ օրինական ներկայացուցիչների և անչափահաս տուժողների՝ օրինական ներկայացուցիչների, ինչպես նաև անչափահաս վկաների՝ օրինական ներկայացուցիչների միջև առկա բազում առանձնահատկություններին, նրանք բոլորը նման են: Դա միանման մոտեցման հիմքն է, որի համաձայն դիտարկվում է ընդհանրապես անչափահասի դատավարական վիճակը՝ անկախ այն բանից, թե ում է նա ներկայացնում՝ կասկածյալին, մեղադրյալին, տուժողին, վկային<sup>10</sup>: Օրինական ներկայացուցչի գլխավոր խնդիրը անչափահասի իրավունքները և օրինական շահերը ներկայացնելն է քրեական դատավարությունում: Այս խնդիրը դրված է օրինական ներկայացուցչի առջև անկախ այն բանից, թե ում է նա ներկայացնում՝ կասկածյալին թե մեղադրյալին, տուժողին, թե վկային: Այս խնդիրը լուծելու անհրաժեշտությունը ենթադրում է, որ բոլոր օրինական ներկայացուցիչները պետք է օժտվեն իրավունքների և պարտականությունների



համանման փաթեթով: Դա անհրաժեշտ է, որպեսզի պահպանվի կողմերի հավասարության սկզբունքը քրեական դատավարությունում: Նաև անչափահասների բոլոր օրինական ներկայացուցիչների համար ընդհանուր է այն անձանց շրջանակը, ովքեր կարող են հանդես գալ որպես այդպիսին: ՀՀ քր. դատ. օր.-ի 76-րդ հոդվածի 1-ին մասում թվարկված են, թե ովքեր կարող են հանդես գալ որպես անչափահասների օրինական ներկայացուցիչներ: Նշյալ դրույթում Հայաստանի Հանրապետության օրենսդիրը հաստատել է իր հավատարմությունը քրեական դատավարությունում օրինական ներկայացուցչի ընտրության միանման մոտեցմանը, որը պետք է համարել ՀՀ քր. դատ. օր.-ի անվիճելի առավելությունը:

Միանման մոտեցման հիման վրա սահմանվել է իրավունքների շրջանակը, որոնցով օժտվում է օրինական ներկայացուցիչը՝ անկախ այն բանից, թե ում է նա ներկայացնում՝ մեղադրյալին, կասկածյալին, տուժողին թե վկային: Դա չի բացառում օրինական ներկայացուցիչների միջև տարբերությունների առկայությունը քրեական դատավարությունում: Այս մասին է վկայում ՀՀ քր. դատ. օր.-ի 77-րդ հոդվածի 9-րդ մասը, որտեղ սահմանված է. «Տուժողի, քաղաքացիական հայցվորի, կասկածյալի, մեղադրյալի օրինական ներկայացուցիչն իր իրավունքներից օգտվում և իր վրա դրված պարտականությունները կատարում է անձամբ»: Այսինքն՝ մեղադրյալի օրինական ներկայացուցիչը օգտվում է իր կողմից ներկայացվող մեղադրյալի իրավունքներից, տուժողի օրինական ներկայացուցիչը համապատասխանաբար՝ տուժողի իրավունքներից: Հաշվի առնելով, որ բոլոր այդ մասնակիցներն ունեն տարբեր ծավալի իրավունքներ, ապա օրինական ներկայացուցիչները ևս, որոնք ներկայացնում են այդ մասնակիցներին, օգտվում են համապատասխան ծավալի իրավունքներից: Դրանով իսկ տվյալ օրինական ներկայացուցչի դատավարական վիճակը

կախված է այն բանից, թե քրեական դատավարության որ մասնակցի շահերն է նա ներկայացնում, և իրավունքների շրջանակից, որով օժտված է քրեական դատավարությունում ներկայացվող համապատասխան մասնակիցը: Օրինական ներկայացուցչի հիմնախնդրի լուծման նման մոտեցումը, որը տեղ է գտել Հայաստանի Հանրապետության քրեադատավարական օրենսգրքում, պետք է գնահատել հաջողված, որովհետև հաջողվել է օրենսդրորեն մոտենալ յուրեւյալ արդարադատության հիմնախնդրի լուծմանը: Չէ՞ որ ըստ էության դրվել են անչափահասների նկատմամբ արդարադատության իրականացման հարցերում միասնական մոտեցում ցուցաբերելու հիմքերը, այսինքն՝ կանոնակարգվել է քրեական դատավարության մասնակցի վիճակը, որը կարող է ներկայացնել քրեական դատավարությունում ներգրավված ցանկացած անչափահասի իրավունքներն ու շահերը: Բացի այդ, լուծվել է նորմատիվ միջոցների տնտեսման խնդիրը, այսինքն՝ նվազագույն քանակի նորմերով լուծվել է օրինական ներկայացուցչի խնդիրը, որը կարող է ներկայացնել կասկածյալի, մեղադրյալի, տուժողի իրավունքներն ու շահերը:

Առանձնահատուկ պետք մշել, որ Հայաստանի Հանրապետության քրեադատավարական օրենսդրությունում բավականին հաջող է լուծված նաև անչափահասներին քրեական դատավարությունում ներկայացնելու հետ առնչվող մեկ այլ խնդիր. անչափահաս վկաների իրավունքներն ու օրինական շահերը ներկայացնելու խնդիրը: Ի տարբերություն Հայաստանի Հանրապետության՝ Ռուսաստանի Դաշնության քրեադատավարական օրենսդրությունը այդ խնդիրը մինչև վերջ չի լուծել, թեպետ և ՌԴ քր. դատ. օր.-ում վկայի օրինական ներկայացուցչի մասին հիշատակում կա:

Այսպես՝ ՌԴ քր. դատ. օր.-ի 191-րդ հոդվածի 1-ին մասում նախատեսված է. «Անչափահաս տուժողի կամ վկայի հարցաքն-

## **Քրեական իրավունք եվ**

### **ԴԱՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ**

նության ժամանակ իրավունք ունի ներկա գտնվելու նրա օրինական ներկայացուցիչը»: Դրանից հետևում է, որ օրինական ներկայացուցիչ կարող է ունենալ ոչ միայն կասկածյալը, մեղադրյալը, տուժողը, այլև՝ վկան: Ընդ որում՝ ինչպես իրավացիորեն նշում է Ն. Ռ. Մուխոմտոֆիմովան՝ «անչափահաս վկայի օրինական ներկայացուցիչը իրականացնում է անչափահաս վկայի իրավունքներն ու օրինական շահերը ներկայացնելու գործառույթ»<sup>12</sup>: Սակայն անհրաժեշտ է նշել, որ օրենսդրորեն կարգավորված չէ անչափահաս վկայի օրինական ներկայացուցիչի իրավունքների շրջանակը, թեև միանգամայն հստակ է, որ այդ իրավունքները բխում են այն իրավունքներից, որոնցով օժտված է անչափահաս վկան, որին ներկայացնում է օրինական ներկայացուցիչը: Ցավոք, նման հետևություն կարելի է անել միայն օրինական ներկայացուցչին վերաբերող քրեադատավարական նորմերի վերլուծությունից. օրենքում անմիջական հղում չկա դրան:

ՀՀ քր. դատ. օր.-ում անչափահաս վկայի ներկայացուցչին նվիրված է մի ամբողջ հոդված, որտեղ մասնավորապես նախատեսված է. «14 տարին չլրացած վկայի օրինական ներկայացուցիչը, իսկ քրեական գործով վարույթն իրականացնող մարմնի թույլտվությամբ՝ նաև առավել բարձր տարիքի անչափահաս օրինական ներկայացուցիչն իրավունք ունի իմանալ ներկայացվող անձին քրեական վարույթն իրականացնող մարմին կանչելու մասին և մասնակցել քննչական կամ այլ դատավարական գործողությանը՝ ուղեկցելով նրան» (ՀՀ քր. դատ. օր.-ի հոդված 87):

Նույնիսկ թռուցիկ համեմատելով անչափահաս վկայի օրինական ներկայացուցչի մասին ՌԴ քրեադատավարական օրենսդրությունում և ՀՀ քրեադատավարական օրենսդրությունում տեղ գտած դրույթները, ակնհայտորեն տեսանելի են ՀՀ քր. դատ.

օր.-ում անչափահաս վկայի օրինական ներկայացուցչի մասին դրույթի առավելությունները: Դա շնորհիվ այն բանի, որ Հայաստանի Հանրապետության քրեադատավարական օրենսդրությունում առաջին հերթին ընդլայնված է դատավարական գործողությունների շրջանակը, որոնց կարող է մասնակցել անչափահաս վկայի օրինական ներկայացուցիչը: Այսպես՝ դրանք ոչ միայն քննչական, այլև այլ դատավարական գործողություններ են, որոնք «քննչական» հասկացության շրջանակներից դուրս են: Այսինքն՝ օրինական ներկայացուցիչը կարող է մասնակցել ոչ միայն անչափահաս վկայի հարցաքննությանը, ինչպես նախատեսված է Ռուսաստանի Դաշնության քրեադատավարական օրենսդրությամբ, այլև ցանկացած այլ տեսակի դատավարական գործողությունների, որոնք կարող են իրականացվել անչափահաս վկայի նկատմամբ:

Կարծում ենք՝ դա ճիշտ մոտեցում է, քանի որ անչափահաս վկայի իրավունքներն ու օրինական շահերը կարող են ունահարվել ոչ միայն հարցաքննության ընթացքում, այլև ցանկացած այլ դատավարական գործողության ժամանակ, օրինակ, հարկադրաբար բերման ենթարկելիս: Ավելին, ուշագրավ է այն, որ օրինական ներկայացուցիչը օժտված է անչափահաս վկային հրավիրելու մասին տեղեկացված լինելու իրավունքով, ինչը հնարավորություն է ընձեռում ժամանակին միջոցներ ձեռնարկելու իր կողմից ներկայացվող անձի իրավունքները ու օրինական շահերը ոտնձգություններից կանխելու համար:

Հարկ է նշել նաև, որ Հայաստանի Հանրապետության քրեադատավարական օրենսդրությունում բավականին մանրակրկիտ ու հստակ շարադրված են անչափահաս վկայի օրինական ներկայացուցչի իրավունքները: Այսպես՝ ՀՀ քր. դատ. օր.-ի 87-րդ հոդվածի 2-րդ մասում սահմանված է. «Մասնակցելով քննչական կամ այլ դատավարական գործողությանը՝ վկայի օրինական ներկայացուցիչն իրավունք ունի՝

1) հարուցել միջնորդություններ.

2) առարկել քրեական գործով վարույթն իրականացնող մարմինների գործողությունների դեմ և պահանջել իր առարկությունները մտցնել քննչական կամ այլ դատավարական գործողության արձանագրության մեջ.

3) առարկել դատական նիստը նախագահողի գործողությունների դեմ.

4) ծանոթանալ քննչական և այլ դատավարական գործողությունների արձանագրություններին, որոնց նա մասնակցել է մինչդատական վարույթի ընթացքում և դիտողություններ ներկայացնել արձանագրությունում գրառումների ճշտության և լրիվության կապակցությամբ, քննչական և այլ դատավարական գործողությանը մասնակցելու, դատարանի նիստին ներկա գտնվելու դեպքում պահանջել նշված գործողության կամ դատարանի նիստի արձա-

նագրության մեջ գրառումներ կատարել այն հանգամանքների մասին, որոնք, իր կարծիքով, պետք է նշվեն»:

Դրա շնորհիվ անչափահաս վկայի օրինական ներկայացուցիչը ձեռք է բերում իր կողմից ներկայացվող անձի իրավունքների ու շահերի պաշտպանության բավականին արդյունավետ միջոցներ: Օրինական ներկայացուցչի հստակորեն սահմանված կարգավիճակը հնարավորություն է տալիս նրան ավելի եռանդուն պաշտպանելու անչափահաս վկայի օրինական ներկայացուցչի իրավունքներն ու օրինական շահերը: Հայաստանի Հանրապետության քրեադատավարական օրենսդրությունում տեղ գտած այսպիսի մոտեցումը պետք է համարել առաջադիմական, որը առավելագույնս արտացոլում է ժողովրդավարական և մարդասիրական արժեքները:

<sup>1</sup> Տե՛ս **Мотовиловкер Я., Ширшов М.** Психический недостаток обвиняемого как условие обязательного участия защитника в уголовном судопроизводстве // Советская юстиция. М.: Юрид. лит., 1983, N 2, էջ 26; **Шимановский В.** Обязательное участие защитника на предварительном следствии // Социалистическая законность. М.: Известия, 1975, N 7, էջ 43-44; **Стецовский Ю.** Обязательное участие защитника в уголовном деле // Советская юстиция. М.: Юрид. лит., 1975, N 21, էջ 18-19; **Баранов А.М.** О моменте допуска и обязательном участии защитника в судебном производстве по УПК РФ // Законодательство и практика. Омск: Изд-во Ом. юрид. ин-та МВД России, 2002, N 1, էջ 16-17; **Кондрусов Э.В.** Защитник. Понятие, его процессуальное положение, допуск защитника к участию в деле, обязательное участие защитника // Российский судья. М.: Юрист, 2007, N 3, էջ 30-32 և ուրիշներ:

<sup>2</sup> Տե՛ս **Макаренко И.А.** Защитник как гарант соблюдения прав и законных интересов несовершеннолетнего обвиняемого // Закон и право. М.: ЮНИТИ-ДАНА, 2006, N 12, էջ 29-30; **Тетюев С.В.** К вопросу о защитнике несовершеннолетнего в уголовном судопроизводстве (анализ части 2 статьи 49 КПК

РФ) // Адвокатская практика. М.: Юрист, 2007, N 5, էջ 34-36; **Закирова М.Т.** Об обязательном участии защитника в судебном разбирательстве по делам несовершеннолетних // Актуальные проблемы международного ювенального права. Материалы Всероссийской научно-практической конференции, г. Волгоград, 15 марта 2006 г.. Волгоград: Изд-во ВолГУ, 2006, էջ 69-72; **Асташенков В.Г.** К вопросу участия адвоката на предварительном следствии по делам несовершеннолетних // Доклады итоговой научной конференции юридических факультетов (декабрь 1970 г.). Томск: Изд-во Том. ун-та, 1971, էջ 170-173 և ուրիշներ:

<sup>3</sup> **Тетюев С.В.** Защитник - обязательный участник производства по уголовным делам в отношении несовершеннолетних // Научные труды. Российская академия юридических наук. Выпуск 9. В 3 томах. Том 3. М.: Издательская группа «Юрист», 2009, էջ 1074:

<sup>4</sup> **Горбач\_ва Е.В.** Проблемы регулирования судопроизводства по делам несовершеннолетних в УПК РФ. // Материалы международной научно-практической конференции «Уголовно-процессуальный кодекс Российской Федерации: год правоприменения и преподавания». М., 2004, էջ 307:

## **ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ ԵՎ ԴԱՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ**

- <sup>5</sup> Տե՛ս **Подольный Н.А.** Всегда ли в интересах доверителя, чтобы адвокат действовал в соответствии с его волей? // Адвокатская практика. М.: Юрист, 2004, N 3, էջ 16-18:
- <sup>6</sup> Տե՛ս **Ландо А.С.** О процессуальном положении законного представителя несовершеннолетнего обвиняемого: Сборник работ аспирантов и соискателей // Ученые записки: Сборник работ аспирантов и соискателей. Саратов: Изд-во Сарат. юрид. ин-та, 1970, Вып. 19: Ч. 2, էջ 254-261; **Тепляков П.П.** Развитие законодательства о законном представителе несовершеннолетнего обвиняемого в русском и советском уголовном процессе // Государство, право и демократия в условиях развитого социалистического общества. Тезисы докладов 2-ой научно-теоретической конференции аспирантов (2-4 февраля 1973 г.). М.: Изд-во ВЮЗИ, Изд-во МГУ, 1973, էջ 244-246; **Иванов А., Ландо А.** Законный представитель несовершеннолетнего подозреваемого // Социалистическая законность. М., 1973, N 3. էջ 47; և ուրիշներ:
- <sup>7</sup> Տե՛ս **Дикарев И.** Свидетельский иммунитет законных представителей несовершеннолетних // Уголовное право. М.: АНО «Юридические программы», 2009, N 1, էջ 76-80; **Назарчук А.Г.** Роль и участие законных представителей несовершеннолетних подозреваемых (обвиняемых) в уголовном процессе // Общество и право. Краснодар: Изд-во Краснодар. ун-та МВД России, 2009, N 2 (24), էջ 201-205; **Васильева О.М.** Процессуальные проблемы допуска законных представителей несовершеннолетних подозреваемых и обвиняемых к участию в уголовном судопроизводстве // Совершенствование деятельности по раскрытию и расследованию преступлений, совершенных несовершеннолетними. Сборник научных статей по материалам научно-практической конференции, 20 июня 2007 г.. Ижевск: ИФ НА МВД России, 2008, էջ 17-26 և ուրիշներ:
- <sup>8</sup> Տե՛ս **Дикарев И.** Значение и проблемы участия законного представителя несовершеннолетнего подозреваемого, обвиняемого в уголовном судопроизводстве // Уголовное право. М.: АНО «Юридические программы», 2007, N 5, էջ 76-78; **Бычкова К.Г.** Некоторые вопросы участия законных представителей несовершеннолетних подозреваемого и обвиняемого по уголовным делам // Обеспечение законности в российском уголовном судопроизводстве. Материалы Международной научно-практической конференции (Саранск, 7-8 декабря 2006 г.). Саранск: Мордов. кн. изд-во, 2006, էջ 100-104; և ուրիշներ:
- <sup>9</sup> Տե՛ս **Дорофеева В.Ю.** Процессуально-тактические особенности деятельности профессионального представителя несовершеннолетнего потерпевшего в российском уголовном судопроизводстве. Автореф. дис. ... канд. юрид. наук - Воронеж, 2009, էջ 14:
- <sup>10</sup> Տե՛ս **Оплетаев В.С.** Некоторые вопросы о законных представителях несовершеннолетних свидетелей // Проблемы права. Международный правовой журнал. Челябинск, 2007, N 1, էջ 171-173; **Мухудинова Н.Р.** Адвокат свидетеля, законный представитель несовершеннолетнего свидетеля в российском уголовном судопроизводстве // Научные труды РАЮН. В 3-х томах. М.: Юрист, 2009, Вып. 9, Т. 3, էջ 990-992:
- <sup>11</sup> Տե՛ս **Габдрахманов Ф.В.** Законный представитель несовершеннолетнего лица в уголовном судопроизводстве // Уголовный процесс. М.: Изд. Дом «Арбитражная практика», 2007, N 10, էջ 42-44; **Белокопытов А.К.** О возможности участия законных представителей несовершеннолетних на стадии возбуждения уголовного дела // Современные проблемы правотворчества и правоприменения. Сборник научных трудов. М., Иркутск: ГОУ ВПО РПА Минюста России, 2007, Вып. 4, էջ 139-142; և ուրիշներ:
- <sup>12</sup> Տե՛ս **Мухудинова Н.Р.** Адвокат свидетеля, законный представитель несовершеннолетнего свидетеля в Российском уголовном судопроизводстве. // Научные труды. Российская академия юридических наук. Вып. 9. В 3 т. Т. 3. М., 2009, էջ 991:

## PARTICIPATION OF DEFENDER AND LEGAL REPRESENTATIVE IN CRIMINAL PROCEDURE ON MINORS' CASES

**Samvel DILBANDYAN**

*Yerevan State University,  
Head of Chair of Criminal  
Procedure and Criminalistics  
Candidate of juridical sciences,  
Assistant Professor*

---

The article is dedicated to the defender's and the legal representative's participation in minors related cases during pretrial investigation.

Minors' vulnerability being argued by their age has become a reason for legislator to strengthen their procedural status to the great extent. Mandatory provision of defender-advocates to minors made it come true. Thus, there have been provided oppor-

tunity to not only liquidate unnecessary, yet probable bursts of minors, but also generate conditions for literate defense. .

Legal representative is also a participant of criminal procedure that guarantees the defense of minors' rights and legal interests. This guarantee is ensured due to the fact that the legal representative has unique and trustworthy relations with minor and can contribute to the realization of his/her rights and freedoms rather effectively. Therefore, legal representativeness shall be considered one of the elements of minors' rights and legal interests system in criminal procedure. It is the legal representative who makes the defense of minors real in criminal procedure and ensures equality of parties.

**ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ ԵՎ**

**ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

**«ԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ԶԵՎ» ԴԱՏԱԿՑՈՒԹՅԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

**Փևոթգ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ**

*ՀՀ Վերաքննիչ քրեական դատարանի նախագահի խորհրդական, ԵՊՀ քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի հայցորդ*

Դատավարական ձևը քրեական դատավարության հիմնարար հասկացություններից մեկն է: Այն պայմանավորված է քրեական դատավարության էությանը և սկզբունքներով: Դատավարական ձևը պետական գործունեության ձևերի առանձնահատուկ տեսակներից մեկն է:

Իրավաբանական գրականության խորը ուսումնասիրությունը բացահայտում է, որ ներկայումս քրեական դատավարության գիտությունն ակնհայտ հետաքրքրություն է ցուցաբերում հիմնարար տեսական խնդիրների նկատմամբ, որոնց շարքում իր կարևորությամբ առանձնանում է քրեադատավարական ձևի էության, նշանակության, զարգացման միտումների և հեռանկարների հիմնահարցը:

Դատավարական ձև հասկացության բովանդակության բացահայտումն ունի կարևոր տեսական և գործնական նշանակություն: Բանն այն է, որ դատաիրավական բարեփոխումների կարևորագույն խնդիրներից մեկի՝ արդյունավետ արդարադատության ձևավորման ապահովումն իրականացվում է նաև քրեադատավարական ձևի տարբերակման միջոցով: Իսկ այդ ուղղությամբ իրավաստեղծ գործընթացը, բնականաբար, պետք է հիմնված լինի նաև դատավարական ձևի, այնուհետև նաև դրա ռացիոնալացման հնարավորությունների ու թույլատրելի սահմանների խորը տեսական վերլուծության վրա:

Հարկ է նկատել, որ դատավարական ձևի հիմնահարցը իրավաբանական գրա-

կանության մեջ տեսական վեճերի առարկա է արդեն շուրջ չորս տասնամյակ: Թերևս ուշադրության է արժանի նախևառաջ այն, որ, չնայած այդ կատեգորիայի նկատմամբ նման ակտիվ գիտական հետաքրքրություններին, մինչ օրս իրավաբանական գրականության մեջ դժվար է գտնել դատավարական ձև հասկացության՝ միասնական հավանություն գտած բնորոշում:

Դատավարական ձևին նվիրված գիտական աշխատությունների բազմազանության ուսումնասիրությունը թույլ է տալիս առանձնացնել դատավարական ձև հասկացության վերաբերյալ երեք՝ միմյանցից էապես տարբերվող մոտեցումներ:

Առաջին մոտեցման կողմնակիցները դատավարական ձև հասկացության բովանդակությունը բացահայտում են «կանոններ» եզրույթի միջոցով:

Այսպես, Ա. Լ. Ռիվլինը դատավարական ձևը բնորոշում է որպես քրեական գործերի քննության կանոնների ամբողջություն<sup>1</sup>:

Որոշ հեղինակներ էլ գտնում են, որ դատավարական ձև ասելով հասկանում ենք «օրենքով սահմանված կանոններ, որոնք սահմանում են նախնական քննության մարմինների, դատախազության և դատարանի գործունեության կարգը և պայմանները, քրեադատավարական հարաբերություններին մասնակցող անձանց (մեղադրյալ, տուժող, վկա և այլն) գործողությունները՝ քրեական դատավարության խնդիրների իրականացման նպատակով»<sup>2</sup>:

Պրոֆեսոր Մ. Ս. Ստրոգովիչը գրում է, որ «դատավարական ձևը նախնական քննության մարմինների, դատախազության և դատարանի կողմից քրեական գործի քննության և լուծման հետ կապված իրենց գործառույթների իրականացմանը, ինչպես նաև քրեական դատավարությանը մաս-

նակցող անձանց կողմից իրենց իրավունքների իրականացմանը և պարտականությունների կատարմանն ուղղված գործողությունների իրականացման նպատակով քրեադատավարական օրենքով սահմանված պայմանների ամբողջություն է»<sup>3</sup>: Ընդ որում՝ այստեղ «պայմաններ» եզրույթն ընկալվում է որպես գործողությունների կատարման կանոններ և իրադրություն, որում կատարվում են այդ գործողությունները, կայացվում են գործով որոշումներ, առաջանում և իրացվում են քրեադատավարական իրավահարաբերություններ ինչպես վարույթն իրականացնող մարմինների, այնպես էլ դատավարությանը մասնակցող անձանց միջև:

Այս մոտեցման հիմնական թերությունն այն է, որ, ինչպես նշվում է գրականության մեջ, դրանում նույնացվում են դատավարական ձևը և քրեական դատավարության իրավունքը: Բանն այն է, որ քրեական դատավարության իրավունքը նորմերի, իրավական կանոնների ամբողջություն է, որոնք սահմանում են քրեական գործով վարույթի կարգը: Այսինքն՝ այս դեպքում մենք հանգում ենք «քրեադատավարական ձև» և «քրեական դատավարության իրավունք» հասկացությունների նույնացման:

Հաջորդ մոտեցման կողմնակիցները դատավարական ձև հասկացությունը բնորոշում են որպես միայն ընթացակարգ:

Նրանք մասնավորապես կարծում են, որ «եթե քրեական դատավարությունն իրենից ներկայացնում է իրավունքով կանոնակարգվող գործունեության կարգ, ապա այդ գործունեության ձևերը և հենց ինքը ընթացակարգն էլ ձևավորում են դատավարական ձևը: Գործողությունների կատարման պայմանները, գործունեության իրականացման սկզբունքներն առավել ևս պայմանավորում են դատավարական ձևը, բայց դրա մեջ չեն մտնում»<sup>4</sup>:

Այս մոտեցումն էլ քննադատության է արժանանում այն պատճառով, որ այնտեղ ակնհայտորեն առանձնացվում են ձևը և բովանդակությունը, որոնք գտնվում են դիալեկտիկական կապի մեջ՝ դրանով իսկ

դատավարական ձևը բնորոշելով որպես առարկայազուրկ, բովանդակությունից զուրկ մի կատեգորիա: Գրականության մեջ նշվում է, որ վերոնշյալ բնորոշման մեջ դատավարական ձևը դիտվում է որպես միայն քրեադատավարական գործունեության արտաքին արտահայտություն, ինչն էապես նեղացնում է դիտարկվող իրավական կատեգորիայի բովանդակային կողմը և շեշտը դնում է նրա ընթացակարգային բաղադրիչի վրա<sup>5</sup>:

Դատավարական ձևի՝ որպես դատավարական գործողությունների իրականացման ընթացակարգի մեկնաբանությանը հակադրվում է երրորդ՝ թերևս ամենատարածված մոտեցումը, որի շրջանակներում դատավարական ձև հասկացությունը մեկնաբանվում է «կարգ» եզրույթի միջոցով:

Այսպես, Պ.Ֆ. Պաշկևիչը դատավարական ձևը բնորոշում է որպես յուրաքանչյուր առանձին դատավարական գործողության իրականացման կարգ և պայմաններ, ինչպես նաև գործով ամբողջ վարույթի իրականացման կարգ և պայմաններ, այսինքն՝ դատավարության բոլոր ձևերի ամբողջություն<sup>6</sup>:

Մ. Ա. Չելցովը դատավարական ձև է անվանում «առանձին դատավարական գործողությունների (կամ դրանց ամբողջության) կատարման օրենքով սահմանված կարգը»<sup>7</sup>:

Ռ. Դ. Ռախունովի կարծիքով դատավարական ձևը քրեադատավարական գործունեության իրականացման՝ օրենքով հստակ սահմանված կարգ է<sup>8</sup>:

Վ. Ն. Շպիլերը դատավարական ձևի՝ որպես դատավարական ընթացակարգի համար առավել ընդունելի է համարում այն բնորոշումը, որն ընդգրկում է ոչ միայն դատավարական գործողությունների կատարման համար օրենքով սահմանված պայմանները, այլ նաև դատավարական գործողությունների կատարման հեթախանությունը, դրանց դատավարական ձևակերպման կարգը, դատավարական ժամկետները<sup>9</sup>:

Ի. Լ. Պետրովիչինը կարծում է, որ քրեա-

## **ՔՐԵԱԿԱՆԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ ԵՎ**

### **ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

դատավարական ձևը քրեական գործերի քննության սահմանված կարգ և ընդհանուր ու առավել էական պայմանների ամբողջություն է, որին պետք է համապատասխանի դատավարության նպատակների իրականացումն ապահովող քրեադատավարական գործունեությունը<sup>10</sup>:

«Օրենքով հստակ և մանրամասն սահմանված՝ դատավարական գործողությունների իրականացման պայմանները, դրանց հերթականությունը և դատավարական ձևակերպման կարգը, հետևաբար նաև համապատասխան իրավահարաբերությունների առաջացման, փոփոխման և դադարման պայմանները կոչվում են դատավարական ձև»<sup>11</sup>-կարծում է Է.Ֆ.Կուցովան:

Ն. Ա. Գրոմովը դատավարական ձևը բնորոշում է որպես դատավարական գործողությունների կամ դրանց ամբողջության կատարման, ընթացքի և արդյունքների ձևակերպման օրենքով սահմանված կարգ<sup>12</sup>:

Դ. Կ. Կանաֆինը քրեադատավարական ձևը բնորոշում է որպես դատավարական գործունեության իրականացման՝ օրենքով սահմանված իրադրություն, որը մանրամասնորեն կարգավորում է վարույթում իրենց իրավունքներն իրականացնող և օրենքով իրենց վրա դրված պարտականությունները կատարող, այսինքն՝ քրեադատավարական իրավահարաբերություններին մասնակցող սուբյեկտների կողմից դատավարական գործողությունների իրականացման ընթացակարգը, հաջորդականությունը, պայմանները և այդ գործողությունների կատարման ընթացք, դրա ընթացքում ընդունվող որոշումները և դրանց արդյունքների դատավարական ձևակերպման միջոցները<sup>13</sup>:

Քրեադատավարական ձևը բնորոշվում է նաև որպես քրեական դատավարության որոշակի փուլում դատավարական գործունեության իրականացման՝ օրենքի պահանջներին համապատասխանող եղա-

նակ, քրեական հետապնդում իրականացնող մարմինների դատավարական գործողությունների և որոշումների որոշակի հերթականություն, որն ուղղված է հանցագործության դեպքի ու հանգամանքների ապացուցմանը և ավարտվում է գործը դատարան ուղարկելու կամ այն կարճելու մասին դատավարական որոշում ընդունելով կամ դատավճիռ կայացնելով՝ պահպանելով դատավարության մասնակիցների օրինական շահերը և իրավունքները<sup>14</sup>:

Նկատենք, որ այս բնորոշման շրջանակներում դատավարական ձև հասկացությունը կապվում է քրեական դատավարության որոշակի փուլի հետ:

Դատավարական ձև հասկացության ամենալայն մեկնաբանությունը տալիս է Յու. Ա. Իվանովը՝ սահմանելով, որ դատավարական ձևը քրեադատավարական ինստիտուտների և կանոնների՝ քրեադատավարական օրենքով սահմանված կառուցվածքը և համակարգն է, քրեական դատավարության փուլերի հաջորդականությունը և ընթացակարգը, նախնական և դատական քննության փուլերում ապացույցներ հավաքելու և հետազոտելու, իրավական ակտերում դրանք ամրագրելու հետ ուղղակիորեն կամ անուղղակիորեն կապված դատավարական գործողությունների կատարման պայմանները, եղանակներն ու ժամկետները, ինչպես նաև առանձին հարցերով կամ ամբողջ գործով որոշումներ ընդունելու և ձևակերպելու կարգը<sup>15</sup>:

«Դատավարական ձևը դատավարության սուբյեկտների կողմից իրականացվող գործունեության ընթացքում առաջացող իրավահարաբերությունների ամբողջություն է»,-կարծում է Խ.Ու. Ռուստամովը<sup>16</sup>:

Ա.Ս.Տուկիևը քրեադատավարական ձևը բնութագրում է որպես քրեադատավարական գործունեության և դրա արդյունքում առաջացող իրավահարաբերությունների օրենքով սահմանված իրավական ռեժիմ, որտեղ «օրենքով սահմանված իրավական ռեժիմ» հասկացության տակ ի նկատի է ունենում օրենսդրորեն ամրագրված պայմանները, կարգերը (ընթացակարգ) և հա-



ջորդականությունը:

Տ.Գ. Դուդորովը կարծիք է հայտնում, որ քրեադատավարական ձը քրեադատավարական հարաբերությունների իրավական կարգավորման մեխանիզմի տարր է, որը բնորոշում է քրեական դատավարության համակարգի ներքին կառուցվածքը, ինչպես նաև դատավարության մասնակիցների գործունեության կազմակերպումը: Հեղինակի կարծիքով, քրեադատավարական ձևի բովանդակությունը կազմում են երեք տարրեր՝ քրեադատավարական ռեժիմ, դատավարական ընթացակարգ, դատավարական փուլեր: Իսկ քրեադատավարական ռեժիմը ներառում է քրեադատավարական գործունեության խնդիրները, մրցակցությունը, դատավարական երաշխիքները<sup>17</sup>:

Ի.Ա. Պիկալովը գրում է, որ «քրեական դատավարության իրավունքը սահմանում է վարույթի իրականացման կարգը՝ վարույթի փուլերի հերթականությունը և գործի՝ մի փուլից մյուսին անցնելու պայմանները, կոնկրետ փուլում վարույթը բնորոշող պայմանները, քննչական և դատական գործողությունների իրականացման հիմքերը, պայմանները և կարգը, ընդունվող որոշումների բովանդակությունը և կարգը: Գործով ամբողջ վարույթի կամ առանձին դատավարական գործողությունների իրականացման այդ կարգն ընդունված է անվանել դատավարական ձև: Նրա կարծիքով, դատավարական գործողությունների կատարման ձևի (կարգի) մեջ մտնում են գործողության նպատակը, գործողության մասնակիցները, նրանց իրավունքներն ու պարտականությունները, գործողությունների հերթականությունը, համապատասխան դատավարական փաստաթղթում դրա ձևակերպումը»<sup>18</sup>:

Գրականության մեջ նշվում է նաև, որ քրեական դատավարությունը, որն ընկալվում է որպես ձև, զրկված չէ սեփական բովանդակությունից, որը բաղկացած է երեք տարրերից՝ քրեական դատավարության իրավունքի նորմերով սահմանված իրավական ընթացակարգ, պայմաններ և երաշխիքներ, որոնք էլ կազմում են դատավարական

ձև հասկացության բովանդակությունը: Ընթացակարգը այս կամ այն դատավարական գործողությունների կատարման հերթականությունը և հաջորդականությունն է: Դատավարական պայմանները նորմատիվ հանձնարարականներ են, որոնք 1. սահմանում են դատավարական գործողությունների իրականացման հիմքերը, 2. վարույթն իրականացնող մարմնին պարտավորեցնում են օրենքով նախատեսված դեպքերում ստանալ դատավարական գործողություն կատարելու թույլտվություն, 3. նախատեսում են դատավարական գործողությունների կատարման տարբեր արգելքներ և սահմանափակումներ, 4. սահմանում են դատավարական գործողության մասնակիցների շրջանակը և նրանց իրավական վիճակը, 5. օրենքով նախատեսված դեպքերում որոշում են դատավարական գործողության կատարման տեղը, ժամանակը կամ ժամկետները: Դատավարական երաշխիքներն իրավական միջոցներ են, որոնք ապահովում են դատավարության մասնակիցների իրավունքների և օրինական շահերի իրացումը և նրանց պարտականությունների կատարումը<sup>19</sup>:

Կարելի է նկատել, որ քննարկվող մոտեցման շրջանակներում դատավարական ձևին տրվող բնորոշումները միմյանցից տարբերվում են միայն իրենց ընդգրկվածության աստիճանով: Այսինքն՝ տարբեր հեղինակներ «կարգ» եզրույթը մեկնաբանում են տարբեր ծավալներով, դրա բովանդակության մեջ ներառում են տարբեր տարրեր: Այսպես, որոշ հեղինակներ ընդհանրապես չեն մեկնաբանում նշված հասկացությունը, ոմանք դրա մեջ մտցնում են դատավարական գործողությունների կատարման պայմանները, դրանց հերթականությունը, ժամկետները, ձևակերպման կարգը, ոմանք՝ նաև քրեական դատավարության սկզբունքները: Ինչպես տեսանք, առանձին հեղինակներ էլ դատավարական ձևը բնորոշում են որպես դատավարական գործողությունների կատարման ռեժիմ, իրադրություն, քրեադատավարական իրավահարաբերությունների ամբողջություն կամ դրա բո-

## **Քրեական Իրավունք Եվ**

### **ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

վանդակության մեջ տեղավորում են քրեադատավարական իրավահարաբերությունների առաջացման պայմանները:

Այս մոտեցման շրջանակներում միանշանակ չի ընդունվում քրեական դատավարության սկզբունքները քրեադատավարական ձև հասկացության մեջ ներառելը: Այսպես, Ե.Ն. Պետուխովը գտնում է, որ դատավարական ձևն իրոք կարելի է դիտարկել որպես «քրեական դատավարության փուլերի հաջորդականություն և ընթացակարգ, դատավարական գործողությունների կատարման պայմաններ, միջոցներ, ժամկետներ և այլն», սակայն ընդունելի չի կարելի համարել այդ կատեգորիայի մեջ քրեադատավարական ինստիտուտների և կանոնների, առավել ևս՝ սկզբունքների համակարգը և կառուցվածքը ներառելը<sup>20</sup>:

Մեր կածիքով, այս մոտեցման շրջանակներում տրվող «դատավարական ձև» հասկացության բնորոշումը բավականին մոտենում է «քրեական դատավարություն» հասկացությանը:

Այսպես, քրեական դատավարությունն ընդունված է բնորոշել որպես հետաքննության մարմինների, քննիչի, դատախազի, դատարանի, ինչպես նաև դատավարության այլ սուբյեկտների քրեադատավարական իրավունքի կողմից կարգավորվող քրեական գործի քննության և լուծման կապակցությամբ իրականացվող գործողությունների ու այդ ընթացքում ծագող իրավահարաբերությունների համակարգ<sup>21</sup>:

Եվ եթե քրեադատավարական ձև հասկացության մեջ առնվում են դատավարական գործողությունների կատարման պայմանները, կարգը, ժամկետները, դրանց կատարման հերթականությունը, դատավարական ձևակերպման կարգը և առանձին դեպքերում համապատասխան իրավահարաբերությունների առաջացման, փոփոխման և դադարման պայմանները, և նույնիսկ դատավարական ձևը բնորոշվում է որպես դատավարության սուբյեկտների

կողմից իրականացվող գործունեության ընթացքում առաջացող իրավահարաբերությունների ամբողջություն, ապա մենք ակնհայտորեն հանգում ենք «քրեական դատավարություն» և «քրեական դատավարության ձև» հասկացությունների նույնացման:

Մենք լիովին ընդունում ենք, որ հնարավոր չէ քրեադատավարական ձևը բնորոշել այնպես, որ այն ամբողջովին անկախ լինի քրեական դատավարությունից: Դա պայմանավորված է ձևի և բովանդակության այն հարաբերակցությամբ, որ ունեն քրեական դատավարությունը և դրա ձևը: Ինչպես նշվում է գրականության մեջ, «ձևն ու բովանդակությունն անխզելի են»<sup>22</sup>:

Բայցևայնպես, քրեական դատավարության ձևն առանձին կատեգորիա է, որն արտահայտում է քրեական դատավարության արտաքին կողմը՝ զուրկ չլինելով սեփական բովանդակությունից:

Սրանից բացի, քննարկվող մոտեցման շրջանակներում նույնացվում են «դատավարական ձև» և «դատավարական կարգ» եզրույթները: Թեև «ձև» և «կարգ» եզրույթներն ունեն նույն լեզվական նշանակությունը, դրանք երկուսն էլ արտահայտում են ինչ-որ բանի կերպ, եղանակ, բայց երբ խոսում ենք դատավարական ձևի մասին, ի նկատի ունենք կարևորագույն դատավարական կատեգորիա, որն իմաստավորում է ավելին, քան ինչ-որ բանի կարգը: Ի տարբերություն դատավարական կարգի՝ դատավարական ձևը չի կարելի վերագրել առանձին դատավարական գործողություններին: Դատավարական ձևը ցույց է տալիս վարույթի առավել ընդգրկուն միավորի՝ քրեական դատավարության փուլի շրջանակներում դատավարական գործունեության իրականացման կարգը: Պատահական չէ, որ երբ խոսում ենք տարբերակված դատավարական ձևի մասին, հասկանում ենք կոնկրետ փուլում դատավարական գործողությունների ամբողջության իրականացման առանձնահատուկ եղանակ, բայց ոչ երբեք՝ կոնկրետ դատավարական գործողության կատարման առանձնահատուկ

կարգ: Այլ կերպ ասած՝ «դատավարական կարգ» եզրույթ ասելով պետք է հասկանալ կոնկրետ դատավարական գործողության իրականացման՝ քրեական դատավարության՝ օրենսգրքով սահմանված եղանակը, իսկ «քրեադատավարական ձև» կատեգորիա ասելով՝ քրեական դատավարության որոշակի փուլում դատավարական գործունեության, այսինքն՝ դատավարական գործողությունների ամբողջության իրակա-

նացման եղանակը: Այս իմաստով դատավարական ձևը դատավարական կարգերի ամբողջություն է:

Այսպիսով, քրեադատավարական ձևը քրեական դատավարության կոնկրետ փուլում կամ ամբողջ վարույթի ընթացքում քրեադատավարական գործունեություն իրականացնելու՝ օրենքով սահմանված եղանակն է:

- <sup>1</sup> Տե՛ս Ривлин А. Л. Организация суда и прокуратуры в СССР. Харьков, 1968, էջ 36.
- <sup>2</sup> Տե՛ս Советский уголовный процесс/ под редакцией Д. С. Карева. М., 1975, էջ 14:
- <sup>3</sup> Տե՛ս Строгович М. С. Курс советского уголовного процесса. М., 1968. Том 1, էջ 51:
- <sup>4</sup> Н.С. Алексеев, В.Г. Даев, Л.Д. Кокорев. Очерк развития науки советского уголовного процесса. Воронеж.1980.
- <sup>5</sup> Տե՛ս Т.Д. Дудоров. Доктринальное толкование категории «Уголовно-процессуальная форма» и ее роль в механизме правового регулирования уголовно-процессуальных отношений. Вестник ВГУ. Серия право. 2009г/1, էջ 394-395:
- <sup>6</sup> Տե՛ս Словарь основных уголовно-процессуальных понятий и терминов. А. М Баранов, П.Г. Марфицин. <http://lawtech.agava.ru/pub/buppdic/g0000230.htm-8k>:
- <sup>7</sup> Чельцов М.А. Советский уголовный процесс. Москва. 1951, էջ 33:
- <sup>8</sup> Տե՛ս Рахунов Р.Д. Участники уголовно-процессуальной деятельности по советскому праву.-М. Юрид. лит., 1961, էջ 71:
- <sup>9</sup> Տե՛ս Шпилев В.Н. Содержание и формы уголовного судопроизводства. Минск. 1974, էջ102-103:
- <sup>10</sup> Տե՛ս Петрухин И.Л. Уголовный процесс, учебник. Под ред И.Л.Петрухина. М., 2001, էջ 7:
- <sup>11</sup> Куцова Э.Ф. Гарантий прав личности в уголовном процессе. М., 1973, էջ 127:
- <sup>12</sup> Տե՛ս Громов.Н.А. Уголовный процесс Российской.Учебное пособие. М., Юрист. 1998:
- <sup>13</sup> Տե՛ս Канафин Д.К. Понятие и дифференциация процессуальной формы уголовного судопроизводства. Алматы, 1998, էջ 5-6:
- <sup>14</sup> Տե՛ս «Հայաստանի Հանրապետության քրեա-

կան դատավարություն. ընդհանուր մաս» Երևանի պետ. համալս., 2006, էջ 31:

- <sup>15</sup> Տե՛ս Курс советского уголовного процесса: общая часть/ под ред А.Д. Бойкова и И.И.-Карпеца. М., 1989, էջ 121:
- <sup>16</sup> Տե՛ս Рустамов Х. У. Дифференциация форм уголовного процесса (Соврем. Тенденций и проблемы совершенствования): Дисс.... Д-ра юрид. наук.: М., РГБ ОД. 1997, էջ 339:
- <sup>17</sup> Տե՛ս Т.Д. Дудоров. Доктринальное толкование категории <<Уголовно-процессуальная форма>> и ее роль в механизме правового регулирования уголовно-процессуальных отношений. Вестник ВГУ.Серия право. 2009/1, էջ 394-395:
- <sup>18</sup> Пикалов И.А. Уголовный процесс Российской Федерации(краткий курс): Учебное пособие, 2005. //http://www.allpravo.ru/library/doc/1897p0/instrum4772/item4784.html-36k.
- <sup>19</sup> Տե՛ս Смирнов А.В., Калиновский К.Б. Уголовный процесс: Учебник для вузов/ 2-ое изд. Под общ. ред. А.В. Смирнова.- СПб.: Питер, 2005:
- <sup>20</sup> Տե՛ս Петухов. Е.Н. Досудебное производство по уголовным делам, связанным с преступлениями в финансово-кредитной сфере. Монография.- Барнаульский юридический институт МВД России, 2003, էջ 105:
- <sup>21</sup> Տե՛ս «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարություն. ընդհանուր մաս»: Երևանի պետ. համալս., 2006, էջ 13.
- <sup>22</sup> Ա. Ա. Դիրբանդյան, Քրեական դատավարության ձևը որպես արդարադատության իրականացման երաշխիք// Օրենք և Իրականություն. 1(171), 2010, էջեր 5-8:

**ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ ԵՎ****ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ****THE THEORETICAL ISSUES ON THE PURPORT OF THE  
CONCEPT - “PROCESS FORM” IN CRIMINAL PROCESS****Gevorg BAGHDASARYAN**

*Adviser to the Chairman of the Criminal appellate Court of the RA, Post-graduate student of the Department of the Criminal procedure and criminalistics of YSU*

The Author has referred to the content of the notion - “criminal procedural form”. Especially the inadmissibility of identification of the concepts – “criminal procedure” and “criminal procedural law” with the “criminal procedural form”.

The Author differs also the concepts –

“procedural form” and “procedural order”.

On the basis of the analyze of various scientific approaches the Author offers his own definition on “criminal procedural form”. The author suggests the following definition of “criminal procedural form”: Procedural form is the way to implement criminal procedural activity in a concretestage of the procedure during the whole process.

Key words: criminal process form, procedural order, procedural act, provision, legal relations.

# ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀԱՏՈՒԿ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԿՐԻՄԻՆԱԼԻՍՏԻԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

## Արթուր ՉԱՆՈՅԱՆ

*ԵՊՀ քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի դասախոս, կրիմինալիստիկայի լաբորատորիայի վարիչ*

Ապացույցների ձեռքբերումը որոնողական գործընթաց է, որը ներառում է ապացուցողական նշանակություն ունեցող փաստական տվյալների ընտրությունը, այդ տվյալների վրա ուշադրություն սևեռելը, շրջակա միջավայրից դրանց առանձնացնելը և վերցնելը:

Նախնական քննությունը իրականացնող մարմինները ոչ միշտ են տիրապետում այնպիսի հատուկ գիտելիքների, որոնք բավարար են հանցագործության հետքերը և այլ իրեղեն ապացույցները որոնելու, հայտնաբերելու, ֆիքսելու և վերցնելու ընթացքում տեխնիկակրիմինալիստիկական միջոցները և մեթոդները արդյունավետ կիրառելու համար: «Հանցագործությունների նախազգուշացման, քննության և բացահայտման ընդհանուր թերություններից մեկը քննիչների կողմից տեխնիկակրիմինալիստիկական միջոցներ ու մեթոդներ, տակտիկական հնարքներ ու հանձնարարականներ չկիրառելը կամ սխալ կիրառելն է»<sup>1</sup>:

Նշված հանգամանքները պարտադրում են փորձագիտական հիմնարկների աշխատակիցների՝ որպես մասնագետների լայն մասնակցությունը նախնական քննությանը: Քանի որ մասնագետները իրեղեն ապացույցների հայտնաբերման, ինչպես նաև քննչական գործողությունների իրականացման, դրա արդյունքների ամրագրման հարցերում օժանդակում են քննիչներին, ապա նախնական քննության իրականացման ընթացքում քննիչների համագործակցությունը փորձագիտակրիմինալիս-

տիկական գործունեությունը իրականացնող մարմինների հետ դառնում է պարտադիր<sup>2</sup>:

Հանցագործությունների քննության արդյունավետության բարձրացման պայմաններից է քննիչի պատշաճ համագործակցությունը մասնագետի հետ:

Նախնական քննության ընթացքում հատուկ գիտելիքների կիրառման խնդիրներն ուսումնասիրվում են շատ հեղինակների կողմից, բայց նրանց ուշադրությունը միշտ սևեռված է դատավարական հարցերին՝ աչքաթող անելով քննչական տակտիկան: Մասնագետների կողմից հատուկ գիտելիքների կիրառման կրիմինալիստիկական խնդիրները հաճախ հանգեցնում են գործի համար էական նշանակություն ունեցող տեղեկությունների կորստի կամ դրանց ոչ ճիշտ օգտագործման: Խոսելով նախնական քննության ընթացքում հատուկ գիտելիքների կիրառման կրիմինալիստիկական խնդիրների մասին՝ պետք է նկատի ունենալ, որ նախնական քննությունը իրականացնող անձանց համագործակցությունը դատավարության այլ մասնակիցների, այդ թվում և մասնագետների հետ, խիստ հարաբերական է: Քրեադատավարական առումով այստեղ չկա իրավահավասար գործընկերություն, քննիչի դիրքը ենթադրում է գլխավորող և ղեկավարող դեր, անձնական պատասխանատվություն ընդունվող որոշումների և ընդհանրապես քննության արդյունքների համար: Դատավարության այլ մասնակիցների գործունեությունը պայմանավորված է քննիչի առաջադրանքներով և համաձայնեցվում է նրա հետ: Մեր կողմից ուսումնասիրվող փոխհարաբերության հիմնական օղակը քննիչն է, ով ազատ է գործի քննության ուղղության և քննչական գործողությունների իրականացման վերաբերյալ որոշումներ կայաց-

## **ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ ԵՎ**

### **ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

մեկիս, իսկ փոխհամագործակցության մյուս մասնակիցները ենթարկվում են քննիչին, և նրանց գործողությունները կրում են օժանդակող բնույթ:

Մասնագետն օժտված չէ դատավարական ինքնուրույնությամբ, նրա գործունեությունը սահմանափակվում է քննչական գործողությունների իրականացման ընթացքում կիրառվող գիտատեխնիկական միջոցների կիրառմամբ, դրա համար էլ քննիչը մասնագետի հետ արդյունավետ համագործակցելու համար պետք է ոչ միայն հստակ պատկերացնի նրա գործունեության ուղղվածությունը, այլ նաև իմանա կոնկրետ իրավիճակում նրա կողմից իր հատուկ գիտելիքներն իրացնելու մեթոդներն ու միջոցները:

«Արդյո՞ք քննիչները միշտ են արդյունավետ ղեկավարում մասնագետ կրիմինալիստների աշխատանքը» հարցին ՌԴ ՆԳՆ փորձագիտակրիմինալիստիկական ծառայության աշխատակիցների 92,9%-ը տվել է բացասական պատասխան. «Շատ քննիչներ, որոնք քննչական աշխատանքի քիչ փորձ և ակնհայտ ոչ բավարար մասնագիտական պատրաստվածության մակարդակ ունեն, ոչ միշտ են կարողանում իրենց վրա վերցնել հանցագործությունների բացահայտման գործում կազմակերպչական դերը, որի պատճառով էլ քննչական պրակտիկայում քննչական-օպերատիվ խմբերի աշխատանքի կազմակերպման ժամանակակից մեթոդներն ու ձևերը առաջին հերթին դեպքի տեղում շատ դանդաղ են ներթափանցում...»<sup>3</sup>:

ՀՀ չորս փորձագիտական կենտրոններում՝ ՀՀ ԱՆ «Հայաստանի Հանրապետության փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ում, ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ում, ՀՀ ԱՆ «Հայաստանի Հանրապետության դատական բժշկության գիտագործնական կենտրոն» ՊՈԱԿ-ում և ՀՀ Ոստիկանության փորձաք-

րեագիտական վարչությունում, թվով 59 փորձագետների շրջանում մեր կողմից անցկացված հարցմանը, թե «քննչական գործողությունների իրականացման ընթացքում քննիչները մի՞շտ են արդյունավետ ղեկավարում մասնագետների աշխատանքը» հարցին, քրեական գործերի քննության ընթացքում որպես մասնագետ ներառված փորձագետները պատասխանել են հետևյալ կերպ՝ այո-5%, ոչ-81%, դժվարանում են պատասխանել-14%:

Մասնագետի և քննիչի ոչ արդյունավետ համագործակցության պատճառների ցանկում կարելի է մշել ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը, քանի որ այն հաստակ չի կարգավորում այդ հարաբերությունները: Քրեական դատավարության օրենսգրքի նորմերի բովանդակությունից կարելի է բխեցնել, որ մասնագետը պարտավոր է ապացույցներ հայտնաբերելիս, ֆիքսելիս և վերցնելիս իր ոչ թե հատուկ, այլ մասնագիտական գիտելիքները կիրառելով օժանդակել քննիչին, իսկ այդպիսի օժանդակության ձևն ու կարգը սահմանում է ոչ թե օրենսգիրքը, այլ կոնկրետ քննիչը:

Քրեադատավարական օրենքում քննչական գործողություններին մասնագետի մասնակցության, գործունեության ձևի և մեթոդների վերաբերյալ նախնական քննության մարմինների իրավասությունների սահմանման բացակայությունը, մեր կարծիքով, կարող է հանգեցնել քննիչի և մասնագետի փոխհամագործակցության կրիմինալիստիկական բազմաթիվ սխալների:

Իսկ քրեադատավարական օրենքը ծանրաբեռնել կրիմինալիստիկական հանձնարարականներով, մեր կարծիքով, նույնպես ճիշտ չի լինի: Հանցագործությունների քննության և բացահայտման հետ կապված քննիչի և մասնագետի փոխհամագործակցության կրիմինալիստիկական կազմակերպչական հարցերը ճիշտ կլինի կարգավորել համապատասխան կառույցների հրամաններով, ամփոփագրերով: Անհրաժեշտ է մշակել քննչական գործ-

դրությունների կատարման տակտիկային նվիրված մեթոդաբանական ձեռնարկներ:

Պետք է ընդգծել, սակայն, որ որոշ քննիչներ համագործությունների նյութական հետքերի և այլ իրեղեն ապացույցների որոնման, հայտնաբերման, ֆիքսման և վերցման հարցերում թույլատրում են մասնագետների ինքնուրույնություն: Ն. Ա. Սելիվանովը այս կապակցությամբ գրում է. «Ղեկավարի տեղի զննմանը մասնակցող մասնագետը կարող է քննիչին խորհուրդ տալ ընդլայնել իրեղեն ապացույցների որոնման ոլորտը և որոշ չափով ինքնուրույն նախաձեռնություն ցուցաբերել»<sup>4</sup>:

Ինչպես տեսնում ենք, գիտնականը մասնագետին «որոշ չափով» թույլ է տալիս հանդես գալ ինքնուրույն, նախաձեռնող, սակայն քանի որ նման ինքնուրույնության սահմանները ոչ մի տեղ սահմանված չեն, ապա դա անում է կամ քննիչը, կամ մասնագետը՝ ստանձնելով պատասխանատվություն և ընդլայնելով քննիչի կողմից իրեն առաջադրված խնդրի սահմանները:

Պրակտիկայում լինում են նաև դեպքեր, որ մասնագետի վրա դրվում են նաև ոչ հարիր պարտականություններ (օրինակ՝ դեպքի վայրի պաշտպանություն), այսինքն՝ տեղի է ունենում քննիչի կողմից հատուկ գիտելիքների կիրառման աշխատանքի ոչ ճիշտ կազմակերպում, ինչն էլ հաճախ փոխհամագործակցող սուբյեկտների միջև առաջացնում է կոնֆլիկտներ: Կամ էլ տարածայնություններ են առաջանում քննչական գործողությունների կատարման ժամանակ հատուկ գիտելիքների կամ տեխնիկական միջոցների կիրառման ծավալների վերաբերյալ:

Այն հարցին, թե «պրակտիկայում շա՞տ են եղել դեպքեր, երբ հատուկ գիտելիքների կամ տեխնիկական միջոցների կիրառման վերաբերյալ Ձեր և քննիչի (մասնագետի) կարծիքները տարբեր են եղել», քննիչների 1 տոկոսը դժվարացել է պատասխանել, 55 տոկոսի կարծիքով տարբեր են եղել, իսկ մասնագետների 4 տոկոսն է դժվարացել պատասխանել, 50 տոկոսի

կարծիքով էլ տարբեր են եղել:

Եվ նշված տարածայնություններն էլ, մեր կարծիքով, քննիչի և մասնագետի միջև կոնֆլիկտների առաջացման պատճառ են դառնում:

Ի. Տ. Լուցյուկը նման կոնֆլիկտային իրադրությունների առաջացման դեպքում մասնագետներին խորհուրդ է տալիս արագ և աննկատ հեռացնել հոգեբանական պատճենը իրենց և քննիչների միջև, որոնց առաջացման պատճառը կարող է լինել այն, որ քննիչը չի տիրապետում կրիմինալիստիկայի ոլորտի հատուկ գիտելիքների, և հնավարո է չհասկանա մասնագետի բացատրությունները, ինչպես նաև այն պատճառով, որ որևէ գործողության համատեղ իրականացման ընթացքում քննիչը կատարում է ամրագրման աշխատանքի իր մասը<sup>5</sup>:

Պետք է նկատել, որ նշված տեսակետը դիտարկելիս Ի. Տ. Լուցյուկը մասնագետի առջև խնդիր է դրել կանխելու կոնֆլիկտային իրադրությունը: Իսկ ինչու՞ հենց մասնագետը պետք է անի դա: Եթե քննիչը զգուշորեն չի ամրագրում հետքերը, ապա նա պետք է հանձն առնի այդ գործը, իսկ մասնագետը նման իրավիճակում չպետք է դառնա նրա ուսուցիչը: Իսկ եթե պատկերացնենք, որ մասնագետին չի հաջողվում կանխել կոնֆլիկտը, ապա նրա և քննիչի միջև այնպիսի հոգեբանական կոնֆլիկտ կառաջանա, ինչը վտանգի տակ կդնի քննչական գործողության ողջ ընթացքը:

Մասնագետի և քննիչի փոխհամագործակցության պրոբլեմատիկ հարցերից մեկն էլ աշխատանքային ժամանակի դեֆիցիտն է: Մասնագետին շատ քիչ ժամանակ է տրվում հանցագործության հետքերը և այլ իրեղեն ապացույցները որոնելու, հայտնաբերելու, ֆիքսելու և նախնական հետազոտելու, տեխնիկակրիմինալիստիկական միջոցներ և մեթոդներ կիրառելու համար: Ձգտելով արձանագրության մեջ տեխնիկակրիմինալիստիկական միջոցների կիրառման ընթացքն ու արդյունքներն արտահայտել՝ քննիչները երբեմն ուղղա-

## **ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ ԵՎ**

### **ԴԱՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ**

կիրեն մասնագետների «թիկունքին են շնչում»՝ սպասելով, թե նա երբ է ինչ-որ բան հայտնաբերելու:

Այսպես, Ա.Ա.Սիդորովը նշում է. «Դեպքի տեղի զննության ընթացքում քննիչները շտապեցնում են մասնագետին՝ պատճառաբանելով, որ արդեն բավական քանակությամբ հետքեր վերցվել են, և արդեն ժամանակն է գնալ այլ տեղ»<sup>6</sup>:

Քննիչների և մասնագետների ոչ բավարար փոխհամագործակցությունը բացասական է ազդում նաև տվյալ քննչական գործողության արձանագրությունը կազմելու վրա: Որպես կանոն քննիչները, թերագնահատելով մասնագետների գիտելիքները, արձանագրություններ կազմելիս ձևակերպումների ժամանակ հազվադեպ են դիմում նրանց օգնությանը, ինչն էլ հաճախ հանգեցնում է տվյալ փաստաթղթին ներկայացվող կրիմինալիստիկական պահանջների չկատարմանը: Մասնավորապես, քննչական գործողությունների ընթացքի և արդյունքների նկարագրման ժամանակ քննիչների կողմից կրիմինալիստիկական տերմինալոգիա չի կիրառվում: Բացի այդ, քննիչների կողմից հաճախ չի նշվում կամ էլ սխալ ձևակերպումներով են նշվում, թե տվյալ քննչական գործողության ժամանակ հատկապես ինչ տեխնիկական կրիմինալիստիկական մեթոդներ և միջոցներ են կիրառվել, ինչպես նաև, թե երբ և որտեղ են հայտնաբերվել հանցագործության հետքերն ու այլ նյութական ապացույցները:

Քննիչները նաև բավականաչափ ամբողջական չեն նկարագրում հանցագործության հետքերը, չեն նշում դրանց ձևը, չափսերը, դիրքը: Շատ դեպքերում իրեղեն ապացույցների մասին նշված է միայն, որ դեպքի տեղից հայտնաբերվել և վերցվել է, օրինակ՝ դանակ: Արձանագրություններում մեծամասամբ ինչպես կարգն է, չեն արտացոլվում, թե ինչպիսի հետքեր են վերցված,

չկա նաև հետքերի նկարագրությունը, ինչը կարտացույի դրանց առաջացման հնարավոր մեխանիզմը և հետքը կրող օբյեկտի բնութագիրը:

Մեր կողմից ուսումնասիրված քրեական գործերի տեղագնության արձանագրությունների 30 տոկոսում ընդհանրապես բացակայում էր հանցագործության հետքերի և այլ իրեղեն ապացույցների փաթեթավորման և վերցման մասին նշումը, չնայած արձանագրությունների նկարագրական մասերում նշվում է, որ դրանք հայտնաբերվել են զննության արդյունքում:

Մասնագետները լիարժեք չեն մասնակցում նաև հանցագործությունների նյութական հետքերի և այլ իրեղեն ապացույցների փաթեթավորման գործընթացին:

Ինչպես արդարացիորեն նշում է Ա. Ա. Սիդորովը, պրակտիկայում քննիչները պարզապես հարկ եղած ուշադրություն չեն դարձնում դեպքի տեղից վերցված հետքերի, առարկաների և այլ իրեղեն ապացույցների ձևակերպմանն ու փաթեթավորմանը, այդ հարցերով չեն դիմում քննչական գործողությանը մասնակցող մասնագետին. փորձաքննության համար փորձագետին ներկայացրած մատնահետքերի 50 %-ը եղել է չփաթեթավորված և չկնքված: Քննիչների մանատիպ թերացումների հետևանքով մնան հետքերի ապացուցողական նշանակությունը դատարանում հավասարվում է զրոյի<sup>7</sup>:

Հարկ է կանգ առնել նաև նախնական քննություն իրականացնող անձանց և մասնագետների փոխհարաբերության պրոբլեմներին, քննչական գործողությունների եզրափակիչ փուլի ընթացքում:

Այս փուլում քննիչները, որպես կանոն, մասնագետներից չեն հետաքրքրվում հանցագործության հավաքված նյութական հետքերի և այլ իրեղեն ապացույցների կրիմինալիստիկական նշանակության մասին, իսկ երբեմն էլ դրանք կցվում են գործին առանց անհրաժեշտության, կամ հակառակը, դրանց կցումը արձանագրությանը արդարացված կլիներ, սակայն չի



կցվում, կամ էլ դրանք չեն պահպանվում այնպես, որ չկորցնեն իրենց նշանակությունը:

Պրակտիկայից հետաքրքիր օրինակ է ներկայացրել Վ. Ա. Օբրագովը. «Փորձագետին ներկայացվել է կծած խնձորներ՝ ատամների հետքերով, որոնք վերցված են եղել դեպքի տեղից, որտեղ սպանվել էր Կ-ն: Քանի որ այդ խնձորները քննիչը չէր պահել սառնարանում, այլ պահել էր իր չիրկիզվող պահարանում, խնձորների վրա ատամների հետքերն այլևս տեսանելի չէին, քանի որ վերին շերտերը ցամաքել էին»<sup>8</sup>:

Մասնագետների և քննիչների ոչ բավարար փոխհամագործակցության պատճառներից մեկն էլ իրեղեն ապացույցները փորձաքննության ուղարկելիս փաստաթղթերի ոչ ճիշտ ձևակերպումն է:

Ինչպես նշում է Մ. Ն. Սոսենուշկինան, փորձագիտական հետազոտման համար ձևակերպվող փաստաթղթերի պատրաստման ժամանակ թույլ են տրվում հետևյալ սխալները.

1. գրագետ և հստակ չեն ձևակերպվում հարցերը (առաջադրանքի ոչ պարզության հետևանքով փորձագետը լիարժեք չի լուծում այն),

2. հարցադրումը չի արտացոլում տվյալ փորձաքննության ժամանակակից հնարավորությունները (տուժում են փորձաքննության որակը և գործի քննությունն ամբողջությամբ),

3. ելակետային տվյալները, հետազոտության օբյեկտների մասին տեղեկությունները բացակայում են կամ բավարար չեն (հնարավոր է փորձագետի եզրակացության սխալմունք կամ շեղում առաջադրված հարցերից),

4. խախտվել են օբյեկտների ֆիքսման, ազդավման, փաթեթավորման, տեղափոխման ներկայացվող պահանջները (իրեղեն ապացույցների վնասում կամ կորուստ, հետազոտության անցկացման անհնարինություն, հետազոտվող օբյեկտների բնօրինակը լինելու կասկած)<sup>9</sup>:

Քննիչները պարզապես հնտություններ

չունեն աշխատելու պարզ տեխնիկակրիմինալիստիկական միջոցներով, օրինակ՝ ֆոտապարատով, արդյունքում քննիչները ոչ միշտ են բավականաչափ ուշադրության արժանացնում գիտատեխնիկական միջոցներին հանցագործությունների քննության, մասնավորապես քննչական գործողությունների իրականացման ընթացքում<sup>10</sup>:

Նախնական քննություն իրականացնող անձանց մոտ սեփական փորձի և տեխնիկակրիմինալիստիկական միջոցներով աշխատելու հնտությունների բացակայությունը, ինչպես նաև այդ միջոցների կիրառման աշխատատարությունը հանդիսանում են հոգեբանական գործոններից մեկը, որը բացասական ազդեցություն է թողնում քննչական գործողությունների ընթացքում քննիչի կողմից տեխնիկակրիմինալիստիկական միջոցներ կիրառելու վերաբերյալ որոշման ձևավորման գործում:

Ի. Մ. Լուզգինը, խոսելով տեխնիկակրիմինալիստիկական միջոցների կիրառման աշխատատարության մասին, նշում է. «Քննիչը, անցնելով ֆոտո, տեսանկարահանմանը, հետքերի վերցմանը, որոնք պահանջում են ուշադրության սևեռում գործի տեխնիկական կողմի վրա, անպայմանորեն այս կամ այն չափով շեղվում է իր համար հիմնական հարցերի լուծումից»<sup>11</sup>:

Վ. Ն. Մախտվի կարծիքով, «քննչական գործողության իրականացման ընթացքում քննիչի կողմից պլանների և սխեմաների կազմումը, լուսանկարահանումը, ձայնագրման կիրառումը, ապացույցների ձեռքբերման և ամրագրման այլ եղանակները կարող են բացասական ազդել քննչական գործողության ընթացքի և արդյունքների վրա, բաց թողնված կլինի այլ անհետաձգելի քննչական գործողությունների ժամանակին իրականացումը:

Սի շարք տեխնիկակրիմինալիստիկական միջոցներ չնայած կարող են քննիչի կողմից ինքնուրույն կիրառվել, սակայն պահանջում են քննչական գործողության իրականացման ընթացքում այլ անհետաձ-

## **ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ ԵՎ**

### **ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

գելի միջոցների կիրառումից շեղում: Այսպես, քննչական փորձարարության կատարման ժամանակ անձամբ քննիչի կողմից իրականացվող լուսա կամ տեսանկարահանումը ստիպում է նրան գտնվել ամրագրվող իրադարձությունից էական հեռավորության վրա, դժվարացնում է փորձարարության մասնակիցների հետ նրա շփումը: Քննիչի ուշադրությունը գլխավորից շեղվում է, կենտրոնանում է նկարահանման վրա»<sup>12</sup>:

Ի. Տ. Լուցյուկի կարծիքով, քննիչի այնպիսի գործողությունները, ինչպիսիք են դեպքի տեղի զննության տակտիկայի որոշումը, վարկածների առաջադրումը, օպերատիվ աշխատողների հետ փոխհամագործակցության կազմակերպումը, որոնք գործում են դեպքի տեղում, պահանջում են զննության տեխնիկական հնարքներից հարաբերականորեն ազատում, նրա ուժերի և ժամանակի կենտրոնացում առավել էական խնդիրների վրա: Նշված խնդիրներից են տարբեր տակտիկական և ընթացակարգային հարցեր, որոնք վերաբերում են քննչական գործողության ամբողջական անցկացմանը, այլ ոչ թե դրա ինչ-որ մասին: Օրինակ՝ քննիչի կողմից միայն մեկ ինքնուրույն նկարահանումը պահանջում է զննության իրականացման վրա ծախսվող ժամանակի ամբողջ ծավալի 20 տոկոսը, այդ պատճառով էլ դեպքի տեղի զննության իրականացման 98 տոկոսի դեպքում նկարահանում իրականացվում է մասնագետի կողմից<sup>13</sup>:

Այսպիսով, քննիչի մոտ աշխատաժամանակի դեֆիցիտը, որը արտահայտվում է ժամանակի խիստ ռեժիմով, ոչ միայն նախաքննության ընդհանուր ժամկետների, այլ նաև քրեական գործի շարժի դատավարական փուլերի ժամկետների արդյունքում, մեր կարծիքով տեղի է ունենում տեխնիկակրիմինալիստիկական միջոցների կիրառման ֆունկցիայի բաշխում: Նման

բաշխման դեպքում այն կիրառող հիմնական սուբյեկտ է դառնում մասնագետը, այլ ոչ թե քննիչը:

Ինչպես ցույց են տվել մեր կողմից անցկացված հարցումները, քննիչների 87 տոկոսը նշում է, որ իրենց կողմից ինքնուրույն կիրառվող կրիմինալիստիկական միջոցներն ու մեթոդները հանցագործության նյութական հետքերի և այլ իրեղեն ապացույցների հայտնաբերման, ամրագրման և վերցման ընթացքում շեղում են քննչական գործողության ղեկավարման ընդհանուր գործընթացից, ինչպես նաև արձանագրության կազմումից: Ուստի կարծում ենք, որ տեխնիկակրիմինալիստիկական միջոցների կիրառման ֆունկցիայի կազմակերպատակտիկական վերաբաշխումը մասնագետին տեղի է ունեցել օբյեկտիվ պատճառներով պայմանավորված, որոնք հարկ է հաշվի առնել:

Գրականության մեջ կարծիք կա քննիչին ընդհանրապես ազատել տեխնիկակրիմինալիստիկական միջոցների ինքնուրույն կիրառումից: Տվյալ տեսակետը, մեր կարծիքով, զուրկ է իմաստից, հատկապես այն դեպքերում, երբ նախնական քննություն իրականացնող անձը տեխնիկակրիմինալիստիկական լայն հմտությունների և գիտելիքների բացակայության պատճառով չի կարող իրականացնել դրանց ինքնուրույն կիրառում: Իսկ այդ բացակայությունը բացատրվում է այդ անձի համապատասխան մեղ ոլորտում տեխնիկակրիմինալիստիկական պատրաստվածությունը չանցնելով:

Բացի այդ՝ ոչ բոլոր քննիչներն են պատրաստ տեխնիկակրիմինալիստիկական միջոցների ինքնուրույն կիրառման, քանի որ որքան էլ որ պատրաստված լինի քննիչը, նա ոչ միշտ կարող է հայտնաբերել հանցագործության հետքերը, որոնց բացահայտման համար անհրաժեշտ են հատուկ գիտելիքներ ու հմտություններ:

Դա է վկայում նաև մեր կողմից անցկացված հարցումների արդյունքները, համաձայն որի՝ մասնագետների 76 տոկոսի

կարծիքով քննչական գործողությունների իրականացման ժամանակ քննիչները չեն կարողանում ինքնուրույն կիրառել տեխնիկական միջոցներ, 42 տոկոսը հաստատել են, որ քննիչի կողմից տեխնիկական միջոցները քննիչների ինքնուրույն կիրառման հետևանքով վնասվել կամ ոչնչացվել են հանցագործության հետքեր:

Քննիչների շրջանում անցկացված հարցումների համաձայն՝ քննիչների միայն 49 տոկոսն է կարողանում ինքնուրույն տեխնիկական միջոցներ կիրառելով հայտնաբերել հանցագործության հետքեր և այլ նյութական օբյեկտներ:

Իսկ հարցված քննիչների 99 տոկոսի կարծիքով քննչական գործողությունների իրականացման արդյունավետության վրա մասնագետների մասնակցությունն ունենում է դրական ազդեցություն, բացասական ազդեցություն բոլորի կարծիքով չի ունենում, միայն 1 տոկոսի կարծիքով որևէ ազդեցություն չի ունենում:

Նախնական քննության ընթացքում տեխնիկական միջոցների կիրառման անհամապատասխանություններ առաջարկվել են առավել խոշոր քննչական և օպերատիվ խմբերում ներմուծել դատախազ-կրիմինալիստի կամ քննիչ-կրիմինալիստի հատուկ պաշտոններ հանցագործության դեմ պայքարում տեխնիկական միջոցների կիրառման կազմակերպման համար՝ ազատելով նրանց այլ ֆունկցիաներից<sup>14</sup>:

Այս առաջարկը Վ. Ե. Սիդորովի կարծիքով հաշվի չի առնում «ստորին» քննչական ստորաբաժանումների պահանջները, որտեղ քննիչներին նույնպես անհրաժեշտ են մասնագետ-կրիմինալիստների անընդհատ օգնությունը, այդ պատճառով էլ նա առաջարկել է յուրաքանչյուր քաղաքային շրջանների մարմիններում փորձագետ-կրիմինալիստի և տեխնիկական միջոցների կիրառման օպերատիվ կազմի թվաքանակին համաչափ քանակ<sup>15</sup>:

Ինչպես տեսնում ենք, ռուս գիտնականները մեծ նշանակություն են տալիս նախնական քննության ընթացքում մասնագետների լայն մասնակցությանը: Տվյալ փաստն էլ վկայում է այն մասին, որ նրանց կողմից մասնագետը դիտվում է որպես անհրաժեշտ սուբյեկտ այն քննչական գործողությունների իրականացման ժամանակ, որտեղ պահանջվում են տեխնիկական միջոցների կիրառման մեթոդների կիրառում: Դրա պատճառն այն է, որ մասնագետներն արդեն ոչ միայն տեխնիկական միջոցներն օգնություն են ցույց տալիս քննիչին, այլև ինքնուրույն իրականացնում են գործողության տվյալ տեսակը: Երբեմն նրանց նման գործունեությունն ընթանում է ընդհանրապես առանց քննիչի կողմից ղեկավարման, քանի որ այն կամ դժվար է, կամ անհնար՝ քննիչի մոտ դրա համար բավարար տեխնիկական միջոցների, ինչպես նաև ժամանակի բացակայության պատճառով:

Կարծում ենք՝ հասունացել է անհրաժեշտությունը առանցքայնորեն վերանայելու նախնական քննություն իրականացնող անձանց փոխհամագործակցության ողջ տակտիկական մասնագետների հետ, քանի որ այն կրիմինալիստիկական հանձնարարականները, որոնք գործում են այժմ, չեն արտացոլում պրակտիկայում ձևավորված մեր կողմից դիտարկվող փոխհամագործակցության նոր ձևերը: Այդ ձևերը բնութագրվում են մասնագետի կողմից ինքնուրույն տեխնիկական միջոցների կիրառման օգնության կիրառման ժամանակ հանցագործության նյութական հետքերի և այլ իրերեն ապացույցների հավաքման (որոնման, հայտնաբերման և վերցման) ընթացքում: Իմիջիայլոց, մասնագետների և հանցագործությունը քննող անձանց փոխհամագործակցության նման ձև է գործում ԱՄՆ-ում<sup>16</sup>:

Տեղին է նկատում Ն. Ա. Սելիվանովը, որ «մասնագետները միևնույն ժամանակ նկատում են այն, ինչը դժվար կամ անհնար

## **ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ ԵՎ**

### **ԴԱՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ**

է քննիչի կողմից նկատելը: Հաճախ նրանք ապահովում են հանցագործության նյութական նշանների և հանցագործի արագ բացահայտում: Միաժամանակ նրանք՝ մասնագետները, վերլուծվում են դեպքի տեղում հայտնաբերված նյութական հետքերը, որը շատ դեպքերում հնարավորություն է տալիս ճիշտ պատկերացում կազմելու քննվող դեպքի մեխանիզմի մասին, նախնական պատասխաններ ստանալու շատ հարցերի վերաբերյալ, որոնք հետաքրքրում են քննիչին՝ ի՞նչը, ե՞րբ, ի՞նչ եղանակով է կատարվել, ո՞վ է կատարել, ի՞նչ նպատակով են իրականացվել այս կամ այն գործողությունները և այլն»<sup>17</sup>:

Ամփոփելով կարող ենք ասել, որ այն քննչական գործողությունների ընթացքում, որտեղ լայնորեն կիրառվում են տեխնիկակրիմինալիստիկական միջոցներ, մասնագետի պարտադիր մասնակցությունը և հանցագործության նյութական հետքերի և այլ իրեղեն ապացույցների հավաքման ընթացքում տեխնիկակրիմինալիստիկական միջոցների ու մեթոդների կիրառման հիմնական առաջադրանքը մասնագետի վրա դնելը, մեր կարծիքով, ճիշտ կլինի:

Ասվածը կարող ենք հիմնավորել հետևյալ պատճառներով.

– մասնագետի առավել բարձր տեխնիկակրիմինալիստիկական հմտությունների

ու գիտելիքների մակարդակով,

– քննիչների ճնշող մեծամասնության մոտ տեխնիկակրիմինալիստիկական միջոցների և մեթոդների ճիշտ և ինքնուրույն կիրառման համար անհրաժեշտ հմտությունների ու գիտելիքների բացակայությամբ,

– քննիչների ֆունկցիոնալ ծանրաբեռնվածությամբ, որոնք ոչ միայն իրենք պետք է իրականացնեն հանցագործությունների նյութական հետքերի և այլ իրեղեն ապացույցների որոնումը, հայտնաբերումը, ֆիքսումը, վերցնումը, այլ նաև ղեկավարել այդ գործընթացին մասնակցող անձանց,

– մի քանի տեխնիկակրիմինալիստիկական միջոցների կիրառման գործընթացի ընդհանուր աշխատատարությամբ, որոնք քննիչներին շեղում են առավել կարևոր առաջադրանքների կատարումից, որոնք ծառայած են քննչական գործողության առջև,

– մասնագետի առավել լավ տեխնիկակրիմինալիստիկական հագեցվածությամբ,

– փորձաքննություններ նշանակելիս փորձաքննության որոշակի տեսակի և ենթատեսակի որոշմամբ, ինչպես նաև փորձագետին առաջադրվող հարցերի լրիվ, ճիշտ և հասկանալի ձևակերպմամբ,

– հայտնաբերված հանցագործության հետքերի և այլ իրեղեն ապացույցների փաթեթավորմամբ և անվնաս տեղափոխմամբ:

<sup>1</sup> Տե՛ս **Тлиш А. Д.**, Использование достижений кибернетики и раскрытии, расследовании общеуголовных преступлений, а также в сфере экономической деятельности, совершаемых с использованием компьютерной и иной технологии: Учеб.-практ. Пособие /Под. ред. **Г. М. Меретукова**, Краснодар: КГАУ, 2000, էջ 165:

<sup>2</sup> Տե՛ս **Махов В. Н.**, Участие специалистов в следственных действиях, М., 1975, էջ 45:

<sup>3</sup> Տե՛ս О результатах работы органов предварительного следствия в 1998, Аналитическая справка СК при МВД России, Инф. Бюл. СК МВД России, 1999, N 2, էջ 11-32:

<sup>4</sup> Տե՛ս **Селиванов Н. А.**, Привлечение специалиста к расследованию, М., 1973, էջ 8:

<sup>5</sup> Տե՛ս **Луцок И. Т.**, Участие специалиста-криминалиста в предварительном следствии: Дис. ...канд. юрид. наук, Львов, 1976, էջ 159:

- 
- <sup>6</sup> Ст'и **Сидоров А.А.**, Проблемы организации участия специалистов в расследовании преступлений: Дис. ...канд. юрид. наук, Краснодар, 2000, т' 77-78:
- <sup>7</sup> Ст'и **Сидоров А.А.**, Проблемы организации участия специалистов в расследовании преступлений: Дис. ...канд. юрид. наук, Краснодар, 2000, т' 68, Колмаков В. П., Следственный осмотр, М., 1969, т' 109:
- <sup>8</sup> Ст'и **Образцов В. А.** Криминалистика: Учеб., М., 1997, т' 360:
- <sup>9</sup> Ст'и **Сосенушкина М. Н.** О недостатках, допускаемых следователями при назначении экспертиз, М., 2000, т' 111:
- <sup>10</sup> Ст'и **Закатов А. А.** О некоторых проблемах использования научно-технических средств в розыскной деятельности следователя, Киев, 1987, т' 68:
- <sup>11</sup> Ст'и **Лузгин И. М.** Методологические проблемы расследования, М., 1973, т' 113:
- <sup>12</sup> Ст'и **Махов В.И.** Участие специалистов в следственных действиях, М., 1975, т' 10:
- <sup>13</sup> Ст'и **Луцюк И.Т.** Участие специалиста-криминалиста в предварительном следствии: Дис. канд. юрид. наук. Львов., 1976, т' 18-19:
- <sup>14</sup> Ст'и **Белкин Р.С.** Криминалистика: проблемы, тенденции, перспективы. , М., 1988, т' 48-49:
- <sup>15</sup> Ст'и **Сидоров В.Е.** Начальный этап расследования: организация, взаимодействие, тактика, М., 1992, т' 86:
- <sup>16</sup> Ст'и **Гусаков А.Н.** Криминалистика США: теория и практика ее применения, Екатеринбург, 1993, т' 64:
- <sup>17</sup> Ст'и **Селиванов Н.А.** Правление специалистов к расследованию , М., 1973, т' 5:
-

**ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ ԵՎ****ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ****FORENSIC ISSUES CONNECTED WITH THE USE  
OF SPECIAL EXPERTISE DURING THE  
INVESTIGATION OF CRIMES****Artur CHAKHOYAN**

*Lecturer of the Department of Criminal  
Procedure and Criminalistics of YSU  
Head of Criminalistics laboratory*

**C** The due cooperation of the investigator and the specialist is one of the criteria for raising the productiveness of the investigation of crimes, since a considerable part of the evidence is obtained through the performance of investigative actions, where the expertise of the specialist is widely used.

In our opinion it is necessary to thoroughly review the whole tactics of cooperation of individuals performing the preliminary investigation with the specialists, since the forensic recommendations used nowadays, raise a series of forensic issues.

By analyzing within the article certain problematic issues that may emerge with

regard to the performance of investigative actions - like the investigator's labor time deficit; the conflict situations that may arise between the investigator and the specialist with regard to the use of technical means and methods; the collection of vestiges of crimes and other material evidence (search, discovery and seizure), the drawing of the record of the specific investigative action, the packaging of vestiges of crimes and other material evidence, the sending of material evidence to perform the expertise - the author has come to the conclusion that the investigative actions, where technical means are widely used, the participation of the specialist must be mandatory and the duty of using technical-forensic means and methods during the collection of vestiges of crimes and other material evidence must be incumbent on the specialist.

## ԱՎԱԶԱԿՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԶԱՏՈՒՄԸ ՀԱՐԱԿԻՑ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ

### Տիգրան ՆԵՐՍԻՍՅԱՆ

ՀՀ ոստիկանության ակադեմիայի

ՕՀԳ ամբիոնի ավագ դասախոս

Ավազակությունն իր իրավաբանական հատկանիշներով բավականին բարդ հանցագործություն է, որը բնութագրվում է մի շարք առանձնահատկություններով: Միևնույն ժամանակ այն որոշակի ընդհանրություններ ունի սեփականության դեմ ուղղված որոշ այլ հանցագործությունների, ինչպես նաև ծովահենության ու բանդիտիզմի հետ:

Այս առումով տեսական գրականության մեջ և իրավակիրառ պրակտիկայում առավել հաճախ հանդիպող և բարդություններ առաջացնող հարցերից է ավազակության սահմանազատումը բռնությամբ զուգորդված կողոպուտից և շորթումից: Որոշակի խնդիրներ կան նաև՝ կապված ավազակությունը ծովահենությունից և կազմակերպված զինված խմբի կողմից կատարված ավազակությունը բանդիտիզմից սահմանազատելու հետ: Ընդ որում, նշված հարցերի կապակցությամբ քրեագետների շրջանում առկա են որոշ տարակարծություններ: Ուստի անհրաժեշտություն է առաջանում սահմանելու հստակ չափանիշներ, որոնցով ավազակությունը կարելի է սահմանազատել նշված հարակից հանցագործություններից, ինչը ոչ միայն տեսական, այլև գործնական կարևոր նշանակություն կունենա:

Այսպես, հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 176-ի 2-րդ մասի 4-րդ կետը պատասխանատվություն է նախատեսում կողոպուտի (ուրիշի գույքի բացահայտ հափշտակության) համար, որը զուգորդված է բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով, անհրաժեշտություն է առաջանում սահմանազատելու տվյալ արարքը

ավազակությունից:

Այս հանցագործությունների հիմնական տարբերությունը օբյեկտիվ կողմի մեջ է: Մասնավորապես, դրանք նախ և առաջ սահմանազատվում են ըստ գործադրվող բռնության կամ դրա գործադրման սպառնալիքի բնույթի: Այսպես, կողոպուտի նշված դեպքում խոսքը կյանքի կամ առողջության համար ոչ վտանգավոր բռնություն գործադրելու կամ դա գործադրելու սպառնալիքի մասին է: Իսկ ավազակությունը, ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 175-ի համաձայն, զուգորդվում է կյանքի կամ առողջության համար վտանգավոր բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով: Այս առումով, անհրաժեշտ է նախ և առաջ պարզաբանել բռնության կամ դրա սպառնալիքի՝ կյանքի կամ առողջության համար վտանգավոր և ոչ վտանգավոր տեսակների էությունը:

Բռնության և դրա սպառնալիքի հասկացությունները և դրանց դասակարգումը նշված երկու տեսակների առաջին անգամ սահմանվել են ՌՍՖՍՀ Գերագույն դատարանի պլենումի 1966 թ. մարտի 22-ի «Գողության, կողոպուտի և ավազակության վերաբերյալ գործերով դատական պրակտիկայի մասին» թիվ 3 որոշման մեջ, ինչն իր հետագա դրսևորումն է գտել նաև միութենական այլ հանրապետությունների իրավակիրառ պրակտիկայում<sup>1</sup>: Ըստ այդմ, բռնությունը պետք է համարել կյանքի համար վտանգավոր, երբ ուրիշի գույքը հափշտակելու նպատակով հանցավորը՝

1. տուժողին գրկում է կյանքից,

2. տուժողի նկատմամբ կատարում է այնպիսի գործողություններ, որոնք վտանգում են նրա կյանքը (օրինակ՝ մարդուն խեղդելը, գլուխը երկար ժամանակով կամ հաճախակի ջրի մեջ մտցնելը, շնչառությունը տարբեր ձևերով փակելը, էլեկտրական հոսանքով մարմնին դիպչելը, աստի-

## **ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ ԵՎ**

### **ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

Ճանաբար թույն ներարկելը և այլն) և շարունակվում են այնքան ժամանակ, քանի դեռ չի կատարվում հանցավորի պահանջը՝ հանձնել գույքը կամ ասել դրա տեղը:

Նույն որոշման համաձայն՝ առողջության համար վտանգավոր բռնություն է համարվում տուժողին ծանր, միջին ծանրության կամ թեթև մարմնական վնասվածքներ հասցնելը (ՀՀ գործող քր. օր.-ի իմաստով նրա առողջությանը ծանր, միջին ծանրության կամ թեթև վնաս պատճառելը):

Հարկ ենք համարում նշել նաև, որ արարքը որպես ավազակություն որակելու համար պարտադիր չէ տուժողին փաստացի վնաս պատճառելը. բավական է միայն, որ բռնությունը գործադրելու պահին այն վտանգավոր լինի կյանքի կամ առողջության համար: Օրինակ՝ գույքը հափշտակելու նպատակով տուժողի գլխին ծանր առարկայով հարվածելը, ընթացքի ժամանակ զնացքից կամ ավտոմեքենայից դուրս գցելը, դանակով կենսական կարևոր նշանակություն ունեցող օրգանների հատվածում հարվածելը և այլն, անկախ նրանից՝ այդ գործողությունները իրական վնաս պատճառե՞լ են, թե՞ ոչ, համարվում են կյանքի կամ առողջության համար վտանգավոր<sup>2</sup>:

Ինչ վերաբերում է կյանքի կամ առողջության համար վտանգավոր բռնություն գործադրելու սպառնալիքին, ապա, քննարկվող որոշմանը համապատասխան, այն նույնպես կարող է դրսևորվել տարբեր ձևերով: Ավելի հաճախ հանդիպում է խոսքով, զենք կամ որպես զենք օգտագործվող առարկա ցուցադրելով իրականացվող սպառնալիքը: Հնարավոր է սպառնալիքը նաև ժեստերով, օրինակ՝ մատը կոկորդին քսելով (սպանելու սպառնալիք) և այլն:

Նույն որոշման համաձայն՝ բռնությունը կյանքի կամ առողջության համար ոչ վտանգավոր կհամարվի այն դեպքերում, երբ դրա գործադրմամբ տուժողի կյանքը

վտանգի չի ենթարկվի, կամ նրա առողջությանը չի հասցվի ծանր, միջին ծանրության կամ թեթև վնաս (ծանր, միջին ծանրության կամ թեթև մարմնական վնասվածքներ): Փաստորեն, կյանքի կամ առողջության համար ոչ վտանգավոր բռնությունը կարող է դրսևորվել ծեծի, ձեռքերը կամ ոտքերը կապկպելու կամ ոլորելու, անձին որևէ տեղում փակելու և նման այլ ձևերով: Ինչ վերաբերում է կյանքի կամ առողջության համար ոչ վտանգավոր բռնություն գործադրելու սպառնալիքին, ապա այն պետք է դրսևորվի վերը նշված բռնություններից որևէ մեկի գործադրմամբ:

Այսպիսով, ինչպես քննարկվող հարցերի կապակցությամբ արդարացիորեն նշում է նաև Վ.Վ. Երակսիմը, կողոպուտի և ավազակության գլխավոր տարբերությունը պայմանավորված է գործադրվող բռնության կամ դրա սպառնալիքի ինտենսիվության աստիճանով և ծավալով<sup>3</sup>:

Սակայն, թեև սահմանազատման տվյալ չափանիշն օրենսդրորեն հստակ սահմանված է, այնուամենայնիվ իրավակիրառական պրակտիկայում հանդիպում են սխալ որակման դեպքեր՝ կապված բռնության (ֆիզիկական կամ հոգեկան) բնույթը զնահատելու հետ: Այսպես, օրինակ՝ Դ-ի և Շ-ի գործով քննչական մարմինն արարքը որակել է որպես խմբի կողմից նախնական համաձայնությամբ կատարված ավազակություն՝ մեղադրական եզրակացության մեջ նրանց մեղավորության վերաբերյալ հետևությունը պատճառաբանելով, որ մեղադրյալները կապել են տուժող Տ-ի աչքերը, ձեռքերն ու ոտքերը՝ դրանով իսկ գործադրելով նրա կյանքի կամ առողջության համար վտանգավոր բռնության սպառնալիք: Սակայն ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանն արդարացիորեն վերաորակել է Դ-ի և Շ-ի գործողությունները կողոպուտի՝ հիմնավորելով, որ գործում առկա չեն ապացույցներ, որոնք վկայում են նշված անձանց գործողությունների՝ տուժողի կյանքի կամ առողջության համար առկա և իրական վտանգ



ստեղծելու մասին: Տուժողին պարզապես կապկպելը դեռ չի կարող հիմք հանդիսանալ հարձակումը նրա կյանքի կամ առողջության համար վտանգավոր գնահատելու համար: Գործով առկա չեն փաստական հանգամանքներ, որոնք վկայում են տուժող Տ-ի կյանքին կամ առողջությանը այլ կերպ սպառնալու մասին, ուստի արարքը չի կարող որակվել որպես ավազակություն:

Ընդհանրապես, ավազակության և կողոպուտի սահմանազատման առումով իրավակիրառ պրակտիկայում առավել հաճախ բարդություններ են առաջանում հենց այն դեպքերում, երբ արարքը կատարվում է բռնություն գործադրելու սպառնալիքով: Բանն այն է, որ խոսքով արտահայտված սպառնալիքը հաճախ անորոշ բնույթ է կրում, օրինակ, երբ դրսևորվում է «վատ կլինի», «կփռշմանես», «չփորձես դիմադրել» և նման այլ արտահայտություններով: Բայց նույնիսկ այն դեպքերում, երբ սպառնալիքն արտահայտվում է շատ կոնկրետ (օրինակ՝ «կսպանեն», «կմորթեն», «գլուխդ կջարդեն» և այլն), չի կարելի միանշանակ պնդել, որ տուժողն այն ընկալում է որպես իր կյանքի կամ առողջության համար իրական սպառնալիք: Այդ իսկ պատճառով նման դեպքերում արարքը ճիշտ որակելու համար անհրաժեշտ է բացահայտել, որ տուժողը գործադրված սպառնալիքն ընկալել է որպես իր կյանքին կամ առողջությանը սպառնացող իրական վտանգ, իսկ հանցավորն էլ գիտակցել է այդ հանգամանքը: Ընդ որում, նման դեպքերում, մեր կարծիքով, արարքը պետք է որակվի որպես ավազակություն անգամ այն պարագայում, երբ տուժողը չի ընկալել գործադրված սպառնալիքը որպես իր կյանքին կամ առողջությանը սպառնացող իրական վտանգ, սակայն հանցավորը հանդգնած է եղել հակառակում: Այսինքն, նման բոլոր դեպքերում արարքը որակելու գլխավոր նախապայմաններից մեկը հանցավորի դիտավորության ուղղվածությունն է, այլ ոչ թե տուժողի ընկալումը:

Ավազակության և կողոպուտի հանցակազմերը տարբերվում են նաև օբյեկտիվ կողմի օրենսդրական նկարագրման եղանակով: Մասնավորապես, ավազակությունը, ինչպես հայտնի է, նախատեսված է հատված, իսկ կողոպուտը՝ նյութական հանցակազմով: Համապատասխանաբար, եթե ավազակությունն ավարտված է համարվում ուրիշի գույքին տիրանալու նպատակով կյանքի կամ առողջության համար վտանգավոր բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով հարձակում գործելու պահից, ապա կյանքի կամ առողջության համար ոչ վտանգավոր բռնությամբ զուգորդված կողոպուտը՝ ուրիշի գույքին տիրանալուց հետո գույքը հանցավորի հայեցողությամբ տնօրինելու կամ օգտագործելու հնարավորություն ունենալու պահից:

Ամփոփելով ավազակության և կողոպուտի օբյեկտիվ կողմը բնութագրող առանձնահատկությունների քննարկումը՝ նշենք, որ այս հանցագործությունների դեպքում կարող են տարբերվել նաև ուրիշի գույքին տիրանալու եղանակները: Այսպես, եթե կողոպուտի դեպքում այն միշտ բացահայտ է, ապա ավազակության դեպքում ուրիշի գույքին կարող են տիրանալ ոչ միայն բացահայտ, այլև գաղտնի:

Ավազակության և կողոպուտի դեպքերում գործադրվող բռնության կամ դրա սպառնալիքի բնույթն ու ինտենսիվությունը բնութագրող հատկանիշները հնարավորություն են տալիս սահմանազատելու քննարկվող հանցագործությունները ոչ միայն ըստ օբյեկտիվ կողմի, այլև օբյեկտի: Մասնավորապես, դրանց օբյեկտների հարաբերակցությունը բնութագրելով, պետք է նշել, որ ավազակության և կողոպուտի հիմնական անմիջական օբյեկտները՝ սեփականության կոնկրետ ձևի ապահովմանն ուղղված հասարակական հարաբերությունները, ամբողջովին համընկնում են: Միևնույն ժամանակ, քննարկվող հանցագործությունների պարտադիր ֆակուլտատիվ օբյեկտները տարբերվում են: Այս-

## **ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ ԵՎ**

### **ԴԱՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ**

պես, ավազակության դեպքում այդպիսի օբյեկտ են մարդու կյանքի և առողջության, իսկ բռնությամբ զուգորդված կողոպուտի դեպքում նրա ֆիզիկական անձեռնմխելիության ապահովմանն ուղղված հասարակական հարաբերությունները<sup>4</sup>:

Սուբյեկտիվ կողմի հատկանիշներով ավազակության և բռնությամբ զուգորդված կողոպուտի հանցակազմերը հիմնականում համընկնում են. երկու հանցագործությունն էլ բնութագրվում են ուղղակի դիտավորությամբ և շահադիտական նպատակով, ինչն արտահայտվում է հանցավորի կողմից ուրիշի գույքը վերցնելու և իրենը կամ մեկ ուրիշինը դարձնելու և դրանից նյութական շահ ստանալու ցանկության մեջ: Ընդ որում, ինչպես այս կապակցությամբ արդարացիորեն նշում է Գ.Լ. Կրիգերը, տուժողի նկատմամբ գործադրվող բռնությանը հանցավորի հոգեբանական վերաբերմունքը նշված դեպքերում ունի որոշակի առանձնահատկություն: Մասնավորապես, եթե ուրիշի գույքին տիրանալը հանցավորի գլխավոր, հիմնական նպատակն է, ապա բռնությանը նա վերաբերվում է պարզապես որպես այդ նպատակին հասնելու միջոցի: Սակայն, եթե կողոպուտի դեպքում հանցավորը գիտակցում է, որ կիրառվող ֆիզիկական կամ հոգեկան բռնությունը վտանգավոր չէ տուժողի կյանքի կամ առողջության համար, ապա ավազակություն կատարողի գիտակցության մեջ ընդգրկված է հակառակը՝ որ գործադրվող բռնությունը (սպառնալիքը) վտանգավոր է տուժողի կյանքի կամ առողջության համար<sup>5</sup>:

Տեսության մեջ և իրավակիրառ պրակտիկայում առկա որոշ խնդիրներ կապված են նաև ավազակության ու շորթման հանցակազմերի սահմանազատման հետ:

ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 182-ի համաձայն՝ շորթում է համարվում անձի կամ նրա մերձավորի մասին արատավո-

րող կամ անձի կամ նրա մերձավորի իրավունքներին ու օրինական շահերին էական վնաս պատճառող տեղեկություններ հրապարակելու, ինչպես նաև անձի կամ նրա մերձավորի նկատմամբ բռնություն գործադրելու սպառնալիքով կամ անձի կամ նրա մերձավորի գույքը կամ այլ անձանց տնօրինության կամ պահպանության տակ գտնվող գույքը ոչնչացնելու (վնասելու) սպառնալիքով ուրիշի գույքը կամ գույքի նկատմամբ իրավունքը հանձնելու կամ գույքային բնույթի այլ գործողություններ կատարելու պահանջը: Բնականաբար, քննարկվող հարցի կապակցությամբ առանձին հետաքրքրություն է ներկայացնում շորթման այնպիսի եղանակը, ինչպիսին անձի կամ նրա մերձավորի նկատմամբ բռնություն գործադրելու սպառնալիքն է: Ինչ վերաբերում է բռնության գործադրմանը, որի պարզաբանումը նույնպես կարևոր նշանակություն ունի ավազակության և շորթման հանցակազմերի սահմանազատման համար, ապա այն որպես շորթման ծանրացուցիչ հանգամանք նախատեսված է ՀՀ քր. օր.-ի հոդված 182-ի 2-րդ մասի 1-ին կետում:

Այսպիսով, շորթումը պետք է տարբերել ավազակությունից հետևյալ հատկանիշներով.

Նախ, ավազակության դեպքում բռնությունը կամ դրա սպառնալիքը գործադրվում է որպես գույքը վերցնելու կամ այն պահելու միջոց, մինչդեռ շորթման ժամանակ բռնությունը կամ դրա սպառնալիքը տուժողի կամքի վրա ներգործելու, այն ճնշելու միջոց է:

մալսարանի պրոֆեսորներ Քիս Վան Քերսբերգենը և Ֆրանս Վան Վարդենը փաստում են, որ ժամանակակից հասարակությունը սոցիումի ինստիտուցիոնալ և կազմակերպական ոլորտների կառավարման մեխանիզմների ու ձևերի փոփոխության ակադեմիան է: Արևմտյան գիտնականների կարծիքով, փոխվել են նաև կարգավորման, ղեկավարման և վերահսկողության կենտրոնները, կառավարման կարողությունները (այսինքն հասարակական ոլորտների և խնդիրների ազդեցության ենթակա լինելու աստիճանները) և ոճը (օրինակ՝ որոշումներ ընդունելուն և դրանց իրականացնելու հասարակության տարբեր շերտերի, խմբերի ներգրավվածությունը): Քննարկելով «կառավարում» տերմինի կիրառման ժամանակակից ինը մոտեցումները՝ հեղինակները եզրակացնում են, որ ցանցակացած պարագայում մենք գործունեք հարաբերականորեն ավտոնոմ, սակայն փոխադարձ կախվածություն ունեցող սուբյեկտների հետ, որտեղ հիերարխիան կամ մոնոկրատական լիդերությունը աստիճանաբար կորցնում է կարևորությունը կամ դառնում անկարևոր: Ընունվող որոշումներում պետական կառավարման մարմինները կարող են ներգրավվել, սակայն ոչ բոլոր դեպքերում, իսկ եթե ներգրավվածությունը փաստ է, ապա այն լոկ մասնակիցներից մեկն է: Կառավարման համակարգի փոփոխությունների (shifts in governance) պահանջը հեղինակները պայմանավորում են ինստիտուցիոնալ վերակառուցման և սահմանադրական կարգավորման ուղղությամբ կատարվող նոր, պրոակտիվ ջանքերով, քանի որ տեղի ունեցող զարգացումները հանգեցնելու են ինստիտուցիոնալ-քաղաքական նոր կարգի սահմանման<sup>15</sup>:

Արևմտյան գրականությունում կառավարումը դիտվում է որպես միասնական համակարգ, որտեղ պետությունը մեկ առանձնահատուկ սուբյեկտ է: Հարկ ենք համարում ընդգծել, որ նախկինում «Governance» տերմինը օգտագործվել է միայն պետական կառավարման գործունեության նկատմամբ, այժմ գիտնականները

պնդում են, որ պետությանը թողնվում է հարաբերությունների կարգավորման, ղեկավարման և կանոնակարգման հատուկ ուղիղներ: Իհարկե, հարաբերությունների այսպիսի զարգացումներ հեղինակները արձանագրում են նաև ավանդաբար սահմանափակ սուբյեկտներ և կարգավորման հերարխիկ հարաբերություններ ունեցող վարչական իրավունքում: Վերջիններիս կարծիքով, վարչական իրավունքը պետք է հաշվի նստի մասնավոր սուբյեկտների իշխանության հետ, հակառակ պարագայում՝ այն որպես դիսցիպլին անհամարժեք կլինի այսօրվա իրականությանը<sup>16</sup>:

### **Եզրակացություն**

Շարադրված երկու մոտեցման համեմատությունից հետևում են ժամանակակից պետական կառավարման համակարգերի

կառուցման և գործառնման վերաբերյալ տարբերությունները, որոնք առաջին հերթին վերաբերում են կառավարման հարաբերությունների բնույթին և սուբյեկտային կազմին: Կարծում ենք՝ ներկայացված մոտեցումներից յուրաքանչյուրը առավել մոտ է տվյալ իրականությանը և թելադրված է դրա հրամայականներով: Միաժամանակ, պետական-մասնավոր գործընկերությունը և կառավարման գործընթացում հակակշռող շահերով օժտված սուբյեկտների մասնակցությամբ համապատասխան դաշտի ձևավորումը աստիճանաբար արդիականանում են նաև հետխորհրդային պետություններում, ինչն անհրաժեշտ ենք համարում հաշվի առնել բնական ռեսուրսների պետական կառավարման իրավական ապահովման խնդիրները քննարկելիս:

<sup>1</sup> Տե՛ս Мартин Ван Кревельд, Расцвет и упадок государства/ пер с англ., под ред. Ю.Кузнецова и А. Макеева. /М., 2006, էջ 413-509:

<sup>2</sup> Տե՛ս А.Х. Маликов, Эволюция теории и практики правового и социального государства и их соотношение в историческом развитии. Журнал “Государство и право”, 2009, N 10, էջ 36:

<sup>3</sup> Տե՛ս М.Н. Марченко, Проблемы общей теории государства и права. Учебник в 2 т., т. 1. Государство. 2-е изд., перераб. и доп., М., 2007, էջ 270:

<sup>4</sup> Տե՛ս Վ.Ս. Ներսիսյանց, Իրավունքի և պետության տեսություն: Եր., 2001, էջ 58:

<sup>5</sup> Տե՛ս Общая теория права и государства. Учебник, под ред. В.В. Лазарева, М., 1996, էջ 273-276:

<sup>6</sup> Տե՛ս Томас Гоббс, Левиафан, или материя, форма и власть государства церковного и гражданского. Сочинения в 2 томах. т. 2., М., 1991:

<sup>7</sup> Տե՛ս Джон Лок, О государственном правлении. Избранные философские произведения в двух томах.т.2., М., 1960:

<sup>8</sup> Տե՛ս Г.Б. Агабеков, Жан Боден-Основоположник концепции государственного суверенитета. Научно-аналитический обзор. М., 1990:

<sup>9</sup> Տե՛ս Жан -Жак Руссо, Общественный договор. С. Петербург, 1907:

<sup>10</sup> Տե՛ս Ролан Драго, Административная наука. Перевод с французского В. Л Энтина. М., 1982, էջ 9-16:

<sup>11</sup> Տե՛ս Д. Н. Бахрах, Б.В. Россинский, Ю.Н. Стариков, Административное право: учебник для вузов., 3-е изд., пересмотр и доп., М., 2007, էջ 21:

<sup>12</sup> Տե՛ս В. Е. Чиркин, Государственное управление. Элементарный курс. М., 2002, էջ 12:

<sup>13</sup> Տե՛ս Nikolas Rose and Peter Miller, “Political Power beyond the State: Problematics of Government”, British Journal of Sociology (43), 1992, էջ 173:

<sup>14</sup> Տե՛ս Colin Scott “Analysing Regulatory Space: Fragmented Resources an Institutional Design”. *Public law* (Summer). pp, 2001, էջ 329:

<sup>15</sup> Տե՛ս Kees Van Kersbergen and Frans Van Waarden “Governance” as a bridge between disciplines: Cross-disciplinary inspiration regarding shifts in governances and problems of governability, accountability and legitimacy”. *European Journal of Political Research* (43), 2004, էջ 143-171:

<sup>16</sup> Տե՛ս Jody Freeman “The private role in public governance” *New York University. Law review. (ARTICLES)*. Volume 75, Number 3, June 2000, էջ 545-546:

**ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ ԵՎ  
ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

**THE MAIN SCIENTIFIC ADVANCES FOR THE EXPLORATION  
OF STATE GOVERNANCE SYSTEM AND MECHANISM**

**Gor MOVSISYAN**

*P.h.D. Student of Law Faculty  
of Yerevan State University*

In the presented article with the implication of methodology of comparative analysis the author describes the main advances of Russian and Western sciences to the prospective of system and mechanism of state governance of nature resources.

Within the analysis of scientific material the author mainly emphasizes the shifts in the subjects and nature of the public relations during the process of state governance. For the purpose of highlighting the

main theories, advances referring to the posted problem materials of outstanding scientists representing both Russian and Western schools of state governance and administrative law have been talked about.

The main conclusion made by the author is the following; the level of the improved public relations will require also (a) transformation in paradigms of processes and system of state governance and (b) execution of scientific knowledge in the practice to ensure transparency and participation in the practice of administrative decision-making for the reason of step by step realization of everyone's interest whom the adopted decision addresses its provisions.

## ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՄԻԳՐԱՑԻԱՅԻՆ ՈՐՊԵՍ ՄԻԳՐԱՑԻԱՅԻ ԴԻՄՆԱԿԱՆ ՏԵՍԱԿԻ ԱՌԱՆՁՆԱԴՅԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

### Մանե ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ԵՊՀ քաղաքացիական իրավունքի  
ամբիոնի հայրորդ

Միգրացիան՝ մարդկանց զանգվածա-  
յին տեղափոխությունը, ժամանա-  
կակից աշխարհում իր բնույթով  
դուրս է գալիս առանձին պետությունների  
հոգածության ոլորտից և նտահոգում է ամ-  
բողջ աշխարհին: Ինչպես իրավացիորեն  
նշում է Լ. Կոստինը, մարդկության պատ-  
մությունը մեծամասամբ նաև միգրացիայի  
պատմությունն է, երբ մարդիկ տեղաշարժ-  
վում են մի վայրից մյուսը կյանքի և աշխա-  
տանքի ավելի լավ պայմաններ գտնելու  
հույսով: Գիտատեխնիկական առաջընթաց-  
ին և հետզհետե զարգացող հասարակա-  
կան հարաբերություններին զուգընթաց՝  
կրճատվում է ծնելիության գործակիցը<sup>2</sup>, և  
աճում է միգրացիոն հոսքերի քանակը. օ-  
րինակ՝ ՄԱԿ-ի տվյալների համաձայն՝  
2025թ. Եվրամիությանը իր աշխատաշու-  
կայի կարիքները լրացնելու համար անհ-  
րաժեշտ կլինի 40 միլիոն միգրանտ աշխա-  
տող<sup>3</sup>:

Գիտատեխնիկական առաջընթացի և  
գլոբալիզացիայի պայմաններում այսօր  
աշխարհի բնակչության 2 տոկոսը՝ մոտ  
140 միլիոն մարդ, ապրում է ոչ այն երկ-  
րում, որտեղ ծնվել է<sup>4</sup>:

Դասական առումով նոր պատմական  
ժամանակաշրջանում առանձնացվում է  
միգրացիոն երևույթներ ծնող երկու հիմնա-  
կան խումբ գործոններ՝ քաղաքական և  
տնտեսական՝ աշխատանքային:

Միգրացիոն գործընթացների վերլու-  
ծության առաջին լուրջ փորձերն արել է Է.  
Ռավենստայնը դեռևս 1880 ական թթ., որը  
համարվում է միգրացիայի տեսական հե-  
տազոտությունների նախահայրը: 1885-  
1889 թթ. Լոնդոնում լույս ընծայվեց նրա

«Միգրացիայի օրենքները» և «Միգրացիա-  
յի տեսությունները» աշխատությունները,  
որոնցում սահմանված էին և՛ միգրացիայի  
շարժառիթները, և՛ միևնույն ժամանակ  
միգրացիայի օրինաչափությունները: Նրա  
տեսակետները արդիական են նաև այսօր:  
Է. Ռավենստայնը առաջիններից էր, ով ի-  
րավացիորեն նշեց, որ միգրացիայի հիմ-  
նական գործոնը տնտեսական է, և որ մար-  
դիկ ամենից առաջ ծագում են առևտրի և  
արդյունաբերության կենտրոններ հանդի-  
սացող մեծ քաղաքներ<sup>5</sup>:

Միգրացիայի վրա ազդում է նաև քաղա-  
քական գործոնը, երբ մարդիկ այլ երկրում  
մշտական բնակություն են հաստատում ի-  
րենց քաղաքական հայացքերի համար,  
քանի որ իրենց երկրում ենթարկվում են  
հալածանքների կամ դեմ են պետական  
քաղաքականությանը: Բոլոր դեպքերում  
քաղաքական գործոնը սովորաբար հան-  
գեցնում է ոչ թե միգրանտների, այլ փախս-  
տականների ինստիտուտի առկայությանը,  
որոնք, ի տարբերություն առաջինների,  
ընդմիշտ կտրում են իրենց կապը քաղա-  
քացիության երկրի հետ և փակում հայրե-  
նիք հետդարձի ուղին, այնինչ տնտեսա-  
կան գործոնի առկայության դեպքում միգ-  
րանտները գաղթում են այլ երկիր իրենց  
կենսապայմանների մակարդակը բարձ-  
րացնելու նպատակով, և շատ հաճախ ոչ  
միայն չեն կտրում կապը քաղաքացիու-  
թյան երկրի հետ, այլ երբեմն ինչ-որ գումար  
կուտակելուց հետո նաև վերադառնում են:  
Այնուամենայնիվ, անգամ քաղաքական  
նպատակներով իրենց երկիրը ընդմիշտ  
լքած անձինք, միևնույնն է, սկսում են աշ-  
խատել և ի վերջո վերածվում են աշխա-  
տանքային միգրանտների:

Իր ծավալներով հենց տնտեսական  
կամ աշխատանքային միգրացիան է հա-  
մարվում միգրացիայի հիմնական եղանա-

**ՔԱՂԱՔԱՑԻՎԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ ԵՎ**

**ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

կը, այս առումով մենք լիովին համակարծիք ենք Գ. և Դ. Սվանիձենների հետ, որ միգրացիայի հիմնական պատճառը գործազրկությունն է<sup>6</sup>:

Ընդ որում, հենց աշխատանքային միգրանտների քանակն է գնալով աճում՝ իր ազդեցությունը թողնելով թե՛ միգրանտին ընդունող և թե՛ միգրանտի ծննդավայր երկրի տնտեսության վրա: Օրինակ՝ ՌԴ-ում միգրանտ աշխատողների թիվը 2007թ. հասել էր 2.3 միլիոն մարդու, որը երեք անգամ ավելի էր միգրանտների քանակից 2005թ-ի և 17 անգամ ավելի 1994թ. համեմատ<sup>7</sup>: Հայաստանի Հանրապետության դեպքում նման վիճակագրական տվյալներ չեն մշակվում ոչ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և ոչ էլ ՀՀ տարածքային կառավարման նախարարության միգրացիոն գործակալության կողմից: Բոլոր դեպքերում վերջին տարիների ընթացքում էապես աճել է Հայաստանի Հանրապետություն ժամանող օտարերկրացիների քանակը: Դա ակներև է հետևյալ տվյալներից. 2000թ.՝ ժամանել է 800740 մարդ, 2001թ.՝ 1.016.422, 2002թ.՝ 1.181.308, 2003թ.՝ 1.236.696, 2004թ.՝ 1.479.772, 2005թ.՝ 1.691.688, 2006թ.՝ 1.967.482, 2007թ.՝ 2.587.118, 2008թ.՝ 2.128.938, 2009թ.՝ 2.574.866:

Ինչպես տեսնում ենք վերոնշյալ տվյալներից<sup>8</sup>, վերջին տասը տարիների ընթացքում Հայաստան ժամանած անձանց քանակն ավելացել է ավելի քան երեք անգամ: Ամենայն հավանականությամբ աճել է Հայաստան ժամանած օտարերկրացիների քանակը և հետևաբար միգրանտ աշխատողների քանակը: Օրինակ՝ միայն «Գաֆեճեան թանգարան» հիմնադրամում, որը խոշոր գործատու չէ, 2008թ. դրությամբ աշխատում էր ավելի քան 6 միգրանտ պարսիկ, ամերիկացի, ռուս և անգամ եգիպտացի: «Լոնդոն-Երևան» Կօ ապահովագրական ընկերությունում 2009թ. դրությամբ

աշխատում է ՌԴ կին քաղաքացի, որը ՀՀ իրավական կարգավորման պայմաններում, ի տարբերություն ՀՀ քաղաքացիների, հնարավորություն չի ունեցել օգտվելու հղիության և ծննդաբերության վճարովի արձակուրդի իր իրավունքից, քանի որ օտարերկրացուն սոցիալական ապահովագրության վճարներ ՀՀ-ում չեն տրվում: «Դեյվիդ Հոթսոն Ասոսիեթս Արքիթեթս» ՓԲ ընկերությունում 2007-2008 թթ. մոտ 30 աշխատողներից 3-ը օտարերկրացի էր, այսինքն՝ 10 տոկոսը:

Վերջերս ՀՀ աշխատանքային օրենսգիրքը աշխատանքային օրենսդրության նպատակներից է համարել նաև օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց աշխատանքային իրավունքների և ազատությունների պետական երաշխիքները (հոդված 2)<sup>9</sup> դրանով իսկ, կարծում ենք, կարևորելով միգրանտ աշխատողների իրավունքները կանոնակարգելու խնդիրը:

Աշխատուժի միգրացիայի համաշխարհային փորձի ուսումնասիրությունները թույլ են տալիս առանձացնել դրա հետևյալ առանձնահատկությունները.

1. Միգրացիոն հոսքերը հանգեցնում են ընդունող երկրում գործազրկության աճի, աշխատավարձերի իջեցման և կյանքի պայմանների վատթարացման, քանի որ միգրանտները պատրաստ են աշխատելու քիչ վարձատրությամբ<sup>9</sup>:
2. Աշխատուժի միգրացիան թույլ է տալիս ընդունող պետությանը առանց ծախսերի օգտվել որակյալ և էժան աշխատուժից: Օրինակ՝ վիճակագրական տվյալների համաձայն՝ մեկ մասնագետ պատրաստելը բուհերում արժե 100 000 դոլար<sup>10</sup>: Բնական է՝ նման պայմաններում ավելի ձեռնտու է առանց համապատասխան ծախս կատարելու օգտվել այլ պետությունում կրթություն ստացած մասնագետի աշխատուժից:
3. Աշխատող միգրանտները երկփեղկված են. նրանց մի մասը կատարում է այն աշխատանքը, որը տեղացիները չեն ցանկանում կատարել, իսկ մյուս մասը դաս-

վում է «ուղեղների արտահոսք» կոչվող խմբին, որը կատարում է բարձր որակավորում պահանջող աշխատանք: Որոշ հետազոտողների կարծիքով, էմիգրանտները դատապարտված են երկրորդական շուկայի սերմացու լինելու, նրանց աշխատանքը ծանր է, վտանգավոր, ցածր վարձատրվող և անհեռանկարային: Այսպես, ամերիկացի հետազոտող Ա. Պորտեսը գտնում է, որ միգրացված աշխատուժի «առաջնային մաս» կարելի է համարել նրանց, ովքեր դասվում են են «ուղեղների հոսք» խմբին: Նրանք համեմատաբար հեշտ են ձուլվում: Իսկ միգրանտների զգալի մասը երկրորդական տեղ է զբաղեցնում աշխատուժի շուկայում<sup>11</sup>: «Ուղեղների հոսքի» իմստիտուտը կարևոր է ոչ միայն այն առումով, որ ընդունող պետությունը ծախսեր չի կատարում որակյալ մասնագետներ պատրաստելու համար, այլ նաև այն առումով, որ «միգրանտ ուղեղները» նույն աշխատանքը կատարող տեղացիների համեմատ ավելի քիչ վարձատրություն են պահանջում: Այսպես, Ե.Ֆ. Ավդոկուշինի կատարած հետազոտությունների արդյունքները ցույց են տվել, որ ԱՄՆ –ում մաթեմատիկոսների, համակարգչային ծրագրավորման մասնագետների պահանջարկի մոտ կեսը բավարարվում է էմիգրանտների հաշվին<sup>12</sup>:

4. Միգրանտների զբաղվածությունը որպես կանոն ոչ թե ունիվերսալ է, այլ լոկալ. յուրաքանչյուր երկիր նրանց զբաղվածությունը լուծում է նրան առանձին ոլորտերում օգտագործելով: Էմիգրանտները կազմում են Բելգիայի լեռնագործների 50 տոկոսը, Շվեյցարիայում՝ շինարար բանվորների 40 տոկոսը, Ֆրանսիայում նրանց 25 տոկոսը զբաղված է շինարարության մեջ<sup>13</sup>: Հայաստանում միգրանտների աշխատուժն առավելապես օգտագործվում է սպասարկման ոլորտում՝ ռեստորանային բիզնեսում, խաղատներում, գիշերային ակումբներում:

5. Աշխատուժի միգրացիան ընդունող երկրում գործազրկության մակարդակի աճի և աշխատավարձերի իջեցմանը զուգահեռ ինչ-որ առումով բարձրացնում է ընդ-

հանուր բնակչության կենսամակարդակը: Կ. Ջիմերմանի կարծիքով, էմիգրացիան նպաստում է աշխատանքի շուկայի ճկունությանը նույնիսկ գործազրկության բարձր մակարդակի դեպքում<sup>14</sup>: Աշխատուժի միգրացիան, Ջ. Սայմոնի կարծիքով դրական է ազդում համաշխարհային տնտեսության զարգացման վրա և նպաստում արտադրության գործոնների ավելի արդյունավետ օգտագործմանը անգամ այն դեպքերում, երբ միգրանտ աշխատողների քանակը հանգեցնում է միջին աշխատավարձի նվազմանը: Իր այս դիրքորոշումը հիմնավորելիս նա որպես օրինակ է բերում միգրանտ բժիշկներին, որոնց էժան աշխատուժի պատճառով իջնում է տեղացի բժիշկների վարձատրության չափը, սակայն որի արդյունքում էականորեն շահում է տեղացի բնակչությունը՝ ստանալով ավելի էժան բուժօգնություն<sup>15</sup>:

6. Միգրանտների հետ աշխատանքային հարաբերությունների ձևակերպման գործընթացը տարբերվում է քաղաքացիների հետ աշխատանքային հարաբերությունների կանոնակարգումից: Վ. Ա. և Ե. Վ. Վասիլևների կարծիքով, օտարերկրյա աշխատուժի օգտագործումը ձեռնտու է գործատուներին, քանի որ այս դեպքում նրանք խուսափում են մի շարք բարդություններից՝ կապված աշխատանքի ընդունելու և ազատելու, աշխատանքային պայմանները բարելավելու, աշխատանքային վեճերը լուծելու և աշխատանքային այլ հարաբերությունների հետ<sup>17</sup>: Իսրայելում պարտադիր չէ աշխատանքային պայմանագրի գրավոր ձևը. այն կարող է կնքվել ցանկացած այլ եղանակով և լինել վավեր՝ բացառությամբ միգրանտ աշխատողների հետ կնքվող աշխատանային պայմանագրերի, որոնց գրավոր ձևը չպահպանելու դեպքում պայմանագիրն անվավեր է համարվում<sup>18</sup>: Հայաստանի Հանրապետությունում միգրանտ աշխատողներին աշխատանքի ընդունելու համար «Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի համաձայն՝ անհրաժեշտ է աշխատանքի թույլտ-

## **ՔԱՂԱՔԱՑԻՎԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ ԵՎ**

### **ԴԱՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ**

վություն, սակայն այս նորմը այս պահին չի գործում, քանի որ դրա կիրարկման կարգը սահմանելու մասին ՀՀ կառավարությունը դեռևս որոշում չի ընդունել:

7. Միգրատները ավելի ջանասիրաբար են աշխատում, քան տեղի բնակչությունը. եվրոպայում միգրանտ աշխատողների ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ 1960-ական թվականներին միգրանտերը այստեղ կատարում էին քիչ վարձատրվող և անպատվաբեր աշխատանքներ, իսկ արդեն 2006 թ. նրանք մեծ դեր են խաղում փոքր և միջին բիզնեսում՝ ստեղծելով ընտանեկան կազմակերպություններ, որոնք տեղականների համեմատ աշխատում են 2 և անգամ 3 ժամ ավելի<sup>19</sup>:

Աշխատանքային միգրացիան իր ազդեցությունն է թողնում նաև միգրանտի քաղաքացիության երկրի տնտեսական, որոշ դեպքերում նաև քաղաքական իրավիճակի վրա: ՄԱԿ-ի տվյալների համաձայն՝ միգրանտների կողմից իրենց ընտանիքներին ուղարկվող գումարները տարեկան կազմում են 100 միլիարդ դոլար<sup>20</sup>: Միգրացիայի ազդեցությունը երկրի քաղաքականության վրա հատկապես ակնհայտ է հայկական սփյուռքի օրինակով: Օրինակ՝ հայկական սփյուռքի մասին արտահայտվելիս Ադրբեյջանի նախագահ Յ. Ալիևը նշել է. «Պետք է համախմբվեն նաև Ադրբեյջանից դուրս ապրող ադրբեյջանցիները՝ հանուն Ադրբեյջանի հանրապետության: Օրինակ՝ ինչքան համախմբված է հայկական սփյուռքը, և ինչպես է նա օգնում Հայաստանի Հանրապետությանը լուծելու իր տնտեսական և անգամ քաղաքական խնդիրները: Հայաստանի ազգային շահի տեսանկյունից դա հիանալի է, սակայն մենք էլ պետք է օրինակ վերցնենք և սովորենք նրանցից»<sup>21</sup>:

8. Այլ առանձնահատկություններ: Դ.Վ. Չերնյակևան ի հայտ է բերել Իսրայելի աշխատանքային իրավունքի զարգացման

միտումները, դրանց շարքին դասելով նաև աշխատավոր միգրանտների օրինականացման գործընթացը<sup>22</sup>: Ա.Ն. Չաշինը խորհուրդ է տալիս միգրանտների հետ կնքվող աշխատանքային պայմանագրերում սահմանել աշխատավարձի ցածր չափ՝ ոչ թե միգրանտի իրավունքները ոտնահարելու, այլ ընդհակառակը՝ պաշտպանելու նպատակով, քանի որ բարձր աշխատավարձի դեպքում զբաղվածության հարցերով կազմակերպությունները կարող են նպատակահարմար չհամարել միգրանտի հետ աշխատանքային պայմանագրի կնքումը՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ այդ աշխատանքը կարող է առաջարկվել նաև ՌԴ քաղաքացիներին<sup>23</sup>:

Ներկայացված առանձնահատկությունները համադրելով Հայաստանի Հանրապետությունում միգրանտ աշխատողների աշխատանքի առանձնահատկությունների հետ՝ կարող ենք եզրահանգել, որ Հայաստանում միգրանտ աշխատողների աշխատանքի իրավական կարգավորման բացակայության պայմաններում շատ հաճախ նրանց հետ առհասարակ չի կնքվում աշխատանքային պայմանագիր, ավելին՝ միգրանտների աշխատուժն օգտագործող գործատուները խուսափում են նրանց մասին գրավոր տեղեկատվություն տրամադրելուց:

Փաստորեն օտարերկրացիների զբաղվածությունը Հայաստանում նույնպես կրում է լոկալ բնույթ, և նրանք առավելապես կատարում են այնպիսի աշխատանք, որը Հայաստանի Հանրապետության քաղաքացիները կամ չեն կարող կատարել, կամ չեն ցանկանում. օրինակ՝ չինական ռեստորանային ցանցում խոհարարները չինացիներ են, և գործնականում այդ աշխատանքը չի կարող կատարվել Հայաստանի Հանրապետության քաղաքացու կողմից: Այս առումով, կարծում ենք, աշխատող միգրանտների քանակի ավելացումը Հայաստանի Հանրապետությունում չի կարող էական ազդեցություն թողնել Հայաստանի Հանրապետությունում գոր-



ծագրկության մակարդակի վրա:

Իհարկե, Հայաստանի Հանրապետությունը չի կարող դասվել միգրանտների գրավող երկրների շարքում, սակայն թե՛ Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերը և թե՛ օտարերկրացիների աշխատանքային իրավունքների ու ազատությունների պետական երաշխիքները ՀՀ աշխատանքային օրենսգրքի նպատակ համարելու օրենսդրի մոտեցումը, կարծում ենք, արդեն իսկ խոսում են այն մասին, որ Հայաստանի Հանրապետությունը կարևորում է միգրանտների աշխատանքի կազմակերպման հարցերի իրավական կարգավորման խնդիրը, թեև այս պահին Հայաստանի Հանրապետությունում աշխատանքային միգրացիայի հիմնական առանձնահատկությունը իրավական կարգավորման լիարժեք բացակայությունն է: Ավելին՝ աշխատանքային միգրացիան անգամ չի գրավել պետական լիազոր մարմինների ուշադրությունը՝ թեկուզ միայն վիճակագրական տեղեկատվություն ձևավորելու տեսանկյունից:

Վերջապես, աշխատանքային միգրանտների՝ օտարերկրացիների հետ հարաբերությունների հազվադեպ հանդիպող առանձնահատկություններից է այն, որ

նրանց համար գործատուն չի վճարում սոցիալական ապահովագրության վճարներ, և արդյունքում նրանք զրկվում են ժամանակավոր անաշխատունակության դեպքերում նպաստ ստանալու իրավունքից, և անլուծելի խնդիր է նրանց աշխատանքային ստաժ կուտակելու հարցը:

Ամփոփելով վերը շարադրվածը՝ կարող ենք եզրակացնել, որ համաշխարհային աշխատանքային միգրացիայի առանձնահատկությունները հիմնականում բնորոշ են նաև Հայաստանի Հանրապետությանը, սակայն հաշվի առնելով Հայաստանի Հանրապետությունում աշխատանքային միգրանտների քանակի սակավությունը, ինչպես նաև աշխատանքային միգրացիայի իրավական կարգավորման բացակայությունը՝ Հայաստանում այս առանձնահատկություններից ոչ բոլորն են լիարժեք կիրառելի (օրինակ՝ Հայաստանի Հանրապետության դեպքում աշխատանքային միգրացիան չի ազդում գործազրկության աճի վրա), իսկ որոշ առանձնահատկություններ առհասարակ չեն գործում (օրինակ՝ օտարերկրացիներին աշխատանքի ընդունելու գործընթացը չի տարբերվում Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին աշխատանքի ընդունելու կարգից):

<sup>1</sup> St'u Костин Л. Миграция и мигранты// Человек и труд. 2001. N 8, էջ 61:

<sup>2</sup> Սկսած անցյալ դարի 60-ական թթ.՝ Եվրամիության բնակչության ծնելիության գործակիցը կրկնակի նվազել է: Ըստ որոշ կանխատեսումների՝ առաջիկա 50 տարիների ընթացքում այն կկազմի աշխարհի բնակչության 9 տոկոսը, այժմյան 13-ի փոխարեն/ Revue d economie politique. 2001.N4, էջ 59:

<sup>3</sup> St'u Никольская Г.К. Иммигранты на рынке труда развитых стран // Трудовое право, И 4/ 2002, էջ 75:

<sup>4</sup> St'u Никольская Г.К., նույն տեղը:

<sup>5</sup> St'u E. Ravenstein. The Laws of Migration;

Journal of the Royal Society, June 1885, էջեր 167-227:

<sup>6</sup> St'u Г. Сванидзе, Д. Сванидзе. Эмиграция из Грузии и ее причины. /Миграции на Кавказе.Материалы конференции. / Ред. А.Искандарян.- Ер.:КИСМИ, 2003. էջ 129:

<sup>7</sup> St'u Хабриева Т.Я. Миграционное право России: теория и практика.-М.: Юридическая фирма КОНТРАКТ, 2008. 336с, էջ 114:

<sup>8</sup> Աղյուսակի տվյալները վերցրել ենք միգրացիոն գործակալության պաշտոնական կայքից՝ [http://backtoarmenia.am/?hcat=85&scat=88:](http://backtoarmenia.am/?hcat=85&scat=88)

**ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ ԵՎ  
ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

- <sup>9</sup> Տե՛ս Թ.Ն. Դոխուաևա. Миграция населения./ Трудовое право, И 7/ 2006, էջ 13:
- <sup>10</sup> Տե՛ս Թ.Ն. Դոխուաևա, նույն տեղը, էջ 12:
- <sup>11</sup> Տե՛ս Portes A., Min Zhou: Should Immigrants Assimilate?; Public Interest, Summer 1994, էջ 13:
- <sup>12</sup> Տե՛ս Авдокушин Е. Ф. Международные экономические отношения. Четвертое издание. М., 1999. էջ 142:
- <sup>13</sup> Տե՛ս Киреев А. Международная экономика. Часть 1, Москва., 1997, էջ 322:
- <sup>14</sup> Տե՛ս Revue d economie politique. 2001, N4, էջ 581:
- <sup>15</sup> Տե՛ս Simon J. The Economic Determinats of Migration, D.C.: Brookings Institution, 1989, էջ 84-95:
- <sup>16</sup> Տե՛ս В.А. Васильев, Е.В. Васильева. Трудовые правоотношения с иностранными гражданами. / Трудовое право, И 7/ 2006, էջ 38:
- <sup>17</sup> Տե՛ս Д.В. Черняева. Трудовое право Израиля. Трудовое право, И 7/ 2006, էջ 72:
- <sup>18</sup> Տե՛ս Թ.Ն. Դոխուաևա., նշվ. աշխ., էջ 13:
- <sup>19</sup> Տե՛ս Թ.Ն. Դոխուաևա., նշվ. աշխ., էջ 12:
- <sup>20</sup> Տե՛ս Азербайджан-родина всех азербайджанцев. Речь Президента Азербайджанской республики Гейдара Алиева на Учредительном собрании Всероссийского конгресса азербайджанцев. Баку, 2000, с 104-110, 134:
- <sup>21</sup> Տե՛ս Д.В. Черняева. Трудовое право Израиля./ Трудовое право, И 7/ 2006, էջ 70:
- <sup>22</sup> Տե՛ս А.Н. Чашин. Юридическое сопровождение адвокатом процесса привлечения иностранной рабочей силы./ Трудовое право, И 8/ 2006, էջ 26:

## LABOR MIGRATION AS A MAIN TYPE OF MIGRATION AND ITS SPECIFICATIONS

**Mane KARAPETYAN**

*Department of civil law  
3-rd year aspirant*

---

**W**ithin the framework of Article the migration studied as a historical phenomenon and its cause of the main factors.

More detailed the author referred to the labor migration, considering it as the main type of migration.

In the Article were brought examples that the employers of Republic of Armenia receive migrant workers to work, as well as the number of foreigners every year increase in stats statistics.

The author singled out the following features of labor migration.

1. Migration flows lead to increase of unemployment in the host country, reduction in salaries and deteriorating living conditions, since the migrants were ready to work in small salaries.

2. Labor migration allows the receiving state without the use of high-quality execution costs and cheap labor.

3. Working migrants split by some of them perform the work that citizens do not want to make, and the other part is viewed as a "brain drain" by making work that requires a high degree.

4. Employment of migrants as a rule is not universal but local, in each country, their

employment is mostly used to separate fields.

5. Labor migration in the host country growth and unemployment reduction of salaries along with some increases in terms of total population living standards.

6. Migrants working relationship with the formulation process is different from working relationship with the citizens of settlement:

7. Migrants are working more diligently than the local population.

Comparing the features mentioned in the Republic of Armenia characteristics of migrant workers, the author came to the conclusion that migrant workers work in the absence of a legal settlement with them very often in general not signed employment contract.

Actual employment of foreigners in Armenia also carries the local character and they mostly carry out such work, which is the Republic of Armenia to the citizens can not or do not want to make.

Within the framework of Article the author also speaks about the question migrant labor organizing the Republic of Armenia on the number of international agreement ratified is growing, so the Republic of Armenia attaches great importance to the organization of migrant labor issues, legal settlement, though this is still relevant international treaties ensuring the application of sub-legislative acts were not accepted.

---

**ՔԱՂԱՔԱՑԻՎԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ ԵՎ**

**ԴԱՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ**

**Զեռքբերման վաղեմութունը քաղաքացիական  
իրավունքում**

**Տիգրան ԽԱԶԻԿՅԱՆ**

*ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետ  
3-րդ կուրսի ուսանող*

**Յ**այաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 187-րդ հոդվածը, ի թիվս սեփականության իրավունքի առաջացման այլ հիմքերի, մատնանշում է ձեռքբերման վաղեմություն ինստիտուտը: Պետք է նշել, որ ձեռքբերման վաղեմության ինստիտուտին վերաբերող մի շարք հարցեր քաղաքացիական իրավունքի տեսության մեջ դեռևս միանշանակորեն չեն ընկալվում և վերջնական լուծում չեն ստացել:

Մինչև քաղաքացիական օրենսգրքի 187-րդ հոդվածին անդրադառնալը նպատակահարմար ենք համարում նախ անդրադարձ կատարել այս հետաքրքիր ինստիտուտի նախապատմությանը՝ հարցն առավել հանգամանորեն քննարկելով աշխարհի մի շարք երկրների քաղաքացիական օրենսդրության հիմքը հանդիսացող հռոմեական մասնավոր իրավունքում:

Հռոմեական մասնավոր իրավունքում, ինչպես և մեր քաղաքացիական օրենսգրքում տարբերակում էին սեփականության իրավունքի ձեռքբերման եղանակների 2 խումբ՝ սկզբնական և ածանցյալ:

Սեփականության իրավունքի ձեռքբերման սկզբնական եղանակի դեպքում գույքի նկատմամբ սեփականության իրավունքը ձեռք էր բերվում առաջին անգամ կան նախկին սեփականատիրոջ իրավունքից անկախ: Ածանցյալ եղանակի դեպքում գույքի նկատմամբ սեփականության իրավունք ձեռք էր բերվում նախկին սեփականատիրոջ կամքով՝ իբրև հիմք ընդունելով նախորդ սեփականատիրոջ իրավունքը: Ածանցյալ եղանակները կապված էին ինչ-

պես միակողմանի կամային ակտերի (օր՝ կտակի միջոցով սեփականատիրոջ մահից հետո նրան պատկանող գույքը ժառանգաբար փոխանցվում էր կտակի մեջ նշված անձին), այնպես էլ երկկողմանի կամային ակտերի հետ (օր. առուծախի և նվիրատվության պայմանագրերը)<sup>1</sup>:

Ըստ որում, վերը հիշատակված դասակարգումը իր հիմնական կողմերով պահպանվել է մեր քաղաքացիական օրենսդրությամբ:

Հիշյալ դասակարգումը, իհարկե, ուներ նաև գործնական բավական ակտիվ նշանակություն այն առումով, որ սկզբնական եղանակով սեփականության իրավունքի առաջացման դեպքում գործում էր «ոչ ոք չի կարող այլ անձի փոխանցել իրեն պատկանող իրավունքներից ավելի իրավունքներ» կանոնը, իսկ ածանցյալ եղանակի դեպքում այդ կանոնը չէր գործում, այսինքն՝ սեփականության իրավունքն առաջանում էր առանց որևէ սահմանափակումների<sup>2</sup>:

Ձեռքբերման վաղեմության՝ իբրև տիրագուրկ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի առաջացման հիմքի մասին խոսելիս Գայոսը նշում էր, որ սեփականության իրավունքի ձեռքբերումը վաղեմության հետ կապելը հիմնված է հանրային շահի վրա (bono publico) և նպատակ է հետապնդում թույլ չտալու, որ սեփականության իրավահարաբերություններում տևական ժամանակահատվածի ընթացքում պահպանվեն անորոշությունն ու անվստահությունը<sup>3</sup>: Հռոմեական իրավունքում շարժական իրերի համար որպես ձեռքբերման վաղեմության ժամկետ սահմանված էր 1 տարին, իսկ անշարժ գույքի համար՝ 2 տարին<sup>4</sup>:

Այս առումով պետք է նշել, որ Հայաստանի Հանրապետության քաղաքացիա-

կան օրենսգիրքը իբրև ձեռքբերման վաղեմության ժամկետ սահմանում է 10 տարին: Այսպես, քաղաքացիական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ տիրագուրկ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը կարող է ձեռք բերվել ձեռքբերման վաղեմության ուժով: Ըստ որում, սույն նորմը կիրառելի չէ ինքնակամ կառույց հանդիսացող անշարժ գույքի նկատմամբ: Քաղաքացիական օրենսգիրքը հստակորեն նախատեսում է, թե որ գույքն է համարվում տիրագուրկ: Այսպես, քաղաքացիական օրենսգրքի 178-րդ հոդվածի 1-ին մասով տիրագուրկ է համարվում այն գույքը, որը չունի սեփականատեր, կամ որի սեփականատերն անհայտ է կամ հրաժարվել է նրա նկատմամբ սեփականության իրավունքից: Իսկ տիրագուրկ շարժական գույքի նկատմամբ սեփականության իրավունքը կարող է ձեռք բերվել միայն օրենսգրքի 179-186-րդ հոդվածի կանոններով: Տիրագուրկ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը ճանաչելու հիմքերն ու կարգը սահմանվում են ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով:

Ձեռքբերման ինստիտուտի էությունը սահմանված է քաղաքացիական օրենսգրքի 187-րդ հոդվածով, որի 1-ին մասի համաձայն՝ քաղաքացին կամ իրավաբանական անձը, որն անշարժ գույքի սեփականատերը չէ, սակայն այն 10 տարվա ընթացքում բարեխղճորեն, բացահայտ և անընդմեջ տիրապետում է որպես սեփական գույք, այդ գույքի նկատմամբ ձեռք է բերում սեփականության իրավունք:

Պետք է նշել, որ այս դրույթը այնքան էլ հաջող ձևակերպված չէ: Ձևակերպումից, ինչպես նշում է Տ.Կ. Բարսեղյանը, կարելի է եզրակացնել, որ ձեռքբերման վաղեմությունը կարող է հանդիսանալ ցանկացած, այդ թվում՝ պետական գույքի նկատմամբ սեփականության իրավունքի առաջացման հիմք՝

Անհրաժեշտ է նկատել, որ ձեռքբերման վաղեմության ինստիտուտի հարցում հատկապես կարևորվում է տիրապետման իրավունքը: Տիրապետման իրավագործությունը՝

որպես սեփականատիրոջ իրավագործությունների եռամիասնականության տարր, գույքն իր տնտեսական իշխանության ներքո, սեփական տնտեսությունում պահելու օրենքի վրա հիմնված հնարավորությունն է:

Խոսելով ձեռքբերման վաղեմության դեպքում անձի տիրապետման իրավունքի բովանդակության հարցի մասին՝ քաղաքացիական իրավունքի հայտնի տեսաբան Յու. Կոչետկովան նշում էր, որ ձեռքբերման վաղեմության ինստիտուտի գործողությունը տարածվում է միայն ուրիշի գույքի փաստացի անտիտղոս տիրապետության վրա, որի պատճառով կիրառելի չէ երկար ժամկետով վարձակալած, տնտեսվարման կամ օպերատիվ կառավարման իրավունքի հանձնված գույքի նկատմամբ: Բայց, միաժամանակ, քաղաքացիական օրենսգիրքը ձեռքբերման վաղեմության ինստիտուտի իրականացման համար պահանջում է նաև գույքը որպես սեփական գույք տիրապետելու պահանջը, այսինքն՝ գույքը տիրապետողը պետք է իրականացնի դրա կառավարումը, հոգ տանի դրա սեփականմամբ, ինչպես կպահպաներ իր սեփական գույքը: Իհարկե կարելի է ենթադրել, որ անձը, որը տիրապետել է որոշակի գույքի աշխատանքային, վարձակալության, անհատույց օգտագործման, հավատարմագրային կառավարման կամ պայմանագրային նմանատիպ այլ հիմունքներով, չի կարող տվյալ ժամանակահատվածում այդ գույքի նկատմամբ ձեռք բերել սեփականության իրավունք ձեռքբերման վաղեմության հիմքով, քանի որ պայմանագրի ուժով նա գույքը տիրապետել է ոչ թե որպես սեփական, այլ որպես սեփականության իրավունքով ուրիշին պատկանող գույք: Բայց այնուամենայնիվ կարծում ենք, որ այս նորմի միատեսակ ու միանշանակ ընկալման համար անհրաժեշտ է հավելել դրույթ, համաձայն որի՝ այդ գույքի նկատմամբ անձի ունեցած տիրապետման իրավունքը պետք է հիմնվի այդ գույքի փաստացի անտիտղոս տիրապետության վրա: Վերը հիշատակված օրինակում վարձակալի տիրապետման իրավունքը տիտ-

## **ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ ԵՎ**

### **ԴԱՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ**

ղոսային տիրապետում է, պաշտպանվում է օրենսգրքով (սեփականատիրոջ կողմից իրեն սեփականության իրավունքով պատկանող գույքի նկատմամբ տիրապետման իրավունքը կոչվում է տիտղոսային տիրապետում):

Ըստ որում, հարցի նկատմամբ հետաքրքիր նոտեցում է ցուցաբերում ՌԿրահնան: ՌԿրահնայի քաղաքացիական օրենսգրքի 344-րդ հոդվածի համաձայն՝ անձը, որը բարեխղճորեն ձեռք է բերել ուրիշի գույքը և շարունակում է բացահայտ և անընդմեջ տիրապետել անշարժ գույքը 10, իսկ շարժական գույքը՝ 5 տարվա ընթացքում, այդ գույքի նկատմամբ ձեռք է բերում սեփականության իրավունք (ձեռքբերման վաղեմություն), եթե այլ բան նախատեսված չէ նույն օրենսգրքով: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե անձը գույքը սկսել է տիրապետել գույքի սեփականատիրոջ հետ կնքված պայմանագրի հիման վրա, և պայմանագրի ժամկետի ավարտից հետո գույքի սեփականատերն այն վերադարձնելու պահանջ չի ներկայացրել, ապա անձն այդ գույքի նկատմամբ ձեռք է բերում սեփականության իրավունք ձեռքբերման վաղեմության ուժով՝ անշարժ գույքի դեպքում հայցային վաղեմության ժամկետի ավարտից 15, իսկ շարժականի դեպքում՝ 5 տարի անց:

Քննարկվող հարցի կապակցությամբ հայտնելով իր դիրքորոշումը՝ ՀՀ սահմանադրական դատարանը իր 21.11.2006թ. ՍԴՈ 667 թվակիր որոշման պատճառաբանական մասի 6-րդ կետում արձանագրում է, որ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի ձեռքբերման համար պահանջվում է այդ գույքի՝ որպես սեփական ունեցվածքի բարեխիղճ, բացահայտ, անընդմեջ, տևական տիրապետում: Այս նախապայմանները բացառում են ուրիշի գույքը որպես սեփականություն ձեռք բերելու հնարավորությունը, որին տիրապետողը տիրում է և օգտագործում մասնավորապես վարձակալության, պահատվու-

յան կամ այլ պայմանագրերի հիման վրա՝ թեկուզև բարեխիղճ, բացահայտ, անընդմեջ և երկարատև, սակայն իր պայմանագրային պարտավորությունների գիտակցմամբ այն համարելով ուրիշի գույք և այն տիրապետելով ոչ որպես սեփական գույք<sup>7</sup>:

Նշենք նաև մեկ այլ կարևոր հանգամանք: Քաղաքացիական օրենսգրքի 187-րդ հոդվածի 2-րդ մասը հստակորեն նախատեսում է նաև, որ տիրապետման վաղեմությունը վկայակոչող անձը կարող է իր տիրապետման ժամկետին միացնել նաև այն ժամանակը, որի ընթացքում այդ գույքին տիրապետել է այն անձը, որի իրավահաջորդն է եղել ինքը: Այսինքն՝ հոդվածի այս մասի իմաստով ձեռքբերման վաղեմության 10 տարվա ժամկետը հաշվարկվում է՝ ներառելով ոչ միայն անձի կողմից անմիջականորեն այդ նույն գույքը տիրապետելու ժամկետը, այլ նաև տվյալ անձի իրավանախորդի կողմից այդ նույն գույքը բարեխղճորեն, բացահայտ և անընդհատ տիրապետելու ժամկետը, եթե այդպիսի իրավանախորդ եղել է:

Այստեղ միանշանակ է, որ օրենսդիրը հարցին ճիշտ կարգավորում է տվել: Հազիվ թե տրամաբանական և հիմնավորված լիներ այն իրադրությունը, երբ ձեռքբերման վաղեմության 10 տարվա ժամկետը ընդհատվեր այն դեպքում, երբ անձը, որը գույքին՝ որպես սեփական գույք բացահայտ, բարեխղճորեն և անընդմեջ տիրապետեր, ենթադրենք 6 տարի, և մահանալով նրա իրավահաջորդները իրավունք չունենային այդ 6 տարվա ժամկետին հաշվակցել նաև իրենց կողմից այդ գույքը՝ որպես սեփական գույք բարեխղճորեն, բացահայտ և անընդմեջ տիրապետելու 4 տարվա ժամկետը՝ դրա նկատմամբ ձեռք բերելով սեփականության իրավունք ձեռքբերման վաղեմության ուժով:

Հարկ է նշել, որ քաղաքացիական օրենսգրքի 187-րդ հոդվածի 3-րդ մասը նախատեսում է նաև ձեռքբերման վաղեմության ժամկետի ընթացքում անձի տիրապետման իրավունքի պաշտպանության կարևորագույն երաշխիք՝ նշելով, որ մինչև ձեռքբերման վաղեմության ուժով գույքի

նկատմամբ սեփականության իրավունք ձեռք բերելը գույքը՝ որպես սեփականություն տիրապետող անձն իրավունք ունի պաշտպանել այն երրորդ անձանցից, որոնք գույքի սեփականատերը չեն և օրենքով կամ պայմանագրով նախատեսված այլ հիմքով դրա նկատմամբ չունեն տիրապետման իրավունք: Սա էլ, իհարկե, կարևոր նշանակություն ունի սեփականության իրավունքի եռանիսանականության տարրերից մեկը հանդիսացող տիրապետման իրավունքի պաշտպանության համար:

Քաղաքացիական օրենսգիրքը սահմանում է նաև, թե որ պահից է ծագում անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը ձեռքբերման վաղեմության դեպքում: Այսպես, քաղաքացիական օրենսգրքի 187-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը ձեռքբերման վաղեմության ուժով գույքը ձեռք բերած անձի մոտ ծագում է այդ իրավունքի պետական գրանցման պահից:

Պետք է նշել, որ տարբեր ժամանակներում ձեռքբերման վաղեմության ինստիտուտը էական փոփոխություններ է կրել: Բայց ինչպես արդարացիորեն նշում է Ա.Բ. Բաբաևը, անկախ տարբեր ժամանակներում այս ինստիտուտի հաճախակի փոփոխություններից, բոլոր ժամանակներում այն ուղղված է եղել առաջին հերթին իրավունքում անհստակությունների վերացմանը<sup>8</sup>:

Այդպիսի նշանակություն ունի այն նաև ներկայումս: ՀՀ սահմանադրական դատարանը իր 21.11.2007 թվականի ՍԴՈ-667 թվակիր որոշման պատճառաբանական մասի 5-րդ կետում ըստ էության անդրադառնալով ձեռքբերման վաղեմության ինստիտուտը սահմանող ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 187-րդ հոդվածին, նշում է, որ ձեռքբերման վաղեմության ինստիտուտը նպատակ ունի իրավաբանական նշանակություն հաղորդելու գոյություն ունեցող փաստացի հարաբերություններին և նպաստելու քաղաքացիական շրջանառության կայունությանը<sup>9</sup>: Նպատակահար-

մար կլիներ անդրադառնալ նաև ՀՀ դատական համակարգի բարձրագույն դատական աստիճանի դիրքորոշմանն այս հարցի շուրջ: Վճռաբեկ դատարանը, իր 23.05.2008թ. 3-367 (ՎԴ) թվակիր որոշման մեջ հայտնելով իր իրավական դիրքորոշումը, նշում է, որ ձեռքբերման վաղեմությունը օրենքով նախատեսված որոշակի ժամկետը լրանալու և որոշակի պայմանների վրա հասնելու ուժով մեկ անձի կողմից սեփականության իրավունքի ձեռքբերման, իսկ մյուսի կողմից այդ իրավունքի դադարման միջոց է<sup>10</sup>:

Քաղաքացիական օր-ի 187-րդ հոդվածից կարելի է առանձնացնել ձեռքբերման վաղեմության ինստիտուտի հետևյալ հատկանիշները՝ բարեխղճություն, բացահայտություն, անընդմեջություն: Փորձենք ներկայացնել սրանցից յուրաքանչյուրի առանձնահատկությունները:

**Բարեխղճություն:** Նախ պետք է նշել, Քաղ. օրենսգրքի 187-րդ հոդվածում չի նշվում, թե որ դեպքում է տիրապետումը համարվում բարեխիղճ, չի տալիս բարեխղճության ընդհանուր սահմանումը, չնայած օրենսգրքի 275-րդ հոդվածը սահմանում է բարեխիղճ հասկացությունը բարեխիղճ ձեռքբերման համատեքստում: Այս տեսակետից օբյեկտիվ անհրաժեշտություն է առաջանում քննարկելու այս երկու ինստիտուտների հարաբերակցության հարցը, ինչպես նաև այն հանգամանքը, թե արդյոք բարեխղճության տրված հասկացությունը կիրառելի է նաև ձեռքբերման վաղեմության համար, թե այն ունի միայն կոնկրետ ինստիտուտային նշանակություն:

Քաղ. օր-ի 275-րդ հոդվածի 1-ին մասը նախատեսում է, որ եթե գույքը հատուցմամբ ձեռք է բերվել այդ գույքն օտարելու իրավունք չունեցող անձից, որի մասին ձեռք բերողը չգիտեր և չէր էլ կարող իմանալ (բարեխիղճ ձեռք բերող), ապա սեփականատերն իրավունք ունի ձեռք բերողից տվյալ գույքը պահանջելու միայն այն դեպքում, երբ գույքը կորցրել է սեփականատերը կամ այն անձը, ում այդ գույքի սեփականատերը հանձնել է տիրապետման, կամ

## **ՔԱՂԱՔԱՑԻՎԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ ԵՎ**

### **ԴԱՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ**

այն հափշտակվել է մեկից կամ մյուսից, կամ նրանց տիրապետումից դուրս է եկել այլ ճանապարհով՝ անկախ իրենց կամքից: Այսինքն՝ այն դեպքում, երբ գույքը դուրս է եկել սեփականատիրոջ տիրապետումից իր կամքով, այն բարախիղճ ձեռք բերողից այլևս հետ պահանջվել չի կարող: Այս հարցի շուրջ հետաքրքիր մտտեցում է առաջ քաշում Կ.Ի. Սկլոնսկին՝ նշելով, որ բարախիղճ ձեռքբերողի դեմ վինդիկացիոն հայց ներկայացնելը չնայած հանգեցնում է հատուցմամբ ձեռք բերված իրը վերադարձնելու մերժման, սակայն մինևույն ժամանակ փաստում է, որ սեփականատերը հայցվորն է: Յետևաբար, պատասխանողը, իրը իր մոտ պահելով, այլևս չի կարող իրեն սեփականատեր համարել<sup>11</sup>: Այլ ուշագրավ տեսակետ է արտահայտում Դ.Ի.Մեյերը՝ նշելով, որ եթե ուրիշի գույքի բարախիղճ տիրապետողը տեղեկացված է սեփականատիրոջ կողմից իր նկատմամբ հարուցված հայցի մասին, ապա նա այդ պահից չի կորցնում իր բարախիղճությունը, չնայած պատասխանատվության առումով հայտնվում է այնպիսի դրության մեջ, որ նման է անբարախիղճ տիրապետողի իրավական դրությանը<sup>12</sup>: Այսպիսով, եթե տիրապետումը սկսել է բարախիղճորեն, հետագա փոփոխությունները չեն կարող հանգեցնել ձեռքբերման վաղեմությունից բխող իրավունքների չիրականացման: Վերջապես, Վ.Ս.Խվոստովը, անդրադառնալով այս հարցին, նշում է, որ «Bona fides»-ի (բարախիղճ ձեռքբերում) առկայությունը պահանջվում է միայն տիրապետման ձեռքբերման պահին: Յետագայում bona fides-ի կորուստը չի վնասում ձեռքբերման վաղեմությանը<sup>13</sup>: Խվոստովի այս տեսակետը նույնպես բավական մեծ տարածում է ստացել քաղաքացիական իրավունքի տեսության մեջ: Ձեռքբերման վաղեմության հիմնախնդրի էությունը ճիշտ ընկալելու համար անհրաժեշտ է նկատի ունենալ մի շարք կարևոր հանգամանքներ: Նախ, ինչպես արդեն նշվել է, քաղ. օր-ը ձեռքբեր-

ման վաղեմության ուժով սեփականության իրավունքի առաջացում նախատեսում է միայն անշարժ գույքի նկատմամբ: Անշարժ գույքի իրավական ռեժիմի կարևոր բնութագրիչներից է դրա նկատմամբ իրավունքների պետական գրանցումը, որի կենտրոնական սկզբունքներից է հրապարակայնության սկզբունքը: Այսինքն՝ ակնհայտ է, որ հնարավոր չէ, որ անձը հատուցմամբ ձեռք բերի անշարժ գույք դա օտարելու իրավունք չունեցող անձից և չիմանա այդ մասին: Սակայն ձեռքբերման վաղեմության դեպքում ամենևին էլ գույքի օտարման իրավունք չունեցող անձի կողմից դրա ձեռքբերումը չէ: Ակնհայտ է, որ այս առումով բարախիղճության էությունն ու կիրառման ոլորտը այս երկու ինստիտուտների դեպքում չեն համընկնում: Բարախիղճ ձեռքբերման դեպքում համապատասխան գույքը հատուցմամբ ձեռք է բերվում դրա օտարման իրավունք չունեցող անձից, և ձեռքբերողը չզիտեր և չէր էլ կարող իմանալ այդ մասին, և հենց այստեղ է դրա բարախիղճությունը, մինչդեռ ձեռքբերման վաղեմության դեպքում անձն իր գործողություններով է ձեռնամուխ լինում համապատասխան անշարժ գույքը տիրապետելուն և օգտագործելուն: Անձը գիտի, որ գույքն իրենը չէ, սակայն ողջ խնդիրը այն է, որ այդ գույքի սեփականատերը չի առարկում անձի նման գործողությունների դեմ օբյեկտիվ (համապատասխան վայրից տևական բացակայում) կամ սուբյեկտիվ (անտարբերություն) պատճառներով<sup>14</sup>: Կարծում ենք՝ ակնհայտ է բարախիղճության տարակիրառությունը քաղաքացիական օրենսգրքի այս երկու ինստիտուտներում:

Այսպիսով, ձեռքբերման վաղեմության դեպքում խոսքը կարող է լինել բացառապես տիրապետման բարախիղճության, այլ ոչ թե ձեռքբերման բարախիղճության մասին: Իսկ ինչպես սահմանված է ՌԴ օրենսդրությամբ, երբ խոսքը վերաբերում է ձեռքբերման վաղեմության ուժով շարժական գույքի նկատմամբ սեփականության իրավունքի առաջացմանը, ապա խոսքը պետք է լինի ձեռքբերման բարախիղճության մասին:



Եվս մի կարևոր հանգամանք: Քաղաքացիական իրավունքի հայտնի մասնագետ Կ.Ի. Սկլովսկին այն մոտեցումն է առաջ քաշում, որ եթե առկա է վինդիկացիայի հնրավորություն, ձեռքբերման վաղեմության ժամկետն սկսվում է վինդիկացիոն հայց ներկայացնելու ժամկետի ավարտից հետո<sup>16</sup>: Դժվար է համաձայնել նման տեսակետին: Այս մոտեցման դեպքում պարզ է, որ եթե գույքի սեփականատերը որոշի վինդիկացիոն հայց ներկայացնել դատարան, ապա նա դա կարող է անել միայն հայցային վաղեմության ժամկետի ընթացքում: Վինդիկացիայի դեպքում դրված են բարեխղճության և անբարեխղճության ավանդական հասկացությունները, և նշանակություն չունի անձի կողմից այն տիրապետելու հանգամանքը: Մյուս կողմից, եթե անձը չի դիմում դատարան իր գույքը հետ պահանջելու համար, իսկ բարեխիղճ տիրապետողն էլ օրենքով սահմանված ժամկետի ընթացքում բոլոր պայմանների առկայությամբ տիրապետում է այդ գույքը, ապա անտրամաբանական կլիներ, եթե այդ գույքը տիրապետելու ժամկետը սկսվեր հայցային վաղեմության ժամկետի ավարտից հետո: Այս դեպքում փաստորեն ստացվում է, որ անձը որոշակի ժամանակահատված, այսինքն՝ հայցային վաղեմության ժամկետը տիրապետել է այդ գույքը, օրենքը դրան նշանակություն չի տալիս անկախ այն հանգամանքից՝ սեփականատերն իր իրավունքից օգտվո՞ւմ է, թե՞ ոչ<sup>16</sup>:

**Անընդմեջություն.** հատկանիշ, որը շատ տեսաբանների կարծիքով տիրապետման բարեխղճությունից ածանցված երևույթ է: Այս հարցի շուրջ առկա է ևս մեկ ընդհանուր պայման. «եթե որևէ մեկը իրը վերադարձնելու պահանջ չի ներկայացնում, ապա համարվում է, որ ձեռքբերման վաղեմությունը չի ընդհատվել»: Ընդ որում, հետաքրքիր է այն հանգամանքը, որ տիրապետողի բարեխիղճ լինելուց դադարելու և վաղեմության ընդհատվելու պահերը սովորաբար համընկնում են. այսինքն՝ բարեխիղճ տիրապետումը միաժամանակ հանդիսանում է նաև անընդմեջ: Կարծում ենք, որ ձեռքբերման վաղեմության դեպքում բարեխղճությունը ունի այլ բովանդակություն, և դրա կորուստը հնարավոր է միայն այն դեպքում, երբ սեփականատերը օրենքով սահմանված հայցային վաղեմության ժամկետի ընթացքում պահանջում է վերացնել իր իրավունքի խախտումը և իրեն վերադարձնել իր գույքը: Նման պարագայում անընդմեջությունը ենթադրում է, որ համապատասխան ժամկետի ընթացքում գույքը գտնվում է տիրապետողի փաստացի իշխանության ներքո, և դրա պահպանման համար կատարում է անհրաժեշտ բոլոր գործողությունները: Այսինքն՝ բարեխիղճ տիրապետումը միաժամանակ հանդիսանում է նաև անընդմեջ:

Անհրաժեշտ է այստեղ նկատի ունենալ, որ տիրապետումը պետք է լինի անընդմեջ ձեռքբերման վաղեմության ողջ ժամկետի ընթացքում: Գործող օրենսդրության մեջ կա բաց նաև այս առումով: Նպատակահարմար կլիներ սահմանել, թե որ տիրապետումն է համարվում անընդմեջ: Անհրաժեշտ է սահմանել նաև, որ եթե իրը դուրս է եկել անձի տիրապետությունից, ապա ժամկետը չի ընդհատվում, եթե տվյալ անձը մեկ տարվա ընթացքում պահանջել է այդ գույքը: Հակառակ դեպքում ստացվում է, որ տիրապետողը պարտավոր է ամեն օր ապացուցել ժամկետի անընդմեջությունը:

**Բացահայտություն:** Այս հատկանիշի առկայության համար բավարար է, որ փաստացի տիրապետողը չթաքցնի այն, որպեսզի գույքը տեսնելու հնարավորությունը առկա լինի երրորդ անձանց համար<sup>17</sup>: Իրականում այս բնորոշումն ունի շատ ընդհանուր նշանակություն: Բացահայտության հատկանիշը օրգանապես կախված է իրի հատկանիշներից և կոնկրետ հանգամանքներից: Դիցուք, ի տարբերություն շատ այլ երկրների օրենսդրության՝ ՀՀ օրենսդրությունը ձեռքբերման վաղեմության ուժով սեփականության իրավունքի առաջացում նախատեսում է բացառապես անշարժ գույքի նկատմամբ: Բնականաբար, այս հանգամանքը պայմանավորում է ձեռքբերման վաղեմության դրսևորման ածանձնահատկությունները անշարժ գույքի նկատմամբ (մասնավորապես, բնակելի

## **ՔԱՂԱՔԱՑԻՎԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ ԵՎ**

### **ԴԱՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ**

տան դեպքում սահմանված անհրաժեշտ ժամկետի ընթացքում՝ 10 տարի) ապրել այդ տանը, կատարել անհրաժեշտ վճարումներ և այլն<sup>18</sup>:

Քննարկենք նաև ձեռքբերման վաղեմության հետ կապված ևս մի կարևոր հանգամանք: ՈՒսուճանասիրման կարիք ունի նաև այն հարցը, թե ձեռքբերման վաղեմության ուժով սեփականության իրավունք կարող է առաջանալ միայն տիրազուրկ գույքի, թե նաև այն գույքի նկատմամբ, որն ունի սեփականատեր: ՀՀ քաղ. օր-ի 178-րդ հոդվածը սահմանում է տիրազուրկ գույքի հասկացությունը: Այսպես, տիրազուրկ է համարվում այն գույքը, որը չունի սեփականատեր, որի սեփականատերն անհայտ է կամ հրաժարվել է սեփականության իրավունքից: Դարձյալ անդրադառնանք ՀՀ բարձրագույն դատական ատյանի դիրքորոշմանն այս հարցի շուրջ: ՀՀ վճռաբեկ դատարանը, իր 27.03.2008թ. 3-153)ՎԴ), 31.10.2008թ. ԵԿԴ (0590)02)08) թվակիր որոշումներում միմյանց հետ համադրելով ՀՀ քաղ. օր-ի 187-րդ, 172-րդ (սեփականության իրավունքի ծագման հիմքերը), 178-րդ (տիրազուրկ գույք) և 280-րդ (սեփականության իրավունքից հրաժարվելը) հոդվածները, ամրագրել է, որ ձեռքբերման վաղեմության ուժով անձի սեփականության իրավունքը կարող է ձեռք բերվել այն գույքի նկատմամբ, որը տիրազուրկ է, կամ որը տիրազուրկ չէ, բայց դրա սեփականատերը օրենքով սահմանված ժամկետում անտարբեր վերաբերմունք է ցուցաբերել դրա նկատմամբ: Ինչպես տեսնում ենք, վճռաբեկ դատարանը այս հարցում պահանջում է գույքի սեփականատիրոջ՝ գույքի նկատմամբ անտարբեր վերաբերմունք ցուցաբերելու կոնկրետ գործողություններ: Սակայն խնդիրն այն է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը չի նախատեսում տիրազուրկ անշարժ գույքը պետական կամ համայնքային սեփականություն դարձնելու հնարավորություն ձեռքբերման վաղեմության ուժով: Անհրաժեշտ է նկա-

տել, որ այս տեսակետը, մեղմ ասած, այդքան էլ արդարացված չէ: Ինչպես նկատում է Տ.Կ. Բարսեղյանը, անշարժ գույքը, եթե հողատարածք չէ, ապա անպայմանորեն կապված է հողամասի հետ: Հետևաբար, եթե չկա քաղաքացի կամ իրավաբանական անձ, որը տիրապետում է այդ հողատարածքը, այն կարող է մնալ տիրազուրկ, անօգտագործելի՝ այստեղից բխող բոլոր հետևանքներով<sup>19</sup>:

Օրենսդրական կարգավորման հաջորդ բացը պետք է տեսնել հենց սրանում: Սակայն այստեղ անհրաժեշտ է նկատի ունենալ, որ Սահմանադրությունը և դրա հիման վրա ընդունված «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքը համապատասխանաբար 104.1 և 4-րդ հոդվածներով իրավաբանական անձ է հռչակում նաև համայնքը: Եվ եթե հիմք ենք ընդունում վերոհիշյալ իրավական ակտերում ամրագրվածը, փաստորեն ստացվում է այնպես, որ քաղաքացիական օրենսգրքի 187-րդ հոդվածի 1-ին մասով ամրագրված նորմի «Իրավաբանական անձ» հասկացության մեջ պետք է ընդգրկել նաև համայնքը: Սակայն ողջ խնդիրն այն է, որ քաղաքացիական օրենսգիրքը չի նախատեսում, թե ինչ կառուցակարգով է իրականացվելու տիրազուրկ անշարժ գույքը համայնքային սեփականություն դարձնելու արարողակարգը:

Քննարկվող հիմնահարցի հետ սերտորեն կապված է տիրազուրկ անշարժ գույքի հաշվառման խնդիրը: Այն ՀՀ-ում կարգավորվում է ՀՀ կառավարության «Ինքնակամ կառուցված շինությունները, ինքնակամ զբաղեցված հողամասերը, տիրազուրկ (լքված) անշարժ գույքը հաշվառելու մասին» 2000թ. հուլիսի 27- թիվ 422 որոշմամբ, որի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից հաշվառման է ենթակա նաև տիրազուրկ (լքված), սեփականատեր չունեցող կամ այն անշարժ գույքը, որի սեփականատերն անհայտ է կամ հրաժարվել է դրա նկատմամբ սեփականության իրավունքից: Նույն կարգի 3-րդ մասի 19-րդ կետը, մանրամասնելով հաշվառման մեխա-

նիզմը, անրագրում է, որ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի տարածքային ստորաբաժանումը տիրազուրկ (լքյալ) անշարժ գույքի մասին տեղեկատվության առկայության դեպքում այն հաշվառման համապատասխան մատյանում գրանցելուց հետո 5-օրյա ժամկետում հայտնում է տվյալ տարածքի համայնքի ղեկավարին (Երևանի քաղաքապետին և նարգպետին) համայնքի սահմաններից դուրս գտնվող հողերի վրա կառուցված շենքերի, շինությունների մասով:

Փաստորեն ստացվում է այնպես, որ կառավարության որոշմամբ նախատեսվում է միայն տիրազուրկ անշարժ գույքի հաշվառման մեխանիզմը՝ չնախատեսելով այդպիսին պետական կամ համայնքային սեփականությունն դարձնելու հնարավորություն: Սա բնական է, քանի որ կառավարության որոշումը ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտ է, իսկ օրենսգիրքը նման հնարավորություն չի նախատեսում:

Խնդրո առարկայի մասին առավել համալիր պատկերացում կազմելու համար անդրադառնանք այն հարցին, թե ինչպես է կարգավորված հարցը ՌԴ օրենսդրությամբ: ՌԴ քաղաքացիական օր-ի 225-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ տիրազուրկ անշարժ գույքը հաշվառվում է անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումն իրականացնող մարմնի կողմից այն տեղական ինքնակառավարման մարմնի հայտարարության հիման վրա, որի տարածքում գտնվում է համապատասխան անշարժ գույքը: Հաշվառման օրից մեկ օր հետո համանքային սեփականության կառավարման լիազորություն ունեցող մարմինը իրավունք ունի դիմելու դատարան տվյալ գույքի նկատմամբ համանքային սեփականության իրավունքի ճանաչման պահանջով: Ըստ որում, եթե դատարանը չի ճանաչում համանքային սեփականությունը այդ գույքի նկատմամբ, այն կարող է վերադարձվել նախկին սեփականատիրոջը կամ ձեռք բերվել ձեռքբերման վաղեմության ուժով: Ակնհայտ է, որ ՌԴ օրենսդրությունը ավելի ճիշտ կար-

գավորում է տվել հարցին՝ նախատեսելով անշարժ գույքի նկատմամբ համայնքային սեփականության առաջացման հստակ մեխանիզմ:

Հետևապես կարծում եմ, որ այս առումով նպատակահարմար կլիներ լրացնել նաև օրենսդրական կարգավորման նաև այդ բացը՝ հստակորեն նախատեսելով տիրազուրկ անշարժ գույքը պետական կամ համայնքային սեփականությունն դարձնելու հնարավորություն՝ սահմանելով պետական կամ համայնքային սեփականությունն դարձնելու ժամկետի չափը, դրա ընթացակարգային կառուցակարգի հետ կապված այլ կարևոր առանձնահատկությունները:

Ամփոփելով վերոգրյալը՝ կարծում եմ՝ նպատակահարմար կլիներ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 178-րդ հոդվածը լրացնել դրույթով, որը համայնքի ղեկավարին հնարավորություն կընձեռեր տիրազուրկ անշարժ գույքի հաշվառումից հետո դիմել դատարան դրա նկատմամբ սեփականության իրավունքը ճանաչելու պահանջով: Եթե դատարանը մերժեր, այն կարող էր ձեռք բերվել ձեռքբերման վաղեմության ուժով կամ վերադարձվեր նախկին սեփականատիրոջը: Սրանով մենք կկանխենք գույքի՝ տիրազուրկ կարգավիճակում հարատևորեն մնալու երևույթ՝ այդտեղից բխող բոլոր հանգամանքներով: Նման դեպքում մենք այս կարևորագույն ինստիտուտի հետ կապված հարցերը նույնպես կդնենք պատշաճ իրավական հիմքերի վրա: Ինչևիցե, հուսանք, որ օրենսդիրը մոտ ապագայում ուշադրություն կդարձնի նաև այս կարևոր հարցին:

Եվ վերջում ձեռքբերման վաղեմության ինստիտուտը կազմող հարցերի վերաբերյալ առավել ամբողջական պատկերացում կազմելու համար ճիշտ կլիներ անդրադառնալ նաև գույքի տիրազուրկ ճանաչման դատավարական առանձնահատկություններին: Մասնավորապես, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 187-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ գույքը տիրազուրկ ճանաչելու վերաբերյալ քաղաքացու կամ իրավաբանական անձի

**ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ ԵՎ****ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

դիմումում պետք է նշվի, թե որ գույքն է տիրազուրկ ճանաչվելու, նկարագրվեն դրա հիմնական տարբերակիչ հատկանիշները, ինչպես նաև բերվեն ապացույցներ, որոնք հաստատում են սեփականատիրոջ կողմից առանց գույքի նկատմամբ սեփականության իրավունքը պահպանելու մտադրության գույքը թողնելու փաստը և ապացույցներ գույքը դիմողի տիրապետմանն անցնելու մասին: Իսկ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 188-րդ հոդվածը սահմանում է, որ դատարանը, գտնելով, որ գույքը սեփականատեր չունի կամ այն դրա սեփականատիրոջ կողմից թողնվել է առանց դրա նկատմամբ սեփականության իրավունքը պահպանելու մտադրության, վճիռ է կայացնում գույքը տիրազուրկ ճանաչելու և տիրապետող անձի սեփակա-

նությունը դարձնելու մասին: Այսինքն՝ քաղաքացիական դատավարության օրենսգրքը, ինչպես տեսնում ենք, իբրև գույքի տիրազուրկ ճանաչման հիմք համարում է ոչ միայն օբյեկտիվ (երբ գույքը սեփականատեր չունի) պատճառը, այլ նաև սուբյեկտիվ (սեփականատիրոջ կողմից առանց դրա նկատմամբ սեփականության իրավունքը պահպանելու մտադրության թողնելու) հանգամանքը: Փաստորեն գույքի տիրազուրկ ճանաչման և տիրապետող անձի սեփականությունը դարձնելու մասին որոշումը ամրագրվում է մեկ միասնական վճռահատությամբ:

Այսպիսով, ձեռքբերման վաղեմության՝ իբրև սեփականության իրավունքի առաջացման հիմքը կարգավորող օրենսդրական դրույթները պետք է հստակեցվեն: Եվ միայն այդ դեպքում օրենսդիրը քաղաքացիաիրավական այս ինստիտուտի կարգավորումը կդնի պատշաճ իրավական հենքի վրա:

<sup>1</sup> Տե՛ս Римское частное право. Под ред. проф. И.Б. Новицкого и проф. И.С. Петерского. М., 1999, էջ 92:

<sup>2</sup> Տե՛ս Լև Բաբայան, «Ջռոմեական մասնավոր իրավունք», Երևան, 2000, էջ 80:

<sup>3</sup> Տե՛ս D.41.3.1:

<sup>4</sup> Տե՛ս Լև Բաբայան, նշված աշխատությունը, էջ 80:

<sup>5</sup> Տե՛ս Տ. Բարսեղյան, «ՀՀ քաղաքացիական իրավունք» Առաջին մաս, 2009, Երևան, էջ 285:

<sup>6</sup> Տե՛ս Кочеткова Ю.А. Соотношение вещно правовых и обязательно-правовых способов защиты права собственности //Актуальные проблемы гражданского права, Вып второй. М., 2000, էջ 38:

<sup>7</sup> Տե՛ս ՀՀ սահմանադրական դատարանի տեղեկագիր, թիվ 2/43/2007թ.:

<sup>8</sup> Տե՛ս Бабаев А.Б. Система вещных прав. Монография: М.: Волтерс Клувер, 2006, էջ 218:

<sup>9</sup> Տե՛ս ՀՀ սահմանադրական դատարանի տեղեկագիր, թիվ 2/43/2007:

<sup>10</sup> Տե՛ս Վճռաբեկ դատարանի որոշումներ, ՀՀ պաշտոնական տեղեկագիր, թիվ 38/628/, 18.06.2008թ.:

<sup>11</sup> Տե՛ս Скловский К.И.Собственность в гражданском праве. М., Дело, 2002, էջ 262:

<sup>12</sup> Տե՛ս Мейер Д.И.Русское гражданское право. Ч.1, էջ 268:

<sup>13</sup> Տե՛ս Хвостов В.М.Система римского права, էջ 122:

<sup>14</sup> Տե՛ս Հովհաննիսյան Ա.Ա., «Անշարժ գույքը՝ որպես քաղաքացիական իրավահարաբերությունների օբյեկտ», ատենախոսություն, ԵՊՀ, Երևան, 2009, էջ 115:

<sup>15</sup> Տե՛ս Скловский, К.И. Собственность в гражданском праве: М., Дело, 2002, էջ 263:

<sup>16</sup> Տե՛ս Ա.Ա.Հովհաննիսյանի նշվ. աշխ., էջ 117:

<sup>17</sup> Տե՛ս Гражданское право: Учебник. Часть 1. Под. ред. А.П.Сергеева и Ю.К.Толстого. М., 1997, էջ 344:

<sup>18</sup> Տե՛ս Ա.Ա.Հովհաննիսյան, նշվ. աշխ., էջ 218:

<sup>19</sup> Տե՛ս Տ. Բարսեղյան, նշվ. աշխ., էջ 292:

## THE PROBLEMS OF THE OLDNESS POSSESSION

**Tigran KHACHIKYAN**

*YSU, Faculty of Law, 3rd course student*

---

In his article Tigran Khachikyan provides a detailed analysis of the concept of acquisitive prescription, which has always been in the centre of legal disputes. The author addresses the regulation of this institute in other countries while making suggestions for implementation. The state and the community cannot gain ownership on the grounds of acquisitive prescription. This is a serious drawback. It is hard to under-

stand why all participants of civil relations can, while the state and the community cannot.

Civil Code determines the period for acquisitive prescription /10 years/. In Ukraine, for example, acquisitive prescription applies also to movable estate /5 years/. Unfortunately, however in Armenia there is no such rule. Of course the decisions of the Supreme Court and the Constitutional Court partly clarify the issue, but there are still many problems within this field. This work is dedicated to their discussion.

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ**

**ՂԱՏԱՐԱՆԻ՝ ՈՐՊԵՍ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ  
ԵՆԹԱՐԿՈՂ ՍՈՒԲՅԵԿՏԻ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ ՀՀ ՎԱՐՉԱԿԱՆ  
ՂԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

**ԳՈՒԷԼ ՍՈՒՂՆԵՅՅԱՆ**

*ԵՊՀ սահմանադրական իրավունքի  
ամբիոնի ասպիրանտ*

**Հ**այաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 26-րդ գլխով ամրագրված նորմերով կարգավորվում են դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու հարցերը: Մեր խորին հանդգնամբ՝ ներկայումս վարչական դատարանների՝ իրավական իրականությունում իմաստավորումը և դրանց արժևորումը, վարչական դատարանի կողմից վարչական պատասխանատվության ենթարկելու ինստիտուտն անհամատեղելի են դարձնում վարչական արդարադատության կողմից իրականացվող գործառույթների հետ: Վարչական պատասխանատվությունը իրավական պատասխանատվության տեսակ է, որն ունի իրեն բնորոշ առանձնահատկությունները:

Նույնիսկ սոցիոլագիայում դատարանը ներկայացվում է որպես վեճեր լուծող սուբյեկտ, այլ ոչ թե վարչական վերահսկողություն իրականացնող մարմին, որը իրավասու է վարչական պատասխանատվության ենթարկելու<sup>1</sup>:

Իրավաբանական գրականության մեջ իրավական պատասխանատվությունը բնորոշվում է տարբեր կերպ: Որոշ հեղինակների կարծիքով, իրավական պատասխանատվությունն իրենից ներկայացնում է մեղավոր անձի նկատմամբ իրավախախտման համար պետական հարկադրանքի միջոցների կիրառում<sup>2</sup>: Մեկ այլ խումբ գիտնականների պնդմամբ, իրավա-

կան պատասխանատվությունը հատուկ իրավական վիճակ է, որով պայմանավորված՝ իրավախախտում կատարած անձը կրում է պետական-հարկադրական բնույթի որոշակի գրկանքներ<sup>3</sup>:

Վ. Ս. Ներսիսյանցի համոզմամբ, իրավական պատասխանատվությունը խախտված նորմի սանկցիայով նախատեսված և իրավասու պետական մարմնի կամ պաշտոնատար անձի կողմից պատշաճ դատավարական-իրավական կարգով իրավախախտողի նկատմամբ կիրառվող իրավական հարկադրանքի միջոցն է<sup>4</sup>:

Նշված սահմանումների համադրմամբ և դրանց համակարգային վերլուծությամբ կարող ենք եզրահանգել, որ իրավական պատասխանատվությունը դիմամիկ առումով իրավախախտ անձի նկատմամբ նորմատիվ իրավական կարգով սահմանված ընթացակարգի պահպանմամբ հարկադրանքի միջոցների կիրառմանն ուղղված գործընթացն է, իսկ ստատիկ առումով՝ որոշակի տարրերի փոխկապակցված համակցություն: Նշվածից բացառություն չէ նաև վարչական պատասխանատվությունը:

Հայրենական իրավագետներից վարչական պատասխանատվության իրավական պատասխանատվության տեսակ լինելու հարցին և դրա առանձնահատկություններին բավականին մանրամասնորեն անդրադարձել է Գ. Դանիելյանը<sup>5</sup>:

Վարչական պատասխանատվությունը՝ որպես վարչական զանցանք կատարած անձի նկատմամբ օրենքով սահմանված կարգի պահպանմամբ հարկադրանքի միջոցների կիրառում, պետք է իրացնի հա-

մապատասխան վարչական մարմինը, որն այդ զանցանքի կապակցությամբ իրականացնում է վարչարարությունը: Որոշ իրավագետներ, անդարտադառնալով վարչաիրավական հարկադրանքի առանձնահատկությունը ընդգծող հատկանիշներին, որպես այդպիսիք առանձնացնում են հարկադրանքի միջոցի կիրառումը իրավասու կառավարման մարմնի կողմից և հարկադրանքի միջոցի կիրառման ձևակերպումը կառավարման մարմնի ակտով, որը կիրառվող հարկադրանքի միջոցների օրինականության ապահովման երաշխիք է:

Նույնաբովանդակ դիրքորոշում ունեննալ հայրենական իրավագետները. մասնավորապես՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի վերաբերյալ հարցեր և պատասխաններ» աշխատության հեղինակների պնդմամբ վարչական հարկադրանքը կիրառվում է վարչական ակտով:

Այլ կերպ ասած՝ վարչական պատասխանատվության կիրառումը պետք է հանդիսանա վարչարարության՝ որպես իրավազոր գործընթացի վերջնական փուլը, որի շրջանակներում իրավասու վարչական մարմինը (այլ ոչ թե դատական մարմինը) համապատասխան հիմքերի առկայության դեպքում պետք է կայացնի միջամտող կամ զուգորդվող վարչական ակտ:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 26-րդ գլխով սահմանված իրավակարգավորումը միգուցե արդարացված համարվեր, եթե հնարավոր լիներ պաշտոնատար անձանց ենթարկել վարչական պատասխանատվության ֆիզիկական և (կամ) իրավաբանական անձանց դիմումների հիման վրա, սակայն այս դեպքում մենք ստիպված էինք լինելու վարչական պատասխանատվությանը հաղորդելու նոր որակական հատկանիշներ, ինչը միանշանակ հանգեցնելու էր վերջինիս բովանդակային և այդ երևույթի ընկալման փոփոխությանը:

Հարկ է նշել, որ վարչադատաիրավակիրառական պրակտիկայում՝ պաշտոնա-

տար անձանց ֆիզիկական և (կամ) իրավաբանական անձանց դիմումների հիման վրա վարչական պատասխանատվության ենթարկելու հարցի վերաբերյալ առկա են հակասական մտեցումներ: Մասնավորապես՝ ՀՀ վարչական դատարանը (երեք դատավորի կազմով), ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 25-րդ գլխով սահմանված կարգով քննության առարկա դարձնելով ՀՀ վարչական դատարանի՝ հայցադիմումի ընդունումը մերժելու մասին որոշման դեմ ներկայացված բողոքը, իր 2009 թվականի ապրիլի 24-ի թիվ ՎԴ/0074/08/09 որոշմամբ արձանագրել է, որ դատարանը պետք է վարույթ ընդուներ և քնններ անձի՝ պաշտոնատար անձին վարչական պատասխանատվության ենթարկելու պահանջի մասին հայցադիմումը:

Սակայն մեկ այլ գործով ՀՀ վարչական դատարանը (նույնպես երեք դատավորի կազմով), քննելով նույնանման փաստական և իրավական հիմքերով հայցադիմումի ընդունումը մերժելու որոշման դեմ ներկայացված բողոքը, հանգել է այն եզրակացության, որ վարչական դատարանի իրավասությունից դուրս է ֆիզիկական և (կամ) իրավաբանական անձանց դիմումների հիման վրա պաշտոնատար անձանց վարչական պատասխանատվության ենթարկելու հետ կապված վեճերի քննությունը<sup>10</sup>:

Մեկ այլ դեպքում ՀՀ վարչական դատարանը պաշտոնատար անձին վարչական պատասխանատվության ենթարկելու պահանջի մասին հայցադիմումը ընդունել է վարույթ՝ գտնելով, որ այդ վեճերը նույնպես հանրային իրավական վեճեր են և ենթակա են վարչական դատարանի քննությանը<sup>11</sup>:

Մեր կարծիքով, այս հակասական մտեցումները և դրանից բխող իրավական հետևանքները կանխելու և վարչական պատասխանատվության և վարչադատական կարգով իրավունքների պաշտպանության իրավական ինստիտուտները միմյանց հետ չչփոթելու նկատառումով ՀՀ սահմանադրական դատարանը, իր 2010

## ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

թվականի փետրվարի 5-ի ՍԴՈ 864 որոշմամբ<sup>12</sup> վարչական պատասխանատվության ինստիտուտը գնահատելով դրա նպատակի, վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքով նախատեսված ողջ իրավակարգավորման հիմքում ընկած տրամաբանության, «անձի խախտված իրավունքների վերականգնում» հասկացության բովանդակության համատեքստում արդարացիորեն եզրահանգել է, որ անձի իրավունքները խախտած պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի պաշտոնատար անձին դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելը անձի իրավունքի դատական պաշտպանության բաղադրատարր չէ, և վարչական պատասխանատվության միջոց հանդիսացող վարչական տույժը՝ մասնավորապես, հետապնդում է այլ նպատակ, քան անձի խախտված իրավունքի դատական կարգով վերականգնումն է:

Նշված որոշմամբ վարչական պատասխանատվության իրավական ինստիտուտը գնահատման առարկա դարձնելով իրավական կարգավորման կառուցակարգում հետապնդած անմիջական նպատակի առումով (տելոլոգիական ասպեկտ)՝ ՀՀ սահմանդրական դատարանը հանգել է այն եզրակացությանը, որ վարչական պատասխանատվության նպատակն առավելապես կրում է հանրային բնույթ, իրավախախտ անձը պատասխանատվություն է կրում հասարակության, այլ ոչ թե մասնավոր անձի առջև, վարչական պատասխանատվությունն առնչվում է ոչ այնքան մասնավոր, որքան հանրային շահերին: Իսկ հանրային իրավահարաբերությունների ոլորտում մասնավոր շահերի պաշտպանության նպատակով սահմանված է այլ կարգ՝ հաշվի առնելով վարչադատավարական իրավահարաբերությունների առանձնահատկությունները, վարչաիրավական հարաբերությունների հետևանքով

խախտված իրավունքների վերականգնման կարգի առանձնահատկությունները, խախտված իրավունքների փաստացի վերականգնելիության հնարավորությունն ու աստիճանը:

Վարչական պատասխանատվության՝ վարչարարության (որպես հանրային իրավագոր գործընթացի) եզրափակիչ փուլը լինելու հանգամանքն իրավական ամրագրման է ենթարկված նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով<sup>13</sup>: Մենք նման եզրահանգման ենք գալիս նշված օրենքի 20-րդ հոդվածով, 5-7-րդ գլուխներով ամրագրված նորմերի համակարգային վերլուծությամբ<sup>14</sup>:

Մեր խորին համոզմամբ դատարանների՝ վարչական պատասխանատվության ենթարկող սուբյեկտ չլինելու հանգամանքը պայմանավորված է վարչական իրավունքի, դատարանների դերի և դրանց նշանակության նորովի արժևորմամբ և վերախմաստավորմամբ, որոնց պարագայում դատարանները արդեն չեն դիտվում որպես վարչական պատասխանատվության ենթարկող սուբյեկտներ, այլ որպես անձանց հանրային սուբյեկտիվ իրավունքների պաշտպանության նկատառումով օրենքով սահմանված հիմքերով և կարգով դատական վերահսկողություն իրականացնող սուբյեկտներ: Սակայն նշված հանգամանքը միանշանակ չի ընդունվում: Որոշ գիտնականներ, ամբողջական գիտական աշխատանքներում ուսումնասիրության առարկա դարձնելով վարչական պատասխանատվության ենթարկող սուբյեկտների հետ կապված հարցերը, վարչական պատասխանատվության ենթարկող սուբյեկտների շարքում հատկապես առանձնացնում են դատարանները<sup>15</sup>:

Դատարանի՝ վարչական պատասխանատվության ենթարկող սուբյեկտ չլինելու հանգամանքն անուղղակիորեն իրավական կարգավորման է ենթարկված նաև վարչական իրավագոր գործունեության կարգավորմանն ուղղված «Վարչարարու-



յան հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով: Նշված օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված նորմի համաձայն՝ **վարչարարությունը վարչական մարմինների արտաքին ներգործությունն ունեցող գործունեությունն է, որը եզրափակվում է վարչական կամ նորմատիվ ակտերի ընդունմամբ, ինչպես նաև գործողություն կամ անգործություն, որն անձանց համար առաջացնում է փաստական հետևանքներ:**

Նույն հոդվածի 1-ին մասով ամրագրված իրավասահմանող (դեֆինիտիվ) իրավանորոշումով ամրագրված են վարչական մարմինների շրջանակը, որտեղ իրավացիորեն դատարանը որպես վարչական մարմին նախատեսված չէ:

Վարչական դատարանի՝ վարչական պատասխանատվության ենթարկող սուբյեկտ չլինելու հարցի կապակցությամբ մեզ համար ընդունելի է Բ. Ղազիյանի ատենախոսության մեջ տեղ գտած դիրքորոշումը, համաձայն որի՝ դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու ինստիտուտի կիրառումը որևէ առնչություն չունի վարչական արդարադատության նպատակի հետ<sup>16</sup>:

Համաշխարհային իրավական փորձը և պրակտիկան նույնպես վկայում են, որ դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու ինստիտուտը բացակայում է, կամ նկատվում է դրանից հրաժարվելու միտում: Նշված հանգամանքն ուղղակիորեն ամրագրված է նաև ՀՀ սահմանադրական դատարանի 2010 թվականի փետրվարի 5-ի ՍԴՈ 864 որոշմամբ<sup>17</sup>:

Մեր կողմից ուսումնասիրության առարկա դարձած մի շարք երկրների վարչադատավարական գործընթացը կարգավորող նորմատիվ իրավական ակտերի («Վարչադատական գործընթացի մասին» Գերմանիայի Դաշնային օրենք, Ուկրաինայի վարչական դատավարության օրենսգիրք<sup>18</sup>, «Վարչական դատարանի մասին» Մոլդովայի օրենք<sup>19</sup>, Էստոնիայի Վարչական դատարանի ընթացակարգի օրենսգիրք<sup>20</sup>,

Թուրքիայի «Շրջանային վարչական դատարանների, վարչական և հարկային դատարանների հաստատման և գործունեության մասին» 06.01.1982թ. թիվ 2576 և «Պետական խորհրդի մասին» 06.01.1982թ. թիվ 2575 օրենքներ<sup>21</sup>, Վրաստանի վարչական դատարանի ընթացակարգի օրենսգիրք, Չեխիայի վարչական արդարադատության օրենսգիրք<sup>22</sup>) համակարգային և համեմատական վերլուծությունը փաստում է, որ դրանցում դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու հետ կապված իրավակարգավորումներ առկա չեն:

Հայաստանի Հանրապետությունում ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 26-րդ գլխով սահմանված ինստիտուտի առկայությունը, ըստ էության, պայմանավորված է այն հանգամանքով, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում (այսուհետ՝ ՎԻՎՕ) դեռևս սահմանված է որոշակի իրավակարգավորում, համաձայն որի՝ առանձին վարչական իրավախախտումների համար պատասխանատվության ենթարկող սուբյեկտ է հանդիսանում դատարանը: Մասնավորապես՝ նշված օրենսգրքի 223-րդ հոդվածով հղում է արված այն հոդվածներին (ՎԻՎՕ-ի 40<sup>1</sup>-40<sup>7</sup>, 44, 53, 53<sup>1</sup>, 97<sup>2</sup>, 97<sup>3</sup>, 104<sup>3</sup>, 147, 166<sup>1</sup>, 170<sup>5</sup>, 172 հոդվածներով, 175 հոդվածի երրորդ մասով և 180<sup>1</sup>, 182, 183<sup>1</sup>, 185, 189<sup>2</sup>, 189<sup>3</sup>, 189<sup>4</sup>, 189<sup>5</sup>, 189<sup>6</sup>, 189<sup>7</sup>, 189<sup>8</sup>, 189<sup>9</sup>, 189<sup>10</sup> և 198<sup>2</sup> հոդվածի չորրորդ ու հինգերորդ մասերով, 206<sup>1</sup>, 206<sup>2</sup>, 206<sup>3</sup>, 206<sup>4</sup>, 206<sup>5</sup>, 206<sup>6</sup> և 206<sup>7</sup>, 206<sup>8</sup> հոդվածներով նախատեսված վարչական իրավախախտումներ), որոնց համար վարչական պատասխանատվության ենթարկող սուբյեկտ է համարվում դատարանը:

Հարկ ենք համարում նշել, որ որևէ կերպ հիմնավորված չէ այն հանգամանքը, թե ինչու հենց ՎԻՎՕ-ի 223-րդ հոդվածով հղում կատարված հոդվածներով սահմանված արարքները կատարելու համար է նախատեսված վարչական պատասխանատվության կիրառումը դատարանների կողմից: Այլ

## ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

կերպ ասած՝ ներկայիս իրավական իրականությունում բացակայում են այն գիտատեսական հիմքերը և հիմնավորումները, որոնց վրա խարսխված կլինեն ԿԻՎՕ-ի 223-րդ հոդվածով սահմանված տարբերակված իրավակարգավորման անհրաժեշտությունը: ԿԻՎՕ-ի 223-րդ հոդվածով սահմանված հղումների մասով արդարացիորեն կարող են ծագել որոշակի հարցեր՝ թե ինչու մի դեպքում վերահսկողություն իրականացնող հանրային իշխանական լիազորություններով օժտված պետական մարմինը կարող է իրավախախտ անձին ենթարկել վարչական պատասխանատվության՝ իրավախախտի նկատմամբ կիրառելով վարչական հարկադրանքի միջոցներ, մյուս դեպքում՝ վերահսկողություն իրականացնող սուբյեկտը պետք է բավարարվի միայն վարչական իրավախախտման վերաբերյալ վարչական վարույթի հարուցմամբ, դրա քննություն իրականացնելով և արձանագրություն կազմելով՝ առանց վարչական պատասխանատվության ենթարկելու հնարավորության:

Մեր կարծիքով, ԿԻՎՕ-ի 223-րդ հոդվածի, հետևաբար դրանով սահմանված իրավակարգավորման առկայությունը պայմանավորված է այն իրողությամբ, որ այն սահմանվել է ՀԽՍՀ-ի օրոք, և այդ հոդվածի գործողության դադարեցված չլինելը օրենսդրի ոչ հետևողական գործունեության արդյունք է: ԿԻՎՕ-ի նշված հոդվածով ամրագրված դրույթներն այլևս առարկայազուրկ են, քանի որ դրանցով սահմանված իրավակարգավորումը անհամատեղելի է ՀՀ-ում տեղի ունեցող հանրային-իրավական գործընթացների դինամիկ զարգացման հետ<sup>29</sup>:

Ինչևէ, ՀՀ-ում կան պետական մարմիններ (օրինակ՝ ՀՀ ԿԳՆ Լեզվի պետական տեսչություն), որոնց կարգավիճակը սահմանող իրավական ակտերը վերջիններիս հնարավորություն չեն տալիս վարչական

իրավախախտում կատարած անձանց ենթարկել վարչական պատասխանատվության: Մեր պնդմամբ նշված պետաիշխանական սուբյեկտներին կամ համապատասխանաբար նրանց վերադաս պետական մարմինն ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով պետք է հնարավորություն ընձեռվի վարչական իրավախախտում թույլ տված անձանց նկատմամբ կիրառել վարչական հարկադրանքի միջոցներ:

Մեր խորին համոզմամբ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 26-րդ գլխով սահմանված ինստիտուտի ամարդյունավետությունը պայմանավորված է նաև նրանով, որ այդ դրույթները կարող են կիրառվել առանց հանրային-իրավական վեճի առկայության: Հնարավոր են դեպքեր, երբ համապատասխան պետական մարմինը վարչարարությունն իրականացրած լինի առանց օրենքի խախտման, և անձը, ով պետք է դատական կարգով ենթարկվի վարչական պատասխանատվության, համաձայնի վարչական իրավախախտումների վերաբերյալ կազմված արձանագրության մեջ տեղ գտած խախտումների հետ, ինչը կնշանակի, որ կողմերի միջև վեճը բացակայում է:

Նման պարագայում ՀՀ վարչական դատարանը, չիրացնելով իր իրավագոր գործառույթները, կայացնելու է դատական ակտ մի գործով, որով բացակայում է վեճը: Սա միանշանակ ունի իր բացասական հետևանքները, մասնավորապես՝ այդ ամենը հանգեցնում է պետական ռեսուրսների անհարկի վատնման (ծանրաբեռնում է վարչական մարմիններին, վարչական դատարանը, վարչական դատարանի գործունեությանը օժանդակող դատական ծառայողներին, պահանջում է լրացուցիչ ծախսեր, որոնցից կարելի է խուսափել):

Որոշ իրավաբանների պնդմամբ առանձին խումբ սուբյեկտներին միայն դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու հարցում առկա է սահմանադրաիրավական պահանջ: Վերջիններիս հավաստմամբ ՀՀ Սահմանադր-

րությամբ (66-րդ հոդվածի 3-րդ մաս, 97-րդ հոդվածի 3-րդ մաս) անրագրված է, որ ԱԺ պատգամավորներին, դատավորներին, ինչպես նաև ՀՀ սահմանադրական դատարանի անդամներին վարչական պատասխանատվության կարելի է ենթարկել միայն դատական կարգով:

Մեր խորին համոզմամբ ՀՀ Սահմանադրության 66-րդ հոդվածի 3-րդ մասով, ինչպես նաև 97-րդ հոդվածի 3-րդ մասով ամրագրված նորմերը պարտադիր պահանջ են սահմանում առ այն, որ ԱԺ պատգամավորները, դատավորները, ինչպես նաև ՀՀ սահմանադրական դատարանի անդամները վարչական պատասխանատվության կարող են ենթարկվել միմիայն դատական կարգով:

ՀՀ Սահմանադրության 66-րդ հոդվածի 3-րդ մասով ամրագրված նորմի համաձայն՝ պատգամավորին չի կարելի որպես մեղադրալ ներգրավել, կալանավորել կամ նրա նկատմամբ դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու հարց հարուցել՝ առանց Ազգային ժողովի համաձայնության:

ՀՀ Սահմանադրության 97-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված նորմի համաձայն՝ դատավորը և սահմանադրական դատարանի անդամը չեն կարող կալանավոր-

վել, ներգրավվել որպես մեղադրալ, ինչպես նաև նրանց նկատմամբ չի կարող դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու հարց հարուցել՝ առանց համապատասխանաբար արդարադատության խորհրդի կամ սահմանադրական դատարանի համաձայնության:

Նշված նորմերի տառացի մեկնաբանության արդյունքում մենք հանգում ենք այն եզրակացությանը, որ այդ նորմերով վերոգրյալ անձանց դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու գործընթացը կարող է սկսվել միայն որոշակի իրավաբանական փաստի, այն է՝ ԱԺ-ի, ՀՀ արդարադատության խորհրդի, ՀՀ սահմանադրական դատարանի համաձայնության առկայության պարագայում: Սակայն, եթե ընթացիկ օրենսդրությամբ դատական կարգով վարչական պատասխանատվության ինստիտուտն իրավական ամրագրում չստանա, ապա այդ դեպքում հանրային իշխանական կարգավիճակով օժտված վերոնշյալ սուբյեկտները կենթարկվեն վարչական պատասխանատվության առանց համապատասխան համաձայնության, այսինքն՝ ընդհանուր կարգով:

<sup>9</sup> Այս ակտերի հասկացությունը տրված է «Վարչարարության հիմունքների և վարչական վա-

<sup>1</sup> Տե՛ս Ֆրիդրիխ Ավգուստ ֆոն Հայեկ. *Право, закон и свобода, современное понимание либеральных принципов справедливости и политики*; пер. с англ. Б. Пинскера и А. Кутарева.- М.: ИРИСЭН, 2006, էջ 120:

<sup>2</sup> Տե՛ս, օրինակ, Алексеев С. С. *Право. Азбука. Теория. Философия. Опыт комплексного исследования*. М., 1998. էջ 83:

<sup>3</sup> Տե՛ս, օրինակ, Абдулаев М.И. *Теория государства и права: Учебник для высших учебных заведений*. М.: Финансовый контроль, 2004, էջ 321:

<sup>4</sup> Տե՛ս Ներսիսյանց Վ. Ս., Իրավունքի և պետության տեսություն, Երևան, 2001, էջ 285: Իրավական պատասխանատվության հասկացության, տեսակների, դրանց առանձնահատկությունների վերաբերյալ ավելի մանրամասն տե՛ս Духно Н.А. Ивакин В.И. *Понятие и виды юридической ответственности* //

Государство и право. N 6, 2000, էջ 12-17:

<sup>5</sup> Տե՛ս Դանիելյան Գ., Վարչական պատասխանատվությունը Հայաստանի Հանրապետությունում, Եր: ԱՌՏ, 2007, էջ 78-83:

<sup>6</sup> Վարչական պատասխանատվության դիմամիկ և ստատիկ ասպեկտների, վարչական պատասխանատվության ենթարկող սուբյեկտի վերաբերյալ ավելի մանրամասն տե՛ս, օրինակ, Бельский К.С., *Административная ответственность: генезис, основные признаки, структура* // Государство и право. N 9, 1999, էջ 15-16, 19:

<sup>7</sup> Տե՛ս Жумагулов М.И., *О сущности и понятии административно-правового принуждения* // Государство и право. N 10, 2006, էջ 26:

<sup>8</sup> Տե՛ս «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի վերաբերյալ հարցեր և պատասխաններ, Երևան, 2007, էջ 153:

## ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

- րույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ հոդվածի 2-րդ մասով: Տե՛ս ՀՀՊՏ 2004.03.31/18 (317), հոդ. 413:
- <sup>10</sup> Տե՛ս ՀՀ վարչական դատարանի 2009 թվականի մարտի 23-ի թիվ ՎԴ/6279/05/08 վճիռը:
- <sup>11</sup> Տե՛ս ՀՀ վարչական դատարանի 2009 թվականի մայիսի 11-ի թիվ ՎԴ/1696/05/09 վճիռը:
- <sup>12</sup> <http://www.concourt.am/armenian/decisions/common/2010/pdf/sdv-864.pdf> կայքի 01.09.2010թ. դրությամբ:
- <sup>13</sup> Տե՛ս ՀՀՊՏ 2004/18 (317), 31.0304 հոդ. 413:
- <sup>14</sup> «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի, 5-7-րդ գլուխների դրույթներով կարգավորվում են վարչարարության՝ որպես իրավագործ գործընթացի հարուցման ընթացիկ և եզրափակիչ փուլերը: Հարկ ենք համարում նշել, որ սույն հոդվածի շրջանակներում վարչական պատասխանատվությունը՝ որպես վարչարարության վերջնական փուլ, ուսումնասիրության առարկա է դարձվում և վերաբերելի է միմիայն այն դեպքերին, երբ վարչարարությունն ավարտվում է միջամտող կամ զուգորդվող վարչական ակտի ընդունմամբ:
- <sup>15</sup> Տե՛ս, օրինակ, Якимов А.Ю. Статус субъекта административной юрисдикции и проблемы его реализации, М.: Проспект, 1999, էջ 81-86:
- <sup>16</sup> Տե՛ս Ղազինյան Բ., Գործադիր իշխանության սահմանադրաիրավական կարգավիճակը Հայաստանի Հանրապետությունում // Իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսություն, Երևան, 2010, էջ 159:
- <sup>17</sup> <http://www.concourt.am/armenian/decisions/common/2010/pdf/sdv-864.pdf> կայքի 01.09.2010թ. դրությամբ:
- <sup>18</sup> Նշված իրավական ակտի ամբողջական տեքստին կարել է ծանոթանալ համացանցի [www.audiozakon.com.ua](http://www.audiozakon.com.ua) կայքում (հղումը 01.07.2010թ. դրությամբ):
- <sup>19</sup> Նշված իրավական ակտի ամբողջական տեքստին կարել է ծանոթանալ համացանցի [http://gov.gov.md/www.gov.md/file/cadrul\\_juridic/ru/Закон\\_об\\_административ\\_ном\\_суде.pdf](http://gov.gov.md/www.gov.md/file/cadrul_juridic/ru/Закон_об_административ_ном_суде.pdf) կայքում (հղումը 01.07.2010թ. դրությամբ):
- <sup>20</sup> Նշված իրավական ակտի ամբողջական տեքստին կարել է ծանոթանալ համացանցի <http://www.legaltext.ee/en/andmebaas/tekst.as> [p?loc=text&dok= X30054K 8&keel=en&pg=1&ptyyp=RT&tyyp =X&query=+Court](http://www.legaltext.ee/en/andmebaas/tekst.as) կայքում (հղումը 01.07.2010թ. դրությամբ):
- <sup>21</sup> Նշված իրավական ակտերի ամբողջական տեքստին կարել է ծանոթանալ համացանցի <http://www.danistay.gov.tr/eng/index.html> և [http://www.legalisplatform.net/hukuk\\_metinleri/2575%20Nr.%20Code.pdf](http://www.legalisplatform.net/hukuk_metinleri/2575%20Nr.%20Code.pdf) կայքերում (հղումը 01.07.2010թ. դրությամբ):
- <sup>22</sup> Նշված իրավական ակտերի ամբողջական տեքստին կարել է ծանոթանալ համացանցի <http://www.nssoud.cz/docs/caj2002.pdf> կայքում (հղումը 10.09.2010թ. դրությամբ):
- <sup>23</sup> ՎԻՎՕ-ի 223-րդ հոդվածով սահմանված դրույթի ոչ կենսունակ լինելու համագամանքը հիմնավորվում է նաև նրանով, որ այդ նորմի կատարումն անընդունելի է, իսկ որոշ դեպքերում՝ նույնիսկ անհնարին: Մասնավորապես՝ դրանում հղում կատարված մի շարք հոդվածներ ուժը կորցրել են. ՎԻՎՕ-ի 44-րդ հոդվածը ուժը կորցրել է 24.12.2004թ. ՀՕ-68-Ն օրենքով, 104.3-րդ հոդվածը՝ 14.12.2004թ. ՀՕ-37-Ն օրենքով, 53.1-րդ, 172-րդ, 206.1, 206.6-206.7-րդ հոդվածները՝ 16.12.2005թ. ՀՕ-32-Ն օրենքով: «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի 3-րդ մասով ամրագրված է իմպերատիվ դրույթ, համաձայն որի՝ *նորմատիվ իրավական ակտերում չպետք է կիրառվեն նորմեր, որոնց կատարումն անհնար է կամ անընդունելի, կամ որոնց չկատարման համար իրավական հետևանքներ նախատեսված չեն*: ՎԻՎՕ-ի 223-րդ հոդվածով սահմանված դրույթի կատարման անհնարինության (ոչ կենսունակ լինելու) փաստը հավաստվում է նաև ՀՀ դատական դեպարտամենտի դատական պրակտիկայի ամփոփման վարչության տրամադրած տվյալներով, մասնավորապես՝ 2008 թվականի հունվարի 1-ից մինչև 2010 թվականի առաջին կիսամյակն ընկած ժամանակահատվածում դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ քննվել է թվով 192 գործ, որոնք ՎԻՎՕ-ի 223-րդ հոդվածով սահմանված 40 հղումներից վերաբերում են ընդամենը երեք հոդվածներով սահմանված արարքների՝ ՎԻՎՕ-ի 53-րդ, 182-րդ, 189<sup>3</sup>-րդ հոդվածներով սահմանված արարքներ:

---

## THE PROBLEM OF THE COURT AS AN ADMINISTRATIVE CHARGE IMPOSING INSTITUTION IN ADMINISTRATIVE PROCEDURE OF RA

**Gnel MUGHNETSYAN**

*Postgraduate student of Constitutional law department, Faculty of Law ,YSU*

**T**his article discusses the problem of the court as an administrative charge imposing institution in administrative procedure of RA.

It is asserted, that currently the appreciation and the perception of the administrative courts in legal reality, the institution of imposing administrative charge by administrative courts is inconsistent with the functions of the administrative justice.

The imposing of the administrative

charge is the final part of the administration as a legally qualified procedure, within the bounds of which the authorised administrative body (not the court) should make interposing and accompanied decisions in case of appropriate causes.

An attempt has been made to assert the nonviability of the legal regulation set up by the article 223 of the Code of Administrative Violations. In order to examine the problem thoroughly some legal acts of both Administrative court and the Constitutional court of RA, as well as some normative legal acts regulating administrative procedures in some other countries have been studied.

---

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆԵՔ**

**ՀՀ ՆԱԽԱԳԱՅԻ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ  
ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆ ՕՐԵՆՍԴԻՐ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ**

**Հայկ ԳՐԻԳՈՐՅԱՆ**

*ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի  
սահմանադրական իրավունքի  
ամբիոնի հայցորդ*

**Ս**ահմանադրության իրավական պաշտպանության գործառույթն իրականացնում է պետական մարմինների մի ամբողջ համակարգ: Իշխանության երեք թևերը ներկայացնող պետական մարմիններն իրենց իրավասության շրջանակներում օժտված են հսկողական գործառույթներով: Նման բազմաբնույթ գործունեության հիմնական նպատակն է սահմանադրական հսկողություն իրականացնելու միջոցով ապահովել Սահմանադրության իրավական պաշտպանությունն ու նրա գերակայությունը երկրի իրավական համակարգում:

Սահմանադրական հսկողություն հասկացությունը պետական շինարարության տեսության մեջ առաջացել է համեմատաբար ոչ վաղ անցյալում: Դրա էությունն ու օրինականության ապահովման գործուն նրա նշանակությունն ըմբռնելու համար անհրաժեշտ է այն համեմատել սահմանադրական վերահսկողության հետ: «Սահմանադրական վերահսկողություն» եզրույթը ենթադրում է հանրային իշխանության մարմինների ակտերի և գործողությունների (անգործության)՝ սահմանադրությանը համապատասխանության ստուգում: Նման ստուգման արդյունքում սահմանադրական վերահսկողություն իրականացնող մարմինն իրավասու է ուժը կորցրած ճանաչել վերահսկվող իրավական ակտը, մինչդեռ հսկողությունը կրում է պասիվ բնույթ, ինչն արտահայտվում է՝ հսկողություն իրականացնող սուբյեկտին համապատասխան ի-

րավասու մարմին դիմելու իրավունք վերապահելով: Տվյալ դեպքում վերահսկվող իրավական ակտն ուժը կորցրած ճանաչելու իրավասությունը պատկանում է ոչ թե հսկողություն, այլ վերահսկողություն իրականացնող մարմին<sup>2</sup>: Հսկողություն իրականացնող մարմինները լավագույն դեպքում կարող են կասեցնել տվյալ ակտի գործողությունը կամ կիրառումը և վիճարկվող ակտի սահմանադրականությունը պարզելու համար դիմել վերահսկողություն իրականացնող մարմին<sup>3</sup>: Այսպիսով, վիճարկվող ակտի սահմանադրականության հարցի լուծման գործընթացը կոչվում է սահմանադրական վերահսկողություն, իսկ դիմող սուբյեկտի կողմից նախաձեռնություն դրսևորելը պետք է դիտարկել որպես վերահսկողությանն օժանդակող գործունեություն և սահմանադրական վերահսկողության (լայն իմաստով) բաղկացուցիչ մաս՝ սահմանադրական հսկողություն<sup>4</sup>:

Ըստ էության սահմանադրական պատշաճ հսկողության իրականացմամբ իրավունքի համակարգում ապահովվում է Սահմանադրության գերակայությունը: Սահմանադրական հսկողության էությունը այն է, երբ հսկողություն իրականացնող մարմինը իրավական ակտերի՝ Սահմանադրությանը համապատասխանության տեսանկյունից իրականացնում է ամենօրյա դիտարկում, սակայն ոչ միայն համապատասխան դիմումի կամ բողոքի կապակցությամբ, այլև սեփական նախաձեռնությամբ, իր ամենօրյա գործունեության ընթացքում: Ուստի, սահմանադրական հսկողությունը, ըստ էության, ավելի լայն ընդգրկում ունի, քան սահմանադրական դատարան դիմելու գործառույթ իրականացնելը, քանի որ այն ներառում է նաև ի-

րավասու մարմինների ամենօրյա գործունեության ընթացքում Սահմանադրության գերակայության ապահովմանն ուղղված այլ գործառույթների իրականացում: Այստեղ, մասնավորապես, նկատի ունենք ՀՀ Նախագահի կողմից օրինաստեղծ գործընթացին մասնակցելը և սեփական նորմաստեղծ լիազորություններն իրականացնելը:

Հանդիսանալով պետության գլուխը՝ Հանրապետության Նախագահը՝ որպես Սահմանադրության պահպանմանը հետևող ինստիտուտ, օժտված է սահմանադրական հսկողության ոլորտին վերաբերող մի շարք գործառույթներով: Մասնավորապես, Հանրապետության Նախագահը կոչված է իրականացնելու իր լիազորություններն այնպես, որ կանխի իշխանության չարաչափունը իշխանության առանձին ճյուղերի կողմից՝ դրանով ևս իրականացնելով Սահմանադրության պահպանման իր գործառույթը: Այս առումով Հանրապետության Նախագահն օժտված է իրավական անհրաժեշտ լծակների ամբողջական մի համալիրով: Ինչպես իրավացիորեն նշում է Մ. Տեյլենկոն, Սահմանադրության պահպանման երաշխավորի հիմնական աշխատանքը մարդու առջև պետական իշխանության մարմինների պատասխանատվության ապահովումն է, որպեսզի վերջիններս դուրս չգան Սահմանադրությամբ նախանշված շրջանակներից: Այդ առնչությամբ էլ Սահմանադրությունը Հանրապետության Նախագահին օժտում է սահմանադրական հսկողության մի շարք գործառույթներով, որոնցից կարևորը կառավարության ակտերի իրավական ուժը կասեցնելու և Սահմանադրությանը դրանց համապատասխանության հարցով սահմանադրական դատարան դիմելու իրավունքն է՝:

ՀՀ Սահմանադրության 49-րդ հոդվածի համաձայն՝ Հանրապետության Նախագահը պետության գլուխն է: Նա հետևում է Սահմանադրության պահպանմանը, ապահովում օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների բնականոն գործունեությունը: Հանրապետության Նախագա-

հը ՀՀ անկախության, տարածքային ամբողջականության և անվտանգության երաշխավորն է՝: ՀՀ Սահմանադրության դրույթների և իրավական այլ ակտերի վերլուծությունը ցույց է տալիս, որ Հանրապետության Նախագահն իր հսկողական լիազորություններն իրականացնում է հիմնականում երկու եղանակով՝ անմիջականորեն և միջնորդավորված (համապատասխան մարմինների, ծառայությունների ու պաշտոնատար անձանց միջոցով):

Հանրապետության Նախագահի կողմից անմիջական հսկողություն իրականացվում է Սահմանադրությամբ և օրենքներով նախատեսված օրինաստեղծ գործընթացին մասնակցելու, սեփական նորմաստեղծ լիազորություններն իրականացնելու, կառավարության, պետական մի շարք մարմինների ձևավորման, բարձրաստիճան որոշ պաշտոնատար անձանց պաշտոնակ անելու, ինչպես նաև սահմանադրական դատարան դիմելու իր իրավունքն իրականացնելու միջոցով:

ՀՀ Նախագահի հսկողական լիազորությունների շարքում առանձնակի կարևորվում է Ազգային ժողովի ընդունած օրենքների վերաբերյալ հետաձգող արգելքի (վետոյի) իրավունքը: Հանրապետության Նախագահը Ազգային ժողովի ընդունած օրենքն ստանալուց հետո՝ քսանմեկօրյա ժամկետում, ստորագրում և հրապարակում է այն կամ այդ ժամկետում կարող է տվյալ օրենքն իր առարկություններով և առաջարկություններով վերադարձնել Ազգային ժողով՝ պահանջելով նոր քննարկում, եթե գտնում է, որ օրենքը կամ դրա առանձին դրույթները հակասում են հանրապետության Հիմնական օրենքին: Օրինաստեղծ գործունեությանը հակակշռող իր այս լիազորությամբ ՀՀ Նախագահն իրականացնում է նաև սահմանադրական հսկողություն: Բնականաբար, իր կողմից ստորագրվող օրենքում Սահմանադրությանը հակասող դրույթների առկայության դեպքում Նախագահը պարտավոր է կիրառել օրենսդրական հետաձգման իր իրա-

## **ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ**

վունքը, որն օրենսդրական ակտերի որակի նկատմամբ հսկողության յուրօրինակ միջոց է:

2001-2010 թթ. ընթացքում ՀՀ Նախագահն ընդհանենը 10 անգամ է կիրառել օրենսդրական հետաձգման իր իրավունքը, որից մեկի դեպքում ՀՀ Նախագահը հետ է կանչել օրինագիծը Աժ-ին վերադարձնելու մասին իր որոշումը և նպատակահարմար է համարել ստորագրել այդ օրենքը<sup>7</sup>, մեկ դեպքում ՀՀ Նախագահն ընդհանրապես առարկել է օրենքի ընդունմանը՝ նրանում վիճահարույց դրույթների առկայության պատճառով (2003թ. հոկտեմբեր), սակայն չնշելով որևէ առաջարկություն կամ առարկություն<sup>8</sup>, իսկ մեկ այլ դեպքում էլ ՀՀ Նախագահն առարկել է «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի ընդունմանը՝ առաջարկելով նախաձեռնել նոր օրենքի ընդունում՝ Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում քաղաքացիական ծառայություն նախատեսելով<sup>9</sup>: Ինչպես ցույց է տալիս ՀՀ Նախագահի կողմից օրենսդրական հետաձգման իր իրավունքի իրականացման պրակտիկայի ուսումնասիրությունը, վերը նշված 10 կամ առավել ճիշտ լինելու պարագայում՝ 9 դեպքերից միայն 2-ում է՝ Ազգային ժողովը չի համաձայնվել ՀՀ Նախագահի առարկություններին և հաշվի չի առել նրա ներկայացրած առաջարկությունները: Ընդ որում, նշված դեպքերից միայն 2-ում է առարկությունը կրել իրավական բնույթ, այն է՝ միտված է եղել ՀՀ իրավական համակարգի զարգացմանը կամ իրավական ակտում ներքին հակասության բացառմանը<sup>10</sup>:

Հարկ է նշել, որ ներկայումս առկա իրավակարգավորման պայմաններում ՀՀ Նախագահի կողմից իրականացվող սահմանադրական հսկողության կառուցակարգը անհրաժեշտ արդյունավետությամբ չի գոր-

ծում: Խնդիրն այն, որ Ազգային ժողովի ընդունած օրենքների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցով ՀՀ Նախագահին վերապահված սահմանդրական դատարան դիմելու իրավունքը չի դիտվում նաև որպես նրա պարտականություն, չնայած այն ուղղակի բխում է ՀՀ Նախագահի՝ Սահմանադրության երաշխավորը հանդիսանալու տրամաբանությունից: Այդ մասին է վկայում ՀՀ Նախագահի պասիվ գործունեությունը այս ոլորտում: Հայտնի է, որ ՀՀ Նախագահի նշված լիազորության իրականացման գործում լուրջ անելիքներ ունի նրա աշխատակազմը: «ՀՀ Նախագահի աշխատակազմի կառուցողությունը և կառուցվածքը հաստատելու մասին» ՀՀ Նախագահի 2007թ. օգոստոսի 17-ի ՆՀ-193-Ն հրամանագրի 39-րդ կետի համաձայն՝ ՀՀ Նախագահի աշխատակազմում գործում է իրավաբանական վարչություն, որը մասնավորապես համակարգում է ՀՀ Նախագահի ստորագրմանը, հաստատմանը կամ վավերացմանը ներկայացված իրավական ակտերի և դրանց նախագծերի փորձաքննության աշխատանքները, ապահովում է ՀՀ Սահմանադրության 100-րդ հոդվածով նախատեսված հարցերով ՀՀ Նախագահի՝ ՀՀ սահմանադրական դատարան դիմելու գործառնության իրականացումը:

Ինչպես տեսնում ենք, ՀՀ Նախագահի՝ որպես սահմանադրական հսկողության սուբյեկտ, հանդես գալուն առնչվող նրա գրեթե բոլոր գործառնությունների պատշաճ իրականացման համար պատասխանատու է ՀՀ Նախագահի աշխատակազմի իրավաբանական վարչությունը: Սակայն պետք է փաստել, որ, չնայած օրենսդրական և կազմակերպական բավարար հնարավորությունների առկայությանը, ՀՀ Նախագահի (և ոչ միայն նրա, այլև սահմանադրական հսկողություն իրականացնող գրեթե բոլոր մարմինների) կողմից չի դրսևորվում անհրաժեշտ նախաձեռնողականություն այս հարցում: Նման իրավիճակը վկայում է այս խնդրի նկատմամբ ոչ բավարար ուշադրության մասին: ՀՀ Նախագահի աշ-



խատակազմում կամ Նախագահին կից չի գործում որևէ մասնագիտացված կամ դրա համար հատուկ ստեղծված ստորաբաժանում կամ կառույց, որն Ազգային ժողովի ընդունած օրենքների սահմանադրականության հարցը պարզելու նպատակով կիրականացներ պատշաճ իրավական փորձաքննություն: Ազգային ժողովում ևս բացակայում են համապատասխան կառուցակարգեր սահմանադրաիրավական առումով զրագետ օրենքներ մշակելու համար: Արդյունքում ձևավորվում է մի իրավիճակ, երբ օրենսդիրը չունի սահմանադրաիրավական մշակույթի բավարար մակարդակ, սահմանադրական հսկողություն իրականացնող մարմինները ոչ լիարժեք են մասնագիտացած սահմանադրաիրավական հարցերում, իսկ սահմանադրական վերահսկողության մասնագիտացված մարմին հանդիսացող սահմանադրական դատարանը տվյալ պարագայում անզոր է, քանի որ ակտիվ դեր ստանձնելու համար նրան անհրաժեշտ է դիմող սուբյեկտների, այդ թվում՝ ՀՀ Նախագահի ակտիվ նախաձեռնությունը:

Արդյունքում ՀՀ Նախագահի կողմից ստորագրվելուց և հրապարակվելուց հետո զգալի թվով օրենքներ կամ դրանց առանձին դրույթներ, այս կամ այն դիմող սուբյեկտի<sup>11</sup> նախաձեռնությամբ ենթարկվելով սահմանադրական վերահսկողության, ճանաչվում են հակասահմանադրական<sup>12</sup>: Նշված փաստերը խոսում են այն մասին, որ ՀՀ Նախագահի կողմից Ազգային ժողովի ընդունած օրենքներն ստորագրելու ընթացքում պատշաճ սահմանադրական հսկողություն չի իրականացվում վերոնշյալ պատճառներով: Բացի այդ, ՀՀ Նախագահի կողմից որակյալ հսկողություն իրականացնելու համար որոշակի առումով խոչընդոտ է նաև քաղաքական ուժերի հարաբերակցությունն Ազգային ժողովում, քանի որ ՀՀ Նախագահի քաղաքական գիծը տանող և Ազգային ժողովում մեծամասնություն վայելող քաղաքական ուժերը, բնականաբար, իրականացնում են այնպիսի օ-

րինաստեղծ գործունեություն, որը հիմնականում համահունչ է տվյալ ոլորտում ՀՀ Նախագահի քաղաքականությանը կամ առնվազն համաձայնեցվում է նրա հետ: Այս առումով կարելի է ասել, որ օրենսդրական նախաձեռնությունները այս կամ այն չափով նախապես ստանում են ՀՀ Նախագահի հավանությունը և նոր միայն օրինագծերի տեսք ստանում, որի արդյունքում հետագայում զգալիորեն նվազում է այդ օրենքների նկատմամբ ՀՀ Նախագահի կողմից պատշաճ սահմանադրական հսկողություն իրականացնելու հավանականությունը:

Այնուամենայնիվ, սահմանադրաիրավական առումով Հանրապետության Նախագահը պարտավոր է հետևել, որ օրենքները համապատասխանեն Սահմանադրությանը՝ այդ նպատակով կիրառելով ոչ միայն օրենսդրական հետաձգման (որպես կանխիչ գործառույթ կամ նախնական հսկողություն), այլև Սահմանադրությանը գործող օրենքի և Սահմանադրության 100-րդ հոդվածով նախատեսված այլ իրավական ակտերի համապատասխանությունը որոշելու հարցով սահմանադրական դատարան դիմելու իրավունքը՝ որպես հետագա հսկողություն իրականացնելու ձև: Սակայն ձևավորված իրավիճակում սահմանադրական հսկողություն իրականացնելու առումով անիմաստ է ակնկալել ՀՀ Նախագահի ակտիվություն նաև հետագայում, քանի որ հսկողությունն իրականացվում է ընդունված օրենքների նկատմամբ, որոնք, արժանանալով նրա հավանությանը, ժամանակին արդեն ստորագրվել են ՀՀ Նախագահի կողմից:

Այս կապակցությամբ, մեր կարծիքով, նպատակահարմար կլիներ ներդնել սահմանադրական նախնական վերահսկողության ինստիտուտը, որը ՀՀ Նախագահին հնարավորություն կտա մինչև Ազգային ժողովից ստացած օրենքի ստորագրումը դրա սահմանադրականության հարցը պարզելու նպատակով այն ուղարկել սահմանադրական դատարան՝ տվյալ օրինա-

### ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

գիծը ենթարկելով սահմանադրական վերահսկողության: Նպատակահարմար կլինի նաև օրենքների շարքում առանձնացնել օրգանական օրենքների մի խումբ (օրինակ՝ Սահմանադրությամբ ուղղակիորեն նախատեսված դեպքերում ընդունված օրենքները, նյութական և դատավարական օրենսգրքերը, կառավարության, դատական մարմինների և կուսակցությունների գործունեության, իրավական ակտերի ընդունման, ընտրությունների և հանրաքվեների անցկացման կարգը սահմանող, արտակարգ և ռազմական դրության ռեժիմը կանոնակարգող, վարչական պատասխանատվություն նախատեսող օրենքները), որոնք ենթակա են սահմանադրական պարտադիր նախնական վերահսկողության՝ առանց դիմող սուբյեկտի ակտիվ դերակատարման<sup>13</sup>: Մյուս կողմից՝ ընթացիկ (սովորական) օրենքները կարող են ենթարկվել նախնական վերահսկողության ոչ պարտադիր կարգով, իսկ նման վերահսկողության պահանջ առաջ քաշելու իրավունքով կարող են օժտվել Հանրապետության Նախագահը և պատգամավորների առնվազն մեկ հինգերորդը:

Նշված փոփոխությունների ամրագրումը կխթանի ՀՀ Նախագահի առավել ակտիվ գործունեությունը նշված ասպարեզում, քանի որ փորձը ցույց է տալիս, որ միջազգային պայմանագրերի առումով ՀՀ Նախագահը դրսևորում է բավականին մեծ ակտիվություն, ինչը պայմանավորված է սահմանադրական և օրենսդրական համապատասխան ինպերատիվ նորմերի առկայությամբ<sup>14</sup>: Այսպես, ՀՀ սահմանադրական դատարանի ամփոփ վիճակագրության համաձայն՝ 2009թ. ընթացքում ՀՀ Նախագահի կողմից ՀՀ սահմանադրական դատարան է ներկայացվել 54 դիմում, որոնք վերաբերել են բացառապես միջազգային պայմանագրերում ամրագրված պարտավորությունների՝ ՀՀ Սահմանադրությանը

համապատասխանության հարցի որոշմանը<sup>15</sup>:

Օրենսդիր իշխանության ոլորտում ՀՀ Նախագահի սահմանադրական հսկողության գործառնությունների շարքում կարևորվում է նաև ՀՀ Սահմանադրության 111-րդ հոդվածով նախատեսված հանրաքվեով Սահմանադրությունը ընդունելու կամ դրանում փոփոխություններ կատարելու գործընթացին ՀՀ Նախագահի մասնակցության հիմնահարցը: Ըստ նշված հոդվածի՝ հանրաքվեն նշանակում է ՀՀ Նախագահը՝ Ազգային ժողովի առաջարկով կամ համաձայնությամբ կամ իր նախաձեռնությամբ: **Առաջին դեպքում**, երբ նախաձեռնությունը Ազգային ժողովին է, նրա նախագահն Ազգային ժողովի առաջարկությամբ Սահմանադրության ընդունման կամ դրանում փոփոխություններ կատարելու մասին Ազգային ժողովի որոշումը համապատասխան նախագծի հետ միասին դրանք ընդունվելուց հետո՝ 7-օրյա ժամկետում, ուղարկում է Հանրապետության Նախագահին, որը դրանք ստանալուց հետո՝ քսանմեկօրյա ժամկետում, նշանակում է հանրաքվե կամ տվյալ նախագիծն առարկություններով կամ առաջարկություններով վերադարձնում է Ազգային ժողով՝ պահանջելով նոր քննարկում («Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքի 77-րդ հոդվածի 2-րդ մաս): Այս դեպքում Ազգային ժողովի՝ պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երկու երրորդով վերստին առաջարկված Սահմանադրության կամ դրանում փոփոխություններ կատարելու նախագիծը Հանրապետության Նախագահը հանրաքվեի է դնում Ազգային ժողովի սահմանած ժամկետում:

**Մյուս դեպքում**, երբ Սահմանադրությունը ընդունելու կամ դրանում փոփոխություններ կատարելու նախաձեռնությամբ հանդես է գալիս ՀՀ Նախագահը, ապա ներկայացված Սահմանադրության կամ դրանում փոփոխություններ կատարելու մասին նախագիծն Ազգային ժողովում քննարկվում է այն ստանալուց հետո՝ եռամսյա ժամկե-

տում: Ազգային ժողովի նախագահը Սահմանադրության կամ դրանում փոփոխություններ կատարելու նախագիծը հանրաքվեի դնելուն համաձայնություն տալու մասին Ազգային ժողովի որոշումը 7-օրյա ժամկետում ուղարկում է Հանրապետության նախագահին, իսկ Ազգային ժողովի՝ քվեարկությամբ չընդունված նախագիծը հանվում է շրջանառությունից («Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքի 55-րդ և 78-րդ հոդվածներ):

Ընդհանրացնելով վերը շարադրվածը՝ կարելի է փաստել, որ ՀՀ Սահմանադրությամբ և ՀՀ օրենսդրությամբ ՀՀ նախագահին վերապահված լիազորությունները բավարար իրավական հիմք են ստեղծում նրա կողմից սահմանադրական հսկողության ոլորտում ակտիվ դերակատարում ունենալու իմաստով: Լինելով պետական իշխանության յուրօրինակ կրողը, ունենալով իշխանության բոլոր ճյուղերի հետ հատվող լիազորություններ՝ ՀՀ նախագահին ընձեռվում է իրական հնարավորություն՝ իրականացնելու պատշաճ սահմանադրական հսկողություն և ապահովելու Սահմանադրության գերակայությունը<sup>1</sup>:

Վերլուծությունը ցույց է տալիս, որ եթե անհատական դիմումների առատությունը, որի շնորհիվ այդ դիմումները բավական ազդեցություն են ունենում երկրում սահ-

մանադրական օրինականության ամրապնդման վրա, արդեն իսկ անժխտելի փաստ է, ապա նույնը չի կարելի ասել դիմող այլ սուբյեկտների, մասնավորապես ՀՀ նախագահի առնչությամբ: Լուրջ մտահոգության տեղիք է տալիս սահմանադրական դատարան դիմելու իրավասություն ունեցող պետական մարմինների ու պաշտոնատար անձանց շարունակական բնույթ կրող պասիվությունը՝ հատկապես Սահմանադրության գերակայության երաշխավորման տեսանկյունից իրենց պարտականությունները չկատարելու հարցում<sup>2</sup>: Մեր կարծիքով, առանց սահմանադրական և դրան համապատասխան օրենսդրական փոփոխությունների սահմանադրական հսկողության սուբյեկտների, այդ թվում՝ ՀՀ նախագահի պասիվ գործելակերպը միտում ունի մնալու անփոփոխ: Գտնում ենք, որ ՀՀ օրենսդրության համակարգային և նպատակաուղղված փոփոխության դեպքում հնարավոր է որոշակիորեն ակտիվացնել սահմանադրական հսկողության սուբյեկտների պասիվ վարքագիծը՝ դրանով իսկ բարձրացնելով սահմանադրական հսկողության դերակատարումը Սահմանադրության իրավական պաշտպանության ու նրա գերակայության ապահովման գործում:

<sup>1</sup> Տե՛ս ՀՀ Սահմանադրության 100-րդ և 101-րդ հոդվածները:

<sup>2</sup> Տե՛ս Հայաստանի Հանրապետության սահմանադրական իրավունք, պատ. խմբ. Ն.Այվազյան, Եր., 2008, էջ 662:

<sup>3</sup> Տե՛ս Баглай М.В. Конституционное право Российской Федерации. М., 2002, էջ 664: Օրինակ՝ ՀՀ Սահմանադրության 86-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Հանրապետության նախագահը կարող է կասեցնել կառավարության որոշումների գործողությունը մեկ ամիս ժամկետով և դիմել սահմանադրական դատարան՝ Սահմանադրությունը դրանց համապատասխանության հարցը պարզելու համար:

<sup>4</sup> Վ. Մակլակովն առանձնացնում է սահմանադ-

րական վերահսկողությունը լայն և նեղ իմաստով՝ ըստ վերահսկվող ակտերի տեսակների: Մասնավորապես, եթե վերահսկողության օբյեկտ են իրավական բոլոր ակտերը, ապա խոսքը լայն իմաստով սահմանադրական վերահսկողության մասին է, իսկ եթե վերահսկվում են միայն օրենսդիր իշխանության ակտերը, ապա այստեղ արդեն գործ ունենք նեղ իմաստով սահմանադրական վերահսկողության հետ: Տե՛ս Маклаков В.В. Конституционное право зарубежных стран. Общая часть. М., 2006, էջ 124-125:

<sup>5</sup> Տե՛ս Тесленко М.В. Правовая охрана конституции Украины. Автореферат диссертации на соискание ученой степени доктора юридических наук. М., 2009, էջ 40:

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ**

- <sup>6</sup> Համանման ձևակերպումների ենթ հանդիպում նաև մի շարք այլ երկրների սահմանադրություններում՝ Նախագահը Սահմանադրության երաշխավորն է (ՌԴ Սահմանադրության 80-րդ հոդված), Սահմանադրության անխախտելիության երաշխավորն է (Ղազախստանի Սահմանադրության 40-րդ հոդված), հետևում է Սահմանադրության պահպանմանը (Ֆրանսիայի Սահմանադրության 5-րդ հոդված, Ուկրաինայի Սահմանադրության 102-րդ հոդված), ապահովում է Սահմանադրության պաշտպանությունն ու հանրային իշխանության բնականոն գործունեությունը (Ռուսիայի Սահմանադրության 80-րդ հոդված):
- <sup>7</sup> Խոսքը վերաբերում է «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքին, որն ընդունվել է 2002 թ. նոյեմբերի 19-ին և ստորագրվել է ՀՀ Նախագահի կողմից 2003 թ. մարտի 31-ին:
- <sup>8</sup> Նկատի ունենք «ՀՀ ազգային անվտանգության հիմնադրույթների մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որը այդպես էլ չի ստացել օրենքի կարգավիճակ:
- <sup>9</sup> Այս դեպքում 2004 թ. Աժ չի հաղթահարել ՀՀ Նախագահի օրենսդրական արգելքը. այդ օրենքում առաջին փոփոխությունը կատարվել է միայն 2006թ., որը չէր վերաբերում տվյալ հարցին:
- <sup>10</sup> Ինչ խոսք, ՀՀ Նախագահի օրենսդրական հետաձգման (վետոյի) իրավունքը նաև քաղաքական նշանակություն ունի, սակայն դա ամենևին չի բացառում այդ իրավունքի հսկողական նշանակությունը:
- <sup>11</sup> Հիմնականում ֆիզիկական և իրավաբանական անձանց դիմումների հիման վրա:
- <sup>12</sup> Այսպես, 2007-2009թթ. ընթացքում 62 անհատական դիմումների հիման վրա 24 գործերով օրենքների նորմերը ճանաչվել են ՀՀ Սահմանադրությանը հակասող և անվավեր: ՀՀ սահմանադրական բարեփոխումներից հետո ՀՀ սահմանադրական դատարանը 31 գործով օրենքների դրույթները ճանաչել է ՀՀ Սահմանադրությանը հակասող և անվավեր: Տես ՀՀ Սահմանադրական դատարանի հաղորդում 2009թ. ընդունած որոշումների կատարման վիճակի վերաբերյալ: Եր., հունվար, 2010, էջ 4:
- <sup>13</sup> Տես, օրինակ՝ Ռուսիայի Սահմանադրության 72-րդ հոդվածը: Այստեղ առաջարկվում է օրգանական օրենքների նկատմամբ սահմանադրական վերահսկողություն իրականացումը դիտել որպես օրինաստեղծ գործընթացի պարտադիր փուլ, որն իրականացվում է Հանրապետության Նախագահի կողմից մինչև օրենքի ստորագրումը: Տվյալ դեպքում Նախագահին նման իրավունքով օժտելը, որը միաժամանակ պարտականություն է, բխում է նրա սահմանադրաիրավական կարգավիճակից:
- <sup>14</sup> Տես ՀՀ սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետ, «Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդված:
- <sup>15</sup> Տես ՀՀ սահմանադրական դատարանի հաղորդում 2009թ. ընդունած որոշումների կատարման վիճակի վերաբերյալ: Եր., հունվար, 2010, էջ 11:
- <sup>16</sup> 2007 թ. ընթացքում ՀՀ սահմանադրական դատարան է մուտքագրվել ՀՀ Նախագահի 39, իսկ 2008թ. ընթացքում՝ 44, 2009թ.-ին՝ 54 դիմում, որոնք հիմնականում վերաբերել են միջազգային պայմանագրերում ամրագրված պարտավորությունների՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցի որոշմանը: 2007թ. ընթացքում ՀՀ Նախագահի կողմից Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետի հիման վրա որևէ դիմում չի ներկայացվել ՀՀ սահմանադրական դատարան, նման մեկ դիմում ներկայացվել էր 2006թ., որի վերաբերյալ ՀՀ սահմանադրական դատարանը որոշում է կայացրել 2007թ.: Հիշատակված դիմումը վերաբերում էր «Ազգային ժողովի կանոնակարգ» օրենքի որոշ դրույթների՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցի որոշմանը: Տես ՀՀ սահմանադրական դատարանի հաղորդում 2007թ. ընդունած որոշումների կատարման վիճակի վերաբերյալ: Եր., հունվար, 2008, էջ 8-9:
- <sup>17</sup> Տես ՀՀ սահմանադրական դատարանի հաղորդում 2009թ. ընդունած որոշումների կատարման վիճակի վերաբերյալ: Եր., հունվար, 2010, էջ 4:

---

## FUNCTION OF CONSTITUTIONAL SUPERVISION OF PRESIDENT OF RA AT LEGISLATIVE POWER

**Hayk GRIGORYAN**

*postgraduate student of constitutional  
law cathedra of Law faculty of YSU*

---

**A**lmost all state bodies have function of constitutional supervision-head of state as guarantor of Constitution, parliament as legislative organ, ombudsman, government, courts and prosecutor's office. In this article author discusses the function of constitutional supervision of President of RA at legislative power.

As head of the state and as guarantor of Constitution President of the RA has powers at constitutional supervision system.

Direct function of constitutional supervision is legislated by force of participation at legislative process, realization self legislative power, forming government and other state bodies and appealing to constitutional court.

All these functions consider separately and at viewpoint of constitutional supervision as part of constitutional control. Author states that power of President of RA gives legal base for exact realization of function of constitutional supervision at legislative power. Author also gives some suggestions in order to activate the role of President of RA as an organ of constitutional supervision.

---

**ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ**

**ԱՐՑԱԽՅԱՆ ՀԱՎԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՄԻ ՇԱՐՔ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՆԱԳԱՐՑԵՐԻ ՇՈՒՐՋ**

**Լևոն Գեվորգյան**

*ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի  
ասպիրանտ, Վաշինգտոնի իրավագիտության  
քոլլեջի մագիստրոս (LLM)*

**Ք**անի դեռ երկարաձգվում է արցախյան հիմնահարցի քաղաքական լուծումը, պարբերաբար տեղի ունեցող սահմանային ընդհարումները շարունակում են բազմաթիվ մարդկային զոհեր առաջացնել, և չնայած 1994թ. մայիսի 16-ին կնքած զինադադարին՝ Ադրբեջանի Հանրապետությունը (այսուհետ՝ ԱՀ) շարունակում է սպառնալիցությունների ակտիվ մրցավազքը, պարբերաբար խախտում է զինադադարն ու սպառնում դիմել «ինքնապաշտպանության»՝ անգամ ակտիվ ռազմական գործողությունների ավարտից 16 տարի անց: Այս խնդիրները, սակայն, չեն արժանանում պատշաճ իրավական որակման միջազգային ատյաններում:

Արցախյան հիմնահարցի վերաբերյալ ԱՀ իրավական դիրքորոշումը մանրամասն շարադրվել է 2008 թ. դեկտեմբերի 22-ին ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարին հղած նամակում<sup>2</sup>, որտեղ ԱՀ-ն պնդում է, որ Լեռնային Ղարաբաղն ու շրջակա տարածքներ բռնազավթվել (օկուպացվել) են ՀՀ զինված ուժերի կողմից, որ բռնազավթումն ինքնին զինված հարձակման նյութականացված ձև է, և, հետևաբար, այն «տուժող» կողմին՝ ԱՀ-ին, իրավունք է վերապահում դիմելու ինքնապաշտպանության «այն պահից, երբ ակնհայտ կդառնա, որ ձգձգված բանակցությունները չեն հանգեցնում ոչ մի արդյունքի»<sup>3</sup>: Նման դիրքորոշումը, սակայն, առաջացնում է մի շարք իրավական խնդիրներ, որոնց և կփորձենք անդրադառնալ:

**II. Արդյո՞ք բռնազավթումը ագրեսիայի դրսևորում է**

Բռնազավթումը որպես ագրեսիայի տատեսակ բնորոշող սակավաթիվ փաստաթղթերից ամենահայտնին թերևս ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի ընդունած թիվ 3314-ին բանաձևին կից «Ագրեսիայի բնորոշումն» է<sup>4</sup>: Այս փաստաթղթի վկայակոչումը, սակայն, անխուսափելիորեն առաջ է բերում մի շարք հիմնահարցեր: Առաջին, արդյո՞ք «Ագրեսիայի բնորոշումը» սովորության միջազգային իրավունքի բաղկացուցիչ մաս է:

*Նիկարագուայի տարածքում և նրա դեմ ռազմական ու ռազմականացված գործողությունների վերաբերյալ գործով* ՄԱԿ-ի Միջազգային դատարանը նշել է որ ԳԱ-ի «Ագրեսիայի բնորոշման, 3-րդ հոդվածի (ց) կետը ... արտացոլում է սովորության միջազգային իրավունքը»<sup>5</sup>: Բանաձևի վերոնշյալ դրույթը խոսում է «պետության կողմից կամ անունից՝ զինված ջոկատներ, միավորումներ, անկանոն զինված խմբավորումներ և վարձկաններ այլ պետության դեմ ... զինված ուժ գործադրելու նկատառումով ուղարկել[ու]...» մասին: Սակայն Միջազգային դատարանի վճիռը չի անդրադառնում բանաձևի այլ դրույթների սովորության բնույթին: Այս հարցի շուրջ դոկտրինալ մոտեցումները տարբեր են: Մի շարք հեղինակներ գտնում են, որ դատարանի կարծիքը նպատակ էր հետապնդում ընդգծելու ողջ բանաձևի՝ սովորության միջազգային իրավունքի մաս լինելը<sup>6</sup>: Այս տեսանկյունից անհրաժեշտ է մատնանշել, որ թիվ 3314 բանաձևն ընդունվել է առանց քվեարկության, մինչդեռ Միջազգային դատարանը մի շարք դեպքերում դիտարկել է ԳԱ բանաձևերի՝ միաձայն ընդունված լի-

նելու հանգամանքը որպես *opinio juris*-ի վկայություն<sup>7</sup>:

Յեղիհակների մյուս խումբը, ինչպես օրինակ պրոֆեսոր Ա. Կասսեզեմ, առավել զգուշավոր են և գտնում են, որ բանաձևն առնվազն մասամբ է արտացոլում ագրեսիայի համընդհանուր ճանաչում ստացած և հետևաբար արգելված եղանակները<sup>8</sup>: Սակայն, օրինակ, Թ. Մերոնը, ԱՄՆ-ի անունից մասնակցելով Միջազգային քրեական դատարանի ստատուտի նախապատրաստական աշխատանքներին, նշել է. «Մենք չենք փոխում մեր համոզմունքն առ այն, որ բանաձևը չի շարադրում սովորության նորմեր... Ընդունման պահին բանաձևը չէր ամրագրում արդեն կայացած սովորության միջազգային իրավունքը: [...Ավելին,] բանաձևի վրա հիմնված միօրինակ պրակտիկա երբեք չի էլ կայացել: Պարզապես նայեք Անվտանգության խորհրդի լուսնների արձանագրությունները: Եվ եթե որևէ մեկը դեռ ուներ կասկածներ, ապա բանաձև 3314-ի վերաբերյալ մեր քննարկումների ընթացքում առկա հակասություններն ակնհայտորեն ցուցադրում են opinio juris generalis-ի բացակայությունը»<sup>9</sup>:

Տրամաբանությունը, որն ընկած է Միջազգային դատարանի կարծիքի հիման վրա ողջ բանաձևը սովորության միջազգային իրավունքի մաս համարելու փորձերի հիմքում, այն է, որ բանաձևի 3-րդ հոդվածի (g) կետը բանաձևի նախապատրաստական աշխատանքների ընթացքում առավել վիճահարույց էր<sup>10</sup> և այս տրամաբանության համաձայն, եթե ամենավիճահարույց դրույթն անգամ որակվել է Միջազգային դատարանի կողմից որպես սովորության միջազգային իրավունքի մաս, ապա մնացած դրույթներն ինքնըստինքյան պետք է լինեն կայացած սովորության նորմեր<sup>11</sup>: Որքան հիմնավորված կարելի է համարել նման դատողությունը:

3-րդ հոդվածի (g) կետը նշում է. «Ագրեսիա է համարվում նաև պետության կողմից կամ անունից՝ զինված ջոկատներ ... այլ պետության դեմ այնպիսի ծանրության

զինված ուժ գործադրելու նկատառումով ուղարկելը, որը հավասարազոր կլինի նախորդ կետերում թվարկված գործողությունների ծանրությանը»: Սույն դրույթի վերջին մասը ցույց է տալիս, որ այն արժեք ունի միայն նախորդ կետերի հետ կապի մեջ: Ինչպես ինքը՝ Միջազգային դատարանն է նշում, զինված ջոկատներ ուղարկելը կարող է որակվել որպես զինված հարձակում միայն ծանրության այնպիսի աստիճանի հասնելու դեպքում, «որը կորակվեր որպես զինված հարձակում ..., եթե իրականացվեր կանոնավոր զինված ուժերի կողմից»<sup>12</sup>:

Այսպիսով, ցույց տալուց հետո, որ Նիկարագուայում գտնվող համապատասխան խմբավորումների և ԱՄՆ-ի միջև առկա կապը բավարար չէր առաջինների գործողությունները ԱՄՆ-ին վերագրելու համար<sup>13</sup>, Միջազգային դատարանը նշեց, որ «ապստամբներին զենք կամ տեխնիկական կամ այլ բնույթի օժանդակություն տրամադրելը կարող է որակվել որպես ուժի գործադրման սպառնալիք կամ հանդիսանալ միջամտություն այլ պետության ներքին կամ արտաքին գործերին», բայց ոչ զինված հարձակում պետության կողմից<sup>14</sup>:

Այլ խոսքերով՝ Միջազգային դատարանը նշված բանաձևի 3-րդ հոդվածի (g) կետի հետ վարվեց պարզապես ինչպես ոչ պետական կազմավորումների գործողությունները պետություններին վերագրելու ինստիտուտը կարգավորող նորմի հետ: Յետևաբար, քանի որ վերագրելիության հիմնախնդիրը կարգավորող նորմերի ամբողջությունը վերաբերում է միջազգային իրավունքի՝ պետությունների պատասխանատվությունը կարգավորող ճյուղին<sup>15</sup>, այլ ոչ թե ուժի գործադրման վերաբերյալ նորմերի ամբողջությանը, վկայակոչվող տրամաբանությունը (որի համաձայն փաստաթղթում ամրագրված մեկ նորմի սովորության լինելու հետևանքով մյուս նորմերը նույնպես պետք է սովորության լինեն) պարզապես չի գործում:

### ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆԵՔ

Եվ այն փաստը, որ դրույթները հայտնվում են նույն փաստաթղթում, ոչինչ չի փոխում, և ոչ էլ որևէ նշանակություն ունի այն հանգամանքը, որ 3-րդ հոդվածի (g) ենթակետը ամենավիճահարույցն էր բանաձևի նախապատրաստական աշխատանքների ընթացքում: Ավելին, *travaux préparatoires*-ի ընթացքում հիմնական հակասությունները վերաբերում էին պետության՝ զինված ջոկատների գործունեությանը մասնակցելու կամ դրանց վերաբերյալ իմացության անհրաժեշտ աստիճանը որոշելուն, որը բավարար կլիներ պետությանը ազդեցություն համար<sup>16</sup>: Յետևաբար քննարկումների դժվարությունները ոչ մի կապ չունեին ազդեցիկի որևէ կոնկրետ տարատեսակի բնորոշման հետ, և այն, որ օկուպացիան նույնպես հիշատակվում է բանաձևում, բոլորովին էլ չի նշանակում, որ այն ինքնըստինքյան սովորության միջազգային իրավունքի մաս է կազմում: Ավելին, ընդհանրապես վիճելի է բռնազավթման ինստիտուտի *jus ad bellum* (պատերազմ վարելու իրավունք) իրավունքի նորմերին պատկանելու հիմնահարցը:

**Բռնազավթում և *jus ad bellum*:** «Բռնազավթում» եզրույթը պարունակող իրավական փաստաթղթերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դրանք բոլորը պարունակում են *jus in bello* (պատերազմի ժամանակ գործող իրավունք), այլ ոչ թե *jus ad bellum* նորմեր: Ցամաքային պատերազմի օրենքների և սովորույթների վերաբերյալ կանոնները<sup>17</sup>, պատերազմի զոհերի պաշտպանության մասին ժնևի 1949թ. կոնվենցիաները կամ Միջազգային զինված ընդհարումների զոհերի պաշտպանության մասին Լրացուցիչ 1-ին արձանագրությունը, որոնք կարգավորում են բռնազավթման հետ կապված հիմնախնդիրներ, բոլորն էլ վերաբերում են *jus in bello* իրավունքի ճյուղին: Ավելին, միջազգային անվտանգությունը կարգավորող կամ պետությունների

կողմից ուժի գործադրման վերաբերյալ (*jus ad bellum*) նորմեր պարունակող և ոչ մի միջազգային պայմանագիր չի օգտագործում «օկուպացիա» եզրույթը<sup>18</sup> (թերևս միակ բացառությունը կարող է դառնալ Միջազգային քրեական դատարանի ստատուտը՝ ազդեցիկի հանցանքի վերաբերյալ համապատասխան հավելումների ենթարկվելուց հետո):

Ինչ վերաբերում է Գլխավոր ասամբլեայի կողմից տրված ազդեցիկի բնորոշմանը, ապա այն արգելում է բռնազավթումը, միայն եթե վերջինս հետևանք է զինված ուժերի կողմից նվաճման կամ հարձակման<sup>19</sup>: Նույնը կարելի է ասել նաև Գլխավոր ասամբլեայի՝ այս հարցին անդրադարձող այլ բանաձևերի վերաբերյալ, ներառյալ *ՄԱԿ-ի կանոնադրությանը համապատասխան պետությունների միջև բարեկամական հարաբերությունների և համագործակցության վերաբերյալ միջազգային իրավունքի սկզբունքների 1970 թ. հռչակագիրը* (այսուհետ՝ *Միջազգային իրավունքի սկզբունքների հռչակագիր*), որը ուժ կամ ուժի սպառնալիք գործադրելուց ձեռնպահ մնալու սկզբունքի ներքո սահմանում է. «Պետության տարածքը չպետք է լինի ռազմական բռնազավթման առարկա՝ ի հետևանք ՄԱԿ-ի կանոնադրությունը խախտող ուժի գործադրման»:

Այլ խոսքերով՝ հակառակ Ադրբեջանի դիրքորոշման, բռնազավթման փաստը (անգամ եթե այն ապացուցված է) հիմք չի հանդիսանում *per se* «օկուպանտ» պետության դեմ ուժի գործադրման համար<sup>20</sup>: Յետևաբար, ինքնապաշտպանության իրավունքը կարող է վկայակոչվել Ադրբեջանի կողմից միայն այն դեպքում, եթե ՀՀ-ն է ուժ գործադրել, և եթե վերջինս է բռնազավթել Ադրբեջանի տարածքի համապատասխան մասը: Ադրբեջանի նման խճճված տրամաբանության պատճառն այն է, որ ԱՀ-ն չի ճանաչում Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը և հետևաբար չի կարող վկայակոչել ինքնապաշտպանության իրավունքը վերջինիս դեմ<sup>21</sup>:



### III. Բռնագավթե՞լ է արդյոք Հայաստանի Հանրապետությունը Արցախի տարածքը

Հանուն արդարության՝ անհրաժեշտ է նշել, որ քննարկվող հիմնահարցին առնչվող ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի բանաձևերն իրոք օգտագործում են «օկուպացված շրջաններ»<sup>22</sup> ձևակերպումը, սակայն ոչ թե բուն ԼՂՀ-ի, այլ վերջինից դուրս գտնվող տարածքների կապակցությամբ, մինչդեռ որպես օկուպացնող ուժեր հիշատակվում են ոչ թե ՀՀ զինված ուժերը, այլ «հայկական լոկալ ուժերը»<sup>23</sup>: Նույն տրամաբանությունն է կիրառում նաև ԵԱՀԿ-ն՝ օգտագործելով «օկուպացիա» եզրույթը միայն ԼՂՀ-ի շրջակայքում գտնվող տարածքների վերաբերյալ<sup>24</sup>: Չնայած այս ամենին Ադրբեջանը շարունակում է պնդել, թե ՀՀ-ն բռնագավթել է իր տարածքի 20%-ը՝ ներառյալ Արցախի տարածքը<sup>25</sup>:

**Բռնագավթման չափանիշները միջազգային իրավունքում:** Բռնագավթման բնորոշումը տրված է պայմանագրային և սովորութային միջազգային իրավունքում: Ցանաքում պատերազմի օրենքների և սովորույթների վերաբերյալ կանոնների 42-րդ հոդվածի համաձայն. «Տարածքը համարվում է բռնագավթված, երբ այն փաստացի հայտնվում է հակառակորդի զորքի իշխանության ներքո: Բռնագավթումը տարածվում է միայն այն տարածքի վրա, որտեղ նման իշխանություն հաստատվել է և կարող է իրականացվել»: Միջազգային դատարանը *Օկուպացված պաղեստինյան տարածքում պատի կառուցման իրավական հետևանքների վերաբերյալ* խորհրդատվական եզրակացությունում նշել է, որ վերոհիշյալ դրույթն արտացոլում է սովորութային միջազգային իրավունքը<sup>26</sup>: Այնուհետև *Կոնգոյի տարածքում զինված գործողությունների* վերաբերյալ իր վճռում<sup>27</sup> Միջազգային դատարանը նշեց. «Որպեսզի պարզել, թե «օկուպացնող ուժ» է արդյոք այն Պետությունը, որի զինված ուժերը գտնվում են այլ պետության տարածքում ներխուժման (ինտերվենցիայի) արդյունքում ..., Դատարանը պետք է քննի, թե

*արդյոք առկա է բավարար ապացույց ներխուժած պետության կողմից իշխանության հաստատման և իրականացման վերաբերյալ: [Հետևաբար] ... Դատարանը պետք է համոզվի, որ ներխուժած զինված ուժերը ոչ միայն տեղաբաշխված [են] կոնկրետ դիրքերում, այլ նաև փոխարինել [են] տեղական կառավարության իշխանությունը՝ սեփական իշխանությամբ»:*

Այսպիսով, որոշակի իրադրություն բռնագավթում որակելու համար անհրաժեշտ է. 1) առկա լինեն ներխուժած և հակառակորդ պետությանը պատկանող զինված ուժեր, 2) այդ ուժերը պետք է ստանձնած լինեն պետական-իշխանական գործառույթների իրականացումը, 3) պետք է լինեն բռնագավթողի իշխանության հաստատմանը նախորդած պետական կառույցներ, որոնք պետք է զրկվեն իրենց իշխանությունն իրականացնելու հնարավորությունից<sup>28</sup>: Այդ իսկ պատճառով, վերոհիշյալ չափանիշները կիրառելով, Միջազգային դատարանը գտավ, որ Ուզանդան բռնագավթել է Կոնգոյի ժողովրդավարական Հանրապետության միայն մեկ մասը, որտեղ ստեղծել էր նոր վարչական միավոր, և ոչ թե բոլոր այն տարածքները, որտեղ տեղաբաշխված կամ առկա էին նրա կանոնավոր զինված ուժերը<sup>29</sup>: Իսկ Կոնգոյի՝ այսպես կոչված անուղղակի ադմինիստրացիայի վերաբերյալ մեղադրանքները, որը Ուզանդան իբրև թե իրականացնում էր՝ վերահսկելով լոկալ ապստամբներին, Միջազգային դատարանի կողմից չարժանացան հավանության<sup>30</sup>:

Եվս մեկ շատ կարևոր հանգամանք, որն անհրաժեշտ է մատնանշել մեզ հետաքրքրող կոնֆլիկտի կոնտեքստում. Ադրբեջանը չի կարող որակել ԼՂՀ-ն որպես «օկուպացնող ուժ», քանի որ այն պարզապես չի ճանաչում ԼՂՀ-ի հետ հակամարտությունը որպես միջազգային զինված ընդհարում<sup>31</sup>, մինչդեռ այդ հասկացությունը կիրառելի է միայն միջպետական կոնֆլիկտներում<sup>32</sup>: Հետևաբար, «բռնագավթում» եզրույթի կիրառումը Ադրբեջանի համար եղել և շարունակվում է լինել իրենց իշխանությանը հարցադրող և իրենց պետությանը պատկանող տարածքների վերաբերյալ իրենց իշխանությունը պնդող արդյունք:

## **ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ**

նակում է մնալ հնարավոր միայն Արցախի տարածքը՝ Հայաստանի Հանրապետության կողմից բռնազավթված լինելու հանգամանքը ապացուցելու դեպքում:

**Իրականացնում է արդյոք Հայաստանի Հանրապետությունը իշխանական գործառույթներ Արցախի տարածքում:** Այս տեսանկյունից կարևորը ոչ թե հայաստանյան գործառնավորումների՝ ԼԴՀ-ի տարածքում ներկա գտնվելու հիմնախնդիրն է, այլ այն, թե վերջիններս իրականացնում են իշխանական գործառույթներ, թե՞ ոչ: Հետևաբար կարևոր է նշել, որ ԼԴՀ-ն ունի սեփական օրենսդիր, գործադիր և դատական մարմիններ, քաղաքական կուսակցություններ և ներքին քաղաքական ընդդիմություն<sup>33</sup>: ԼԴՀ-ն ունի Սահմանադրություն և մշտական ներկայացուցչություններ վեց պետություններում (ներառյալ ԱՄՆ-ում և Ռուսաստանի Դաշնությունում) և Մերձավոր Արևելքում<sup>34</sup>: Ավելին, Freedom House հասարակական կազմակերպության 2009 հաշվետվության համաձայն, որը գնահատում է ժողովրդավարական ազատությունների աստիճանն ամբողջ աշխարհում, ԼԴՀ-ն պատկանում է մասամբ ազատ պետությունների թվին՝ ունենալով քաղաքական իրավունքների ավելի դրական ցուցանիշ, քան ինքը Հայաստանը<sup>35</sup> (մինչդեռ հատկանշական է, որ Ադրբեյջանը պատկանում է «անազատ պետությունների» թվին<sup>36</sup>):

**Հանդիսանում են արդյոք ԼԴՀ պետական մարմինները Հայաստանի Հանրապետության *de facto* մարմիններ:** Բռնազավթման վերաբերյալ մեղադրանքների հիմնավորման հաջորդ տարբերակը Արցախի տարածքում գործող իշխանության մարմինների գործողությունների վերագրումն է Հայաստանի Հանրապետությանը: Հենց այս մոտեցումն է Ադրբեյջանն օգտագործել ՄԱԿ-ին հղած իր նամակում: Այսպես, Միջազգային հակաիրավական գործողու-

յունների համար պետությունների պատասխանատվության մասին հողվածներում սահմանվում է, որ «Միջազգային իրավունքի համաձայն՝ անձի կամ անձանց խնդիր արարքը համարվում է պետության գործողություն, եթե անձը կամ անձանց խումբն այդ գործողություններն իրականացնելիս փաստացի առաջնորդվում է պետության հանձնարարականներով կամ գործում է պետության ուղղորդման կամ վերահսկողության ներքո»<sup>37</sup>:

Միջազգային դատարաններն ու տրիբունալները ոչ պետական մարմինների գործողությունների՝ պետություններին վերագրելու նպատակով կիրառում են երկու տարբեր չափանիշներ՝ «արդյունավետ վերահսկողության չափանիշ» (effective control test) և «ընդհանուր վերահսկողության չափանիշ» (overall control test): Առաջին չափանիշի համաձայն, որը մշտապես կիրառվել է ՄԱԿ-ի Միջազգային դատարանի կողմից, որպեսզի գործողությունը վերագրելի լինի պետությանը, «պետք է ապացուցվի, որ Պետությունն իրականացրել է արդյունավետ վերահսկողություն ... [այն գործողությունների] նկատմամբ, որոնց ընթացքում տեղի են ունեցել ենթադրյալ խախտումները»<sup>38</sup>:

*Նիկարագուայի տարածքում և նրա դեմ ռազմական ու ռազմականացված գործողությունների վերոբերյալ գործում ՄԱԿ-ի միջազգային դատարանը տվել է հետևյալ մեկնաբանությունը. «Պետության մասնակցությունը [ոչ պետական մարմինների] ֆինանսավորմանը, կազմակերպմանը, վերապատրաստմանը, սպասարկմանը և զինմանը, ինչպես նաև նրանց բոլոր գործողությունների պլանավորումը, որքան էլ լինեն էական և վճռորոշ, միևնույնն է, ինքնին բավարար չեն ... վերագրելիության համար: Անգամ պետության կողմից զինված ջրկատի նկատմամբ իրականացվող ընդհանուր վերահսկողությունը՝ կախվածության բարձր աստիճանով, ինքնին չի նշանակում, առանց հավելյալ ապացույցների, որ [Պետությունը] ուղղորդում է այդ գործո-*

դրությունները կամ նպաստում է դրանց իրականացմանը»<sup>39</sup>:

Ի տարբերություն ՄԱԿ-ի Միջազգային դատարանի՝ նախկին Հարավսլավիայի տարածքում միջազգային մարդասիրական իրավունքի լուրջ խախտումների համար պատասխանատու անձանց հետապնդման միջազգային քրեական տրիբունալը (այսուհետ՝ ՀՄՔՏ) կիրառում է այսպես կոչված «համընդհանուր վերասկողության» չափանիշը, որը «արդյունավետ վերահսկողության» չափանիշի համեմատ սահմանում է զգալիորեն ավելի ցածր շեմ: Այսպես, ՀՄՔՏ-ի դիրքորոշմամբ. «Պետության վերահսկողությունը իրեն ենթարկվող զինված ջոկատների կամ ռազմական կամ ռազմականացված խմբավորումների նկատմամբ կարող է լինել համընդհանուր բնույթի... Միջազգային իրավունքի համաձայն՝ բոլորովին էլ պարտադիր չէ, որ վերահսկող իշխանությունները պլանավորեն իրենց ենթակա միավորների բոլոր գործողությունները, ընտրեն նրանց ռազմական թիրախները կամ տան ռազմական գործողությունների վերաբերյալ հատուկ հանձնարարականներ... Միջազգային իրավունքի կողմից պահանջվող վերահսկողությունը կարելի է համարել հաստատված, երբ պետությունը ... ունի դերակատարություն զինված խմբի գործողությունների կազմակերպման, կորդինացման և պլանավորման մեջ՝ ի հավելում այդ խմբի ֆինանսավորմանը, նախապատրաստմանը կամ օպերատիվ օժանդակության տրամադրմանը»<sup>40</sup>:

Սակայն Ցեղասպանության հանցագործության կանխարգելման և պատժելու վերաբերյալ կոնվենցիայի կիրառման վերաբերյալ գործով Միջազգային դատարանը հերքեց «համընդհանուր վերահսկողության» չափանիշի կիրառելիությունը<sup>41</sup>՝ նշելով, որ ՀՄՔՏ-ն չունի պետության պատասխանատվության հիմնահարցերով զբաղվելու առաջադրանք, և որ «համընդհանուր վերահսկողության» չափանիշը կարող է օգտագործվել, օրինակ, երբ որոշ-

վում է միջազգային<sup>42</sup> է արդյոք ընդհարումը, թե՞ ոչ<sup>43</sup>: Անգամ ինքը՝ ՀՄՔՏ-ն, ընդունում է, որ անհրաժեշտ պետական վերահսկողության աստիճանը կախված է կոնկրետ պայմաններից<sup>44</sup>: Ուստի պետք է նշել, որ բռնազավթումը պետք է լինի արդյունավետ՝ իր բնորոշումից իսկ ելնելով, քանի որ «արդյունավետ վերահսկողությունը» բռնազավթման անօտարելի հատկանիշներից է<sup>45</sup>:

Այս իմաստով Արցախի պարագայում բավարար է վկայակոչել մի քանի փաստ: 1993 թ. հունիսի 14-ին ՀՀ Նախագահ Լ. Տեր-Պետրոսյանը ստիպված էր մեկնել ԼՂՀ, որպեսզի համոզի տեղի խորհրդարանին ընդունել ԱՄՆ-ի և Ռուսաստանի կողմից առաջարկվող խաղաղության ծրագիրը, և չնայած դա նրան հաջողվեց<sup>46</sup>, միևնույն է, Ադրբեյջանում սկսված քաղաքական անհանգստություններից հետո՝ հունիս ամսվա վերջին, արցախյան զինված ուժերը շարունակեցին զինված գործողությունները: Փաստորեն ՀՀ-ն չէր իրականացնում «արդյունավետ վերահսկողություն» ԼՂՀ խորհրդարանի նկատմամբ: Այն չէր իրականացնում անգամ «համընդհանուր վերահսկողություն» ԼՂՀ զինված ուժերի նկատմամբ: Այսպես, մի շարք ռազմական գործողություններ, մասնավորապես Քարվաճառի (Քելբաջարի) ազատագրումը, իրականացվել են հակառակ ռազմական գործողությունները դադարեցնելու վերաբերյալ ՀՀ Նախագահի կոչերի<sup>46</sup>:

Հատկանշական է, որ Անվտանգության խորհրդի թիվ 853 բանաձևը<sup>47</sup> կոչ էր անում ՀՀ կառավարությանը «շարունակել օգտագործել իր ազդեցությունը Լեռնային Ղարաբաղի շրջանի հայկական բնակչության նկատմամբ՝ թիվ 822 բանաձևի պահանջները պահպանելու նպատակով»: Հայաստանի ազդեցության մասին խոսելիս «շարունակել» բառի կիրառումը վկայում է այն մասին, որ ՀՀ կառավարությունը ձեռնարկել էր փորձեր՝ կանգնեցնելու արցախյան զինված ուժերի առաջխաղացումը անգամ մինչև բանաձևի ընդունումը, սակայն ա-

## ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ

պարոյուն:

Նույն տրամաբանությամբ թիվ 884 բանաձևը,<sup>48</sup> օգտագործելով նույն շարադրանքը, նաև կոչ էր անում Հայաստանի Հանրապետությանը «երաշխավորել, որ ներգրավված զինված ուժերը չստանան միջոցների իրենց ռազմական գործողությունների ընդարձակման համար...»: Այս ձևակերպումից հստակ երևում է, որ Անվտանգության խորհուրդը չէր գտնում, որ ՀՀ կառավարությունն ինքն է ռազմական օժանդակություն տրամադրում, բայց և ունակ էր կանխարգելելու նման օժանդակության տրամադրումը:

**Յուրացրե՞լ են արդյոք ԼՂՀ-ն կամ Հայաստանի Հանրապետությունը Ադրբեջանի իշխանական գործառույթները, և ժառանգե՞լ է արդյոք ԱՀ-ն իրավական տիտղոս:** Ռոշակի իրավիճակ որպես բռնազավթում որակելու անհրաժեշտ տարրերից մեկը, ինչպես արդեն նշվեց, տեղական իշխանությունների գործառույթների յուրացումն է: Հետևաբար ՀՀ-ն կարող է օկուպանտ լինել միայն այն դեպքում, եթե Ադրբեջանը ունեցել և ունի օրինական տիտղոս Լեռնային Ղարաբաղի նկատմամբ:

Ադրբեջանի դիրքորոշման համաձայն վերջինս Լեռնային Ղարաբաղի նկատմամբ տիտղոս է ժառանգել *uti possidetis* սկզբունքի հիման վրա<sup>49</sup>, ըստ որի՝ մայրապետության, տվյալ դեպքում ԽՍՀՄ-ի վարչական սահմանները պետք է վերածվեն նոր անկախ պետությունների միջազգային սահմանների<sup>50</sup>: Սակայն Լեռնային Ղարաբաղի դեպքում տվյալ սկզբունքի կիրառելիությունը առաջացնում է խնդիր նախ և առաջ ԽՍՀՄ-ի ներքին վարչական սահմանի ստեղծման օրինականության տեսանկյունից: Նախ, *uti possidetis* սկզբունքը բոլորովին էլ բացարձակ չէ<sup>51</sup>: Այսպես օրինակ Արևմտյան Սահարայի վերաբերյալ խորհրդատվական եզրակացությունում ՄԱԿ-ի Միջազգային դատարանը, քննարկելով

տարածաշրջանի ինքնորոշման իրավունքը ժառանգած վարչական սահմանների շրջանակներում, նախ ցույց տվեց, որ Արևմտյան Սահարայի նկատմամբ տարածքային պահանջներ ներկայացնող պետությունները՝ Մավրիթանիան և Մարոկոն, նախքան Իսպանիայի կողմից Արևմտյան Սահարայի գաղութացումը դրա տարածքի նկատմամբ ինքնիշխանություն չեն ունեցել<sup>52</sup>, ինչի առկայությունն ըստ երևույթին կազդեր Արևմտյան Սահարայի պետականության ստեղծման կամ առնվազն դրա ուրվագծի վրա:

Ի տարբերություն Արևմտյան Սահարայի՝ Լեռնային Ղարաբաղի տարածքում հակամարտությունն առկա էր դեռևս նախքան խորհրդային Միության ստեղծումը: Այսպես, 1918թ. մայիսին Անդրկովկասում անկախ հանրապետությունների ստեղծման պահից<sup>53</sup> ընդհուպ մինչև տարածաշրջանի խորհրդայնացումը Լեռնային Ղարաբաղի նկատմամբ փաստացի վերահսկողությունը մի քանի անգամ անցել է մի կողմից մյուսին: Նախ, անկախ հանրապետությունների ստեղծման պահից տեղական իշխանությունը Լեռնային Ղարաբաղում գտնվում էր տեղի հայերի ձեռքում, որոնք գումարեցին իրենց Առաջին համազումարը (մարմին, որն իրականացնում էր իշխանական գործառույթներ) 1918 թ. օգոստոսի 5-ին՝ հրաժարվելով ճանաչել ադրբեջանական իշխանությունը<sup>54</sup> և բուն Հայաստանի ռազմական աջակցությամբ պայքարելով ադրբեջանական և թուրքական զորքերի դեմ<sup>55</sup>:

Սակայն 1919 թ. հունվարի 15-ին Բաքվում գտնվող բրիտանական զինված ուժերը տարածաշրջանում նշանակեցին մահմեդական կառավարիչ (գեներալ-գուբերնատոր)<sup>56</sup>, որի իշխանությունը, սակայն, կտրականապես մերժվեց տեղացիների կողմից: Այնուամենայնիվ բրիտանական զինված ուժերի օգնությամբ<sup>57</sup> և անկանոն ջոկատների միջոցով 1919 թ. հունիսին հայաբնակ գյուղերից մեկն այրելուց և շուրջ 600 մարդ կոտորելուց հետո<sup>58</sup> նորանշա-

նակ կառավարիչը օգոստոսի 15-ին Ղարաբաղի հայկական Յոթերորդ հանրագումարին ստիպեց ընդունել, դաշնագրի շարադրանքի համաձայն, «[նոր գեներալ-գուբերնատորի] ժամանակավոր իշխանությունը նախքան Փարիզի խաղաղության կոնֆերանսի որոշման կայացումը...»<sup>60</sup>: Այս իրադարձությանը, սակայն, 1920 թ. փետրվարին հետևեցին հայերի նոր ջարդեր՝ այս անգամ արդեն թուրքական զինված ուժերի միջոցով<sup>61</sup>:

Հետաքրքիր է, որ այս փաստը երբեմն մի շարք հեղինակների կողմից մեկնաբանվում է որպես ադրբեջանական տիտղոսի ապացույց<sup>61</sup>: Եվ թեև անհրաժեշտ է նշել, որ տարածքային ձեռքբերումները զինված ուժի միջոցով դեռևս ենթակա չէին համընդհանուր արգելքի միջազգային իրավունքում, միևնույն է, տեղական բնակչության դիմադրությունը և վերջինիս հետագա ճնշումը, ինչպես նաև երրորդ կողմ հանդիսացող գաղութարար տիրության՝ Բրիտանիայի զինված ուժերի միջամտությունը ստիպում են բնութագրել Լեռնային Ղարաբաղը Ադրբեջանի առաջին հանրապետության կազմում ոչ թե որպես մետրոպոլիայի բաղկացուցիչ մաս, այլ ոչ ինքնակառավարվող տարածք, այսինքն՝ տարածք՝ օժտված արտաքին ինքնորոշման իրավունքով: Այսպես, պրոֆեսոր Քրոուֆորդը նշում է, որ «մետրոպոլիա» եզրույթը նախ և առաջ տարածքի՝ պետության հետ ունեցած պատմական, ինչպես նաև աշխարհագրական կապի բնութագիրն է<sup>62</sup>: Եվ եթե Արցախն աշխարհագրական առումով կից է և՛ Ադրբեջանին, և՛ Հայաստանին, ապա նրա էթնիկ կազմն ու պատմությունը բոլորովին էլ չեն խոսում Ադրբեջանի օգտին: Ավելին, այն, որ Ադրբեջանը որպես անկախ պետություն գոյություն չի ունեցել նախքան 1918 թ. (փաստ, որը հաստատվել է անգամ Ազգերի լիգայի կողմից<sup>63</sup>), Արցախի՝ ադրբեջանական մետրոպոլիայի մաս լինելու վերաբերյալ հավակնությունները դարձնում են պարզապես անհիմն:

Հետագա պատմական իրադարձու-

յունները, սակայն, միայն ավելի խճճեցին իրավիճակը: 1920 թ. Ադրբեջանն ու Հայաստանը խորհրդայինացվեցին, ինչին հաջորդեց Ադրբեջանի հրաժարումը տարածքային հավակնություններից՝ 1920 թ. նոյեմբերի 30-ին ճանաչելով Լեռնային Ղարաբաղի՝ խորհրդային Հայաստանի բաղկացուցիչ մաս լինելու փաստը<sup>64</sup>: Այս հանգամանքը 1921թ. հուլիսի 4-ին հաստատվեց նաև Կոմկուսի կովկասյան բյուրոյի կողմից<sup>65</sup>: Սակայն հենց հաջորդ օրը՝ հուլիսի 5-ին, բյուրոն կրկին միստ գումարեց, որտեղ Ի. Ստալինի ճնշման ներքո առանց քվեարկության ընդունեց հակառակ բովանդակության բանաձև՝ ճանաչելով ադրբեջանական իշխանությունը Լեռնային Ղարաբաղի նկատմամբ<sup>66</sup>: Այդպիսով, հաստատված սահմանը վերածվեց նաև ներքին վարչական սահմանի 1922 թ.-ին:

Այս խճճված իրադրությունը կարող է ունենալ առնվազն երկու իրավական լուծում: Նախ, եթե հաշվի առնենք, որ Կարմիր բանակի ներխուժումը անդրկովկասյան պետություններ ոչ այլ ինչ էր, քան վերջիններիս *de facto* նվաճում Ռուսաստանի ԽՍՀՄ կողմից, անհրաժեշտ է տալ այդ նվաճման և բոլոր այն հաջորդ իրադարձությունների իրավական գնահատականը, որոնց մասնակցել է ՌԽՍՀՄ-ն: Հատկանշական է, որ խորհրդային Ռուսաստանը իր գոյության առաջին իսկ տարիներից բնութագրել է ուժի գործադրումը որպես միջազգային հակաիրավական արարք<sup>67</sup>: Այս տեսանկյունից անհրաժեշտ է նշել, որ տարբեր դատական ատյաններ բազմիցս օգտագործել են պետությունների՝ իրենց միջազգային-իրավական պարտավորությունների վերաբերյալ արտահայտած դատողությունները այդ իսկ պետությունների դեմ՝ որպես մնացած պարտավորություններ ստանձնած լինելու ապացույց<sup>68</sup>:

Հետևաբար, միջազգային իրավունքում կիրառվող *ex injuria jus non oritur* սկզբունքի համաձայն՝ հակաիրավական արարքը չի կարող լինել շահերի և իրավունքների աղբյուր<sup>69</sup>: Ոչ միայն ՄԱԿ-ի Միջազգային

### ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ

դատարանը, այլ նաև Միջազգային արդարադատության մշտական պալատն իրենց վճիռներում հաստատել են սույն սկզբունքի կիրառելիությունը տարածքային վեճերում<sup>70</sup>: Այս տեսանկյունից կարմիր բանակի ներխուժումը անդրկովկասյան պետություններ, ինչպես նաև Կոմկուսի կովկասյան բյուրոյի որոշումը ոչ այլ ինչ են, եթե ոչ հակաիրավական արարք, այսինքն՝ *injuria*, որոնք չեն կարող լինել իրավունքի աղբյուր, այսինքն՝ *jus non oritur*: Նման պարագայում Ադրբեջանի Հանրապետության կողմից *uti possidetis* սկզբունքի վկայակոչումը դառնում է լիովին չհիմնավորված:

Մյուս կողմից, Կոմկուսի կովկասյան բյուրոյի որոշումը ոչ այլ ինչ է, քան արդեն հաստատված ոչ ինքնակառավարվող տարածքի կարգավիճակի վերահաստատում, որը հետագայում արդեն այդ տարածքի բնակչությանը պետք է տար արտաքին ինքնորոշման իրավունք նորանկախ Ադրբեջանից:

#### **IV. Զինադադարի խախտումներ. ինքնապաշտպանություն, թե՛ ուժի գործադրման միջազգային-իրավական արգելքի խախտում**

Չնայած 1994 թ. զինադադարին՝ ԱՀ-ն պարբերաբար սպառնում է լուծել արցախյան հակամարտությունը ռազմական ճանապարհով՝ փորձելով նման հավանական ռազմական լուծումը որակել որպես ինքնապաշտպանություն: Նման կեցվածքին իրավական զնահատական տալն ավելի է կարևորվում՝ հաշվի առնելով զինադադարի խախտումների հաճախակիացումը 2010թ.:

Այս խնդրի լուծումն իհարկե շատ պարզ է, եթե Հայաստանի Հանրապետությունը չի գործադրել ագրեսիա և չի բռնազավթել Լեռնային Ղարաբաղը. ադրբեջանական հարձակումներն ու սպառնալիքներն այս

պարագայում ՄԱԿ-ի Կանոնադրության 2-րդ հոդվածի 4-րդ կետի խախտում են: Սակայն հարցի ամբողջական իրավական վերլուծության նպատակով անհրաժեշտ է քննարկել խնդիրը նաև ԱՀ դիրքերի ճշմարտացիության կանխավարկածից: Կամ այլ խոսքերով՝ իսկ ի՞նչ իրավական որակում պետք է տալ ԱՀ գործողություններին, եթե միջազգային իրավունքի տեսանկյունից Հայաստանի Հանրապետությունն իրոք բռնազավթած լինել Լեռնային Ղարաբաղը:

Եթովպիա – Էրիթրեա զանգատների հանձնաժողովը, որն ի թիվս այլոց կոչված էր լուծելու նաև այդ երկու պետությունների միջև ուժի գործադրման և տարածքային հավակնությունների վերաբերյալ խնդիրներ, նշել է. «Պետությունների պրակտիկան ... ցույց է տալիս, որ ինքնապաշտպանությունը չի կարող վկայակոչվել տարածքային վեճեր կարգավորելիս: Այս կապակցությամբ հանձնաժողովը նշում է, որ այսօր տարածքային վեճերը պետությունների միջև այնքան հաճախակի են, որ ուժի կամ ուժի սպառնալիքի գործադրման արգելքից ցանկացած բացառություն մի տարածքի նկատմամբ, որը ենթադրաբար ապօրինի կերպով բռնազավթված է, կստեղծեր հսկայական և վտանգավոր բաց միջազգային իրավունքի այդ հիմնարար կանոնում»<sup>71</sup>:

Այս նույն մոտեցումը հետագայում վերահաստատվել է նաև Արբիտրաժային մշտական դատարանի կողմից *Գայանան ընդդեմ Սուրինամի* գործում<sup>72</sup> (ուր Սուրինամը ուժ էր գործադրել Գայանայի կողմից ենթադրաբար օկուպացված մայրցամաքային ելուստի սահմաններում), այն բազմիցս վերահաստատվել է նաև պետությունների պրակտիկայում: Օրինակ, երբ 1961թ. Հնդկաստանը նվաճեց պորտուգալական գաղութներ Գոան, Դամաոն և Դիուև՝ արդարացնելով սեփական գործողությունները Պորտուգալիայի՝ այդ կղզիների վրա անօրինական ներկայությամբ, այն քննադատվեց Անվտանգության

խորհրդի պետությունների մեծամասնության կողմից (բացառությամբ ԽՍՀՄ-ի, որը վետոյի ենթարկեց Չնդկաստանին դատապարտող բանաձևը)<sup>3</sup>: Նույնը հաստատում են նաև միջազգային իրավունքի մի շարք հեղինակավոր մասնագետներ<sup>4</sup>: Այսպես, ամերիկյան իրավաբան Օսկար Շախտերը նշել է, որ «ՄԱԿ-ի Կանոնադրության 2-րդ հոդվածի 4-րդ կետով նախատեսված ուժի գործադրման արգելքում «տարածքային ամբողջականություն» եզրույթը վերաբերում է այն պետություններին, որոնք փաստացի իշխանություն են իրականացնում այդ տարածքի նկատմամբ՝ անկախ այդ իշխանության օրինականության վերաբերյալ վեճերի»<sup>5</sup>: Նման մոտեցումը լիովին արդարացված է նաև ժամանակակից միջազգային իրավունքի կողմից պաշտպանվող արժեքների առաջնայինության տեսանկյունից: Այսպես, ՄԱԿ-ի Կանոնադրության կառուցվածքը հստակորեն վկայում է այն մասին, որ խաղաղության և անվտանգության պահպանումը համարվում են Սիավորված ազգերի առաջնային նպատակը<sup>6</sup>: Ինչպես մատնանշվում է հենց Կանոնադրության նախաբանում, այն նպատակ է հետապնդում «... փրկելու գալիք սերունդները պատերազմի արհավիրքից ... և վերահաստատել հավատը մարդու հիմնարար իրավունքների ... նկատմամբ»: Հասկանալի է, որ նման տրամաբանությամբ զինադադարի խախտումներն ավելի են խարխլում միջազգային խաղաղությունը և վտանգում ՄԱԿ-ի Կանոնադրության առաջնային նպատակները, քան երկարածոված ենթադրյալ «բռնազավթում», որի

պահպանման ընթացքում տեղի չեն ունենում ռազմական գործողություններ և չեն առաջանում մարդկային զոհեր:

Այս տեսանկյունից ԱՅ դիրքորոշումը լիովին անհիմն է: Այսպես, Ադրբեջանի Հանրապետության՝ ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարին հղած նամակում նշվում է. «*Երբ զինված հարձակումն առաջացնում է շարունակական արդյունքներ (օկուպացիայի տեսքով), և այն ժամանակահատվածում, որն անցնում է այդ զինված հարձակման սկզբից, տուժող կողմը չի մնջում, այլ շարունակում է ճնշում գործադրել՝ փորձելով լուծել վեճը խաղաղ ճանապարհով, ինքնապաշտպանության իրավունքը շարունակում է մնալ չվնասված՝ անկախ այն երկար ժամանակահատվածից, որն ընկած է (անօրինական) ուժի գործադրման սկզբնական պահից ընդհուպ մինչև (օրինական) հակահարվածը*»<sup>7</sup>:

Այս մոտեցումն ակնհայտ հակասության մեջ է մեր կողմից արդեն վերը հիշատակված դատական որոշումների, պետությունների միջազգային պրակտիկայի, ինչպես նաև հեղինակավոր մասնագետների աշխատությունների հետ: Անգամ եթե ՀՀ մասնակցության վերաբերյալ ԱՅ գնահատականները միջազգային իրավունքի տեսանկյունից լինեին ճիշտ, միևնույնն է, վերջինիս կողմից զինադադարի պարբերական խախտումները և հատկապես ուժի գործադրման և արցախյան հակամարտությունը զինված ճանապարհով լուծելու սպառնալիքները ոչ այլ ինչ են, եթե ոչ ՄԱԿ-ի Կանոնադրության 2-րդ հոդվածի 4-րդ կետի խախտում:

<sup>1</sup> Տե՛ս, օրինակ, Interview of President of Azerbaijan I. Aliiev to Euronews (Feb. 2, 2010), հասանելի է հետևյալ կայքում՝ <http://www.euronews.net/2010/02/02/interview-with-ilham-aliyev-president-of-azerbaijan/>.

<sup>2</sup> Letter dated 22 December 2008 from the Permanent Representative of Azerbaijan to the

United Nations addressed to the Secretary-General, U.N. Docs. A/63/662-S/2008/812, (Dec. 22, 2008).

<sup>3</sup> Տե՛ս նույն տեղը:

<sup>4</sup> Definition of Aggression art. 3(a), Annex to G.A. Res. 3314 (XXIX), Supp. No. 31, U.N. Doc. A/9631 (1974) [hereinafter GA Definition of Aggression].

**ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ**

- <sup>5</sup> *Military and Paramilitary Activities in and Against Nicaragua (Nic. v. U.S.)*, 1986 I.C.J. Rep. 14, p. 103, para. 195 [hereinafter *Nicaragua*].
- <sup>6</sup> Տե՛ս, օրինակ, M. M. Goma, “The Definition of the Crime of Aggression and the ICC Jurisdiction over the Crime”, in *The International Criminal Court and the Crime of Aggression* 55 (M. Politi & G. Nesi ed., Ashgate 2004), p. 74 (“the Court, by referring to that particular sub-paragraph wanted to say that it had the same status as the others which were already reflective of custom”), տե՛ս նաև Y. Dinstein, *War, Aggression and Self-Defence* (4<sup>th</sup> ed., Cambridge University Press 2005), p. 129 (“[t]he fact that paragraph (g) has been pronounced by the [ICJ] to be declaratory of customary international law is possibly indicative that other portions of Article 3 may equally be submitted under the heading of true codification”):
- <sup>7</sup> Տե՛ս, օրինակ, *Legality of the Threat or Use of Nuclear Weapons*, Advisory Opinion, 1996 I.C.J. Rep. 226, pp. 254-255, para. 70 (“General Assembly resolutions ... can, in certain circumstances, provide evidence important for establishing the existence of a rule or the emergence of an *opinio juris*”), տե՛ս նաև *Nicaragua*, հղում թիվ 5, p. 100, para. 188, and p. 106, para. 202.
- <sup>8</sup> A. Cassese, *International Criminal Law* (1<sup>st</sup> ed., Oxford University Press 2003), p. 113.
- <sup>9</sup> *The speech is available in* S. D. Murphy, “Contemporary Practice of the United States Relating to International Law”, 95 *American Journal of International Law* 387 (2001), p. 400, տե՛ս նաև O. Solera, *Defining the Crime of Aggression* (Cameron May 2007), pp. 201-202 (“[the Consensual Definition of Aggression is simply] just another diplomatic effort that went without important consequences”), P. Wilson, *Aggression, Crime and International Security: Moral, Political and Legal Dimensions of International Relations* (Routledge, Taylor & Francis Group: London and New York 2009), p. 82.
- <sup>10</sup> Goma, op.cit, p. 73.
- <sup>11</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 74:
- <sup>12</sup> *Nicaragua*, հղում թիվ 5, p. 103, para. 195.
- <sup>13</sup> Տե՛ս նույն տեղը, p. 62-65, para. 109-115:
- <sup>14</sup> Տե՛ս նույն տեղը, p. 104, para. 195:
- <sup>15</sup> Articles on Responsibility of States for Internationally Wrongful Acts, art. 8, G.A. Res. 56/83, Annex, Agenda Item 162, U.N. Doc. A/RES/56/83 (2001).
- <sup>16</sup> Տե՛ս, օրինակ, Solera, հղում թիվ 9, p. 188.
- <sup>17</sup> Regulations concerning the Laws and Customs of War on Land, Art. 42, Annex to the Convention respecting the Laws and Customs of War on Land, Oct., 18, 1907, հասանելի է հետևյալ կայքում՝ <http://www.icrc.org/ihl.nsf/0/1d1726425f6955aec125641e0038bfd6>.
- <sup>18</sup> Տե՛ս U.N. Charter, Arts. 2(4), 39-51; Covenant of the League of Nations, Arts. 10, 11, June 28, 1919, in 1 *League of Nations – Official Journal* 3 (1920); Treaty between the United States and other Powers Providing for the Renunciation of War as an Instrument of National Policy, Art. 1, Aug. 27, 1928, 94 L.N.T.S. 57.
- <sup>19</sup> Definition of Aggression, հղում թիվ 4, art. 3(g).
- <sup>20</sup> Y. Dinstein, *The International Law of Belligerent Occupation* (Cambridge University Press 2009), pp. 2-3.
- <sup>21</sup> *Legal Consequences of the Construction of a Wall in the Occupied Palestinian Territory*, Advisory Opinion, 2004 I.C.J. Rep. 136, p. 194, para. 139 (“Article 51 of the Charter ... recognizes the existence of an inherent right of self-defence in the case of armed attack by one State against another State”) [hereinafter *Wall Case*].
- <sup>22</sup> S.C. Res. 822, U.N. Doc. S/RES/822, para. 1 (April 30, 1993); S.C. Res. 853, U.N. Doc. S/RES/853, paras. 1, 3 (July 29, 1993); S.C. Res. 884, U.N. Doc. S/RES/874, para. 5 (Nov. 12, 1993); S.C. Res. 884, U.N. Doc. S/RES/884, paras. 1, 4 (Nov. 12, 1993).
- <sup>23</sup> S.C. Res. 822, տե՛ս վերը, preamble.
- <sup>24</sup> Տե՛ս, օրինակ, Report of the OSCE Fact-Finding Mission (FFM) to the Occupied



- Territories of Azerbaijan Surrounding Nagorno-Karabakh (NK), in U.N. Doc. A/59/747-S/2005/187 (March 21, 2005).
- <sup>25</sup> Letter to the UN, հղում թիվ 2, p. 8, para. 19.
- <sup>26</sup> *Wall Case*, հղում թիվ 21, p. 167, para. 78; տե՛ս նաև *Armed Activities on the Territory of the Congo (The D.R.C. v. Uganda)*, 2005 I.C.J. Gen. List No. 116, p. 59, para. 172.
- <sup>27</sup> *The D.R.C. v. Uganda*, տե՛ս վերը, p. 59, para. 173.
- <sup>28</sup> Y. Shany, "Faraway, So Close: The Legal Status of Gaza After Israel's Disengagement", 8 *Yearbook of International Humanitarian Law* 369 (2006), p. 376.
- <sup>29</sup> *The D.R.C. v. Uganda*, հղում թիվ 27, p. 59, para. 175.
- <sup>30</sup> Տե՛ս նույն տեղում:
- <sup>31</sup> Letter to the UN, հղում թիվ 2, p. 2, para. 2.
- <sup>32</sup> Dinstein, հղում թիվ 20, p. 33.
- <sup>33</sup> Տե՛ս, օրինակ, Freedom House, *Freedom in the World Report – Nagorno-Karabakh [Armenia/Azerbaijan]* (2009), հասանելի է հետևյալ կայքում՝ [http://freedomhouse.org/inc/content/pubs/fiw/inc\\_country\\_detail.cfm?year=2009&country=7740&pf](http://freedomhouse.org/inc/content/pubs/fiw/inc_country_detail.cfm?year=2009&country=7740&pf).
- <sup>34</sup> Լեռնային Ղարաբաղի Հանրապետության մշտական ներկայացուցչությունների ցանկը հասանելի է հետևյալ կայքում՝ <http://nkr.am/en/permanent-representations/104/>.
- <sup>35</sup> Freedom House, *Freedom in the World Report – Nagorno-Karabakh [Armenia/Azerbaijan]*, հղում թիվ 41.
- <sup>36</sup> Freedom House, *Freedom in the World Report – Azerbaijan* (2009), հասանելի է հետևյալ կայքում՝ [http://freedomhouse.org/inc/content/pubs/fiw/inc\\_country\\_detail.cfm?year=2009&country=7560&pf](http://freedomhouse.org/inc/content/pubs/fiw/inc_country_detail.cfm?year=2009&country=7560&pf).
- <sup>37</sup> Articles on Responsibility of States for Internationally Wrongful Acts, *հղում թիվ 15*, Art. 8.
- <sup>38</sup> *Nicaragua*, հղում թիվ 8, p. 65, para. 115; տե՛ս նաև *Application of the Convention on the Prevention and Punishment of the Crime of Genocide (Bosnia and Herzegovina v. Serbia and Montenegro)*, 2007 I.C.J., p. 143, para. 399, հասանելի է հետևյալ կայքում՝ [www.icj-cij.org](http://www.icj-cij.org) [hereinafter *Genocide Case*].
- <sup>39</sup> *Nicaragua*, տե՛ս վերը:
- <sup>40</sup> *Prosecutor v. Tadić*, Case No. IT-94-1-A, Judgment of the Appeals Chamber, para. 137 (July 15, 1999).
- <sup>41</sup> *Genocide Case*, հղում թիվ 38, para. 403; բայց տե՛ս A. Cassese, "The Nicaragua and Tadić Tests Revisited in Light of the ICJ Judgment on Genocide in Bosnia", 18 *European Journal of International Law* 649, 653-654 (2007) (claiming that the ICJ did not base the 'effective control' test on customary international law, general principles of State responsibility or general principles of international law, but was rather guided by 'practical wisdom and judicial restraint').
- <sup>42</sup> *Genocide Case*, տե՛ս վերը, para. 404.
- <sup>43</sup> *Tadić*, հղում թիվ 40, para. 137 ("the question at issue is whether a *single* private individual or a *group that is not militarily organised* has acted as a *de facto* State organ when performing a specific act, it is necessary to ascertain whether specific instructions concerning the commission of that particular act had been issued by that State to the individual or group in question").
- <sup>44</sup> Dinstein, հղում թիվ 20, pp. 42-45.
- <sup>45</sup> Thomas de Waal, *Black Garden: Armenia and Azerbaijan through Peace and War* (New York University Press: New York and London 2003), p. 213.
- <sup>46</sup> Տե՛ս նույն տեղում, p. 212.
- <sup>47</sup> S.C. Res. 853, U.N. Doc. S/RES/853, para. 8 (July 29, 1993).
- <sup>48</sup> S.C. Res. 884, U.N. Doc. S/RES/884, para. 2 (Nov. 12, 1993).
- <sup>49</sup> Letter dated 26 December 2008 from the Permanent Representative of Azerbaijan to the United Nations addressed to the Secretary-General, UN Doc. A/63/664-S/2008/823 (Dec. 8, 2008), paras. 155-167; Letter to the UN, հղում թիվ 2, p. 5, para. 11.
- <sup>50</sup> *Frontier Dispute (Burkina Faso/Mali)*, 1986 I.C.J. Rep. 554, p. 566, para. 23.
- <sup>51</sup> E. McWhinney, "Self-Determination of Peoples and Plural-Ethnic States: Secession and State Succession and the Alternative, Federal Option", 294 *Recueil des Cours* 167, 229-235 (2002).
- <sup>52</sup> *Western Sahara*, Advisory Opinion, 1975 I.C.J. Rep. 12, p. 68, para. 162.
- <sup>53</sup> C. J. Walker, *Armenia: The Survival of a Nation*

**ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ**

- (2<sup>nd</sup> edn., St. Martin's Press, NYC, 1990), pp. 256-257.
- <sup>54</sup> C. Mutafian et al., *The Caucasian Knot; The History and Geo-Politics of the Nagorno-Karabakh* (Zed Books: London & New Jersey 1994), p. 116.
- <sup>55</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 116-118.
- <sup>56</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 120:
- <sup>57</sup> Տե՛ս նույն տեղը, p. 123:
- <sup>58</sup> Walker, հղում թիվ 53, p. 270; J. M. Douglas, *The Armenians* (J.J. Winthrop Corp. Publisher, 1992), p. 394.
- <sup>59</sup> Mutafian et al., հղում թիվ 54, p. 123.
- <sup>60</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 126:
- <sup>61</sup> Տե՛ս, Svante Cornell, *The Nagorno-Karabakh Conflict* (Uppsala University 1999), p. 7; T. Potier, *Conflict in Nagorno-Karabakh, Abkhazia and South Ossetia: A Legal Appraisal* (Kluwer Law International, The Hague/London/Boston 2001), pp. 2-3.
- <sup>62</sup> J. Crawford, *The Creation of States in International Law* (2<sup>nd</sup> ed., Clarendon Press, Oxford 2006), 606.
- <sup>63</sup> Report of the Fifth Committee of the Assembly of the League of Nations (Dec. 1, 1920), *cited in* Letter dated 23 March 2009 from the Permanent Representative of Armenia to the United Nations addressed to the Secretary-General, U.N. Docs. A/63/781-S/2009/156, p. 8 (March 24, 2009) (“this territory, occupying a superficial area of 40.000 square miles, appears to have never formerly constituted a State, but has always been included in larger groups such as the Mongol or Persian and since 1813 the Russian Empire. The name Azerbaijan which has been chosen for the new Republic is also that of the neighbouring Persian province”).
- <sup>64</sup> Potier , հղում թիվ 61, p. 3.
- <sup>65</sup> Տե՛ս նույն տեղը:
- <sup>66</sup> Mutafian et al., հղում թիվ 54, p. 136.
- <sup>67</sup> Տե՛ս И.И. Лукашук, *Современное право международных договоров: Том II Действие международных договоров* (Волтерс Клувер, Москва 2006), стр. 353.
- <sup>68</sup> Մանրամասն տե՛ս M. Akehurst, “Custom as a Source of International Law”, 47 *British Year Book of International Law* 1 (1974-1975), p. 2.
- <sup>69</sup> Տե՛ս, օրինակ, I. Brownlie, *Principles of Public International Law* (7th ed., Oxford University Press 2008), p. 509; *Oppenheim's International Law, vol. 1 Peace* (9<sup>th</sup> ed. by R. Jennings & A. Watts, Longman: London 1992), pp. 183-184.
- <sup>70</sup> Տե՛ս, *Jurisdiction of the Courts of Danzig*, Advisory Opinion, 1928 P.C.I.J. Series B, No. 15, p. 26; *Legal Status of Eastern Greenland*, 1933 P.C.I.J. Series A/B, No. 53, pp. 75, 95; *Legal Consequences for States of the Continued Presence of South Africa in Namibia*, Advisory Opinion, 1971 I.C.J. Rep. 16, pp. 46-47, paras. 91-95.
- <sup>71</sup> *Eritrea-Ethiopia Claims Commission (EECC): Partial Award – Jus Ad Bellum, Ethiopia's Claims 1-8*, [Dec. 19, 2005], 45 *International Legal Materials* 430 (2006), pp. 433-434, para. 10.
- <sup>72</sup> *Arbitral Tribunal Constituted Pursuant to Article 287, and in Accordance with Annex VII, of the United Nations Convention on the Law of the Sea in the Matter of an Arbitration Between Guyana and Suriname*, Permanent Court of Arbitration [Sept. 17, 2007], 47 *International Legal Materials* 227 (2008), p. 166, paras. 423-424.
- <sup>73</sup> Տե՛ս M. Pomerance, *Self-Determination in Law and Practice: The New Doctrine in the United Nations* (Martinus Nijhoff Publishers: The Hague/Boston/London 1982), p. 49.
- <sup>74</sup> Տե՛ս, օրինակ, P. Malanczuk, *Akehurst's Modern Introduction to International Law* (7<sup>th</sup> ed., Routledge: London/New York 1997), pp. 314-315.
- <sup>75</sup> O. Schachter, *International Law in Theory and Practice* (Martinus Nijhoff Publishers; Dordrecht/Boston/London 1991), p. 117.
- <sup>76</sup> R. Wolfrum, “Article 1 of the UN Charter”, in *The Charter of the United Nations: A Commentary* (B. Simma ed., Oxford University Press 2002), p. 40.
- <sup>77</sup> Letter to the UN, հղում թիվ 2, p. 10, para. 24.

---

## CERTAIN LEGAL ISSUES CONCERNING THE LEGAL REGULATION OF THE ARTSAKH CONFLICT

**Levon GEVORGYAN**

*PhD student, Yerevan State University,  
LLM, Washington College of Law,  
American University*

---

The logic of the Republic of Azerbaijan, which states that Armenia has occupied the territory of the former, that occupation amounts to a form of aggression and that it is permissible to resort to self-defence against occupation, is not in accordance with international law. The international legal criteria of occupation are not satisfied in the case of Nagorno-Karabakh. Furthermore, occupation cannot be consid-

ered as a form of aggression. The term “occupation” does not appear in any instrument enshrining norms of *jus ad bellum*, but only in treaties relating to international humanitarian law. The only instrument, which makes an attempt to qualify occupation as a form of aggression — the General Assembly resolution 3314 — does not reflect customary international law. Even assuming that Armenia has in fact occupied the territory of Azerbaijan, still international courts of law have not recognized the right of states to resort to self-defence against occupation. The violations of the ceasefire are, thus, breaches of the prohibition of the use of force of the UN Charter.

---

**ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ**

**ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՅԱՑՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ-  
ԻՐԱՎԱԿԱՆ ՈՐՈՇ ԶԻՄԱՅԱՐՑԵՐ**

**Նարինե ՉԱՅՐԻՅԱՆ**

*Եվրոպական և միջազգային իրավունքի  
ամբիոնի ասպիրանտ*

**Կարող եմ մտորել իրավունքի մասին,  
երբ ես գինված եմ**

**Պոմպեոս**

**1** 989թ. սկսած հակամարտությունը  
Լեռնային Ղարաբաղի և Ադրբեջանի  
միջև վերափոխվեց ռազմական առ-  
ճակատման: Նույնիսկ պատերազմական  
թեժ գործողություններին զուգահեռ՝ Ար-  
ցախի ժողովուրդը անկախացման ողջ  
գործընթացը համահունչ է եղել միջազգա-  
յին իրավունքի նորմերին ու սկզբունքնե-  
րին:

ԽՍՀՄ փլուզման ընթացքում Ղարաբա-  
ղի ժողովուրդը օգտագործեց իրեն վերա-  
պահված՝ ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի  
«ԽՍՀՄ կազմից միութենական հանրապե-  
տության դուրս գալու հետ կապված հար-  
ցերի որոշման կարգի մասին» 1990թ.-ի  
ապրիլի 3-ի՝ օրենքով նախատեսված իրա-  
վունքը, համաձայն որի՝ խորհրդային հան-  
րապետությունները, ինքնավար կազմավո-  
րումները, ինչպես նաև առանձին ազգային  
խմբեր հանրաքվեի միջոցով կարող էին ո-  
րոշել դուրս գալ ԽՍՀՄ կազմից կամ մնալ  
նրա կազմում, ինչպես նաև ինքնուրույն ո-  
րոշել իրենց պետաիրավական կարգավի-  
ճակը: ԽՍՀՄ այն օրենքը բխում է ժամա-  
նակակից միջազգային իրավունքից՝ հա-  
մաձայն որի՝ «բոլոր ժողովուրդներն իրա-  
վունք ունեն ազատ, առանց արտաքին մի-  
ջամտության որոշելու իրենց քաղաքական  
կարգավիճակը ... և բոլոր պետություննե-  
րը պարտավոր են ձեռնպահ մնալ ժողո-  
վուրդներին ինքնորոշման, ազատության

և անկախության իրենց իրավունքից զրկող  
ցանկացած բռնի գործողություններից»<sup>2</sup>:

Ղարաբաղյան պետականության անկա-  
խության վերականգնման գործընթացի  
սկիզբը դրվել է 1991թ. սեպտեմբերի 2-ին,  
երբ ժողովրդական պատգամավորների՝  
Լեռնային Ղարաբաղի մարզային և Շա-  
հումյանի շրջանային խորհուրդների հա-  
մատեղ նստաշրջանը հռչակեց Լեռնային  
Ղարաբաղի Յանրապետությունը<sup>3</sup>: 1991թ.  
դեկտեմբերի 10-ի համաժողովրդական  
հանրաքվե, երբ ԼՂՀ քաղաքացիների բա-  
ցարձակ մեծամասնությունը (քվեարկող-  
ների 99,89%) կողմ արտահայտվեց անկա-  
խությանը<sup>4</sup>, և համաժողովրդական հան-  
րաքվեի արդյունքների հիման վրա ԼՂՀ ա-  
ռաջին գումարման նորընտիր Խորհրդա-  
րանի 1992թ. հունվարի 6-ին ընդունած  
Լեռնային Ղարաբաղի Յանրապետության  
պետական անկախության մասին Յոչակա-  
գիրը, «ելնելով ժողովրդի ինքնորոշման  
անկապտելի իրավունքից, հիմնվելով Լեռ-  
նային Ղարաբաղի Յանրապետության ժո-  
ղովրդի կամքի վրա, որն արտահայտվել է  
1991 թ.-ի դեկտեմբերի 10-ին կայացած  
հանրապետական հանրաքվեի միջոցով...,  
հաստատելով հավատարմությունը  
1991թ.-ի սեպտեմբերի 2-ի Լեռնային Ղա-  
րաբաղի Յանրապետություն հայտարարե-  
լու մասին Յոչակագրի սկզբունքներին...,  
հարգելով տնտեսական, սոցիալական և  
մշակութային իրավունքների մասին մի-  
ջազգային համաձայնագրի՝ Մարդու իրա-  
վունքների համընդհանուր հռչակագրի,  
Անվտանգության և համագործակցության  
հարցերով եվրոպական խորհրդակցու-  
թյան մասնակից երկրների Վիեննայի հան-  
դիպման եզրափակիչ փաստաթղթի և մի-

ջազգային իրավունքի հանրաճանաչ նորմերի սկզբունքները և հետևելով դրանց, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Գերագույն խորհուրդը հաստատում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անկախ պետականությունը»<sup>6</sup>, եզրափակիչ ակտը դարձավ Ղարաբաղյան պետականության վերականգնման գործընթացում:

Արցախյան պետականության կազմավորման կարևորագույն բաղադրիչներից մեկի՝ 1991թ.-ի դեկտեմբերի 10-ի հանրաքվեի օրինականությունը միջազգային իրավունքի տեսանկյունից չի կարող որևէ կասկած հարուցել: Հանրաքվեն անցել է ինչպես միջազգային իրավունքի նորմերին ու սկզբունքներին, այնպես էլ այդ ժամանակ դեռ գործող ԽՍՀՄ օրենսդրությանը համապատասխան: Ադրբեջանական կողմը անընդմեջ պնդում է, որ վերոհիշյալ հանրաքվեն չի կարող համարվել օրինական, քանի որ ադրբեջանցիները դրան չեն մասնակցել: Նման պնդումը տեղին չէ այն պարզ պատճառով, որ ԼՂՀ կենտրոնական ընտանական կոմիտեն հայ և ադրբեջանցի բնակիչներին տրամադրել է Լեռնային Ղարաբաղի իրավական կարգավիճակը որոշելու հավասար հնարավորություն, և այս փաստն ամրագրված է միջազգային դիտորդների կողմից: Սակայն ադրբեջանական բնակչությունը չի մասնակցել քվեարկությանը՝ սեփական կամքով հրաժարվելով այն տարածքի ապագա կարգավիճակը որոշելու իր իրավունքից, որտեղ նա ապրում էր: ԼՂ-ում հանրաքվեի կազմակերպման բոլոր պայմաններն ու ամբողջ ընթացքը համապատասխանում էին հանրաքվեի կազմակերպման միջազգային չափանիշներին:

Պետք է նաև հիշել, որ ԼՂՀ հռչակումը տեղի է ունեցել 1991թ.-ի օգոստոսի 30-ի Ադրբեջանի Գերագույն խորհրդի «Պետական անկախության վերականգնման մասին» Հռչակագրի ընդունումից հետո, որի համաձայն՝ Ադրբեջանական Հանրապետությունն իրեն հռչակել է 1918-1920թթ. Ադրբեջանական Դեմոկրատական Հանրա-

պետության իրավահաջորդը<sup>6</sup>: Այս կերպ մերօրյա Ադրբեջանը հրաժարվել է խորհրդային իրավական ժառանգությունից՝ կորցնելով Լեռնային Ղարաբաղը ղեկավարելու բոլոր իրավունքները:

Արցախի ժողովրդի՝ իր ապագայի կառուցման կամարտահայտման մեկ այլ վառ օրինակ է 2006թ. դեկտեմբերի 10-ի սահմանադրական հանրաքվեն: ԼՂՀ Հիմնական օրենքի ընդունումը ոչ միայն խթան էր քաղաքացիական հասարակության զարգացման համար, այլև սահմանադրական մակարդակով ամրապնդել է ԼՂՀ պետական ինքնիշխանությունը: Այն մեկ անգամ ևս հաստատել է Արցախի ժողովրդի հավատարմությունը անկախության ու ժողովրդավարական զարգացման սկզբունքներին:

Պետական ինքնիշխանության ու Ադրբեջանից անկախ զարգացման ուղիների ընտրությունը և ինտեգրումը ժողովուրդների համաշխարհային ընկերակցություն Արցախի ժողովրդի անքակտելի իրավունք են և հիմնվում են միջազգային իրավունքի հիմնարար փաստաթղթերի վրա: Որպես կայացած անկախ պետություն, որն արդեն 20 տարվա պատմություն ու պետականության համար անհրաժեշտ բոլոր պահանջներն ու հատկանիշներն ունի, Արցախի Հանրապետությունը կարող է օգտվելու միջազգային իրավունքում արդեն գոյություն ունեցող նախադեպերից՝ ՄԱԿ-ին անդամակցելու և համաշխարհային ընտանիքի անդամ դառնալու համար: ԼՂՀ-ն ամբողջովին բավարարում է ՄԱԿ-ին անդամակցելու այն պահանջները, որոնք ամրագրված են ՄԱԿ-ի Միջազգային դատարանի՝ 1948թ. մայիսի 28-ի Նոր անդամներ ընդունելու մասին խորհրդատվական եզրահանգման մեջ, համաձայն որի «Անդամակցությունը Միացյալ ազգերին բաց է այն բոլոր խաղաղասեր պետությունների համար, որոնք ընդունում են ՄԱԿ-ի Կանոնադրության պարտականությունները, ի վիճակի են և պատրաստ հետևելու այդ պարտականություններին»:

### **ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆԵՔ**

Այս իրողություններն ընդունվում են ինչպես առաջատար միջազգային կազմակերպություններում, այնպես էլ մի շարք բարձրաստիճան քաղաքական գործիչների ու փորձագետների կողմից: Այսպես օրինակ՝ 1999թ. մարտի 11-ին Եվրախորհրդարանը որոշում ընդունեց, որում ամրագրում է. «1991թ.-ի սեպտեմբերին Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը հռչակել է իր անկախությունը՝ ԽՍՀՄ փլուզումից հետո նախկին խորհրդային պետությունների նույնատիպ հռչակագրերի օրինակով»<sup>8</sup>: Դրանով իսկ փաստորեն ճանաչվել է Ղարաբաղի (ինչպես նախկին ԽՍՀՄ հանրապետությունների) անկախության հռչակման միջազգային-իրավական հիմնավորվածությունը:

Իսկ 2005թ. սեպտեմբերին՝ ԼՂՀ անկախության հռչակման 14-րդ տարեդարձը տոնելու ժամանակ, ԱՄՆ 59 կոնգրեսականներ, որոնք ներկայացնում էին թե՛ Դեմոկրատական և թե՛ Հանրապետական կուսակցությունները, ԱՄՆ նախագահ Ջորջ Բուշին ուղղել են ուղերձ՝ ճանաչել Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը: Փաստաթղթում ընդգծվում է. «Ժողովրդական ճանապարհով ընտրված կառավարությամբ, մարտունակ զինված ուժերով և անկախ արտաքին քաղաքականությամբ՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը լիովին համապատասխանում է պետականության միջազգային չափանիշներին: Իր անկախության 14 տարիների ընթացքում Լեռնային Ղարաբաղն ապացուցել է, որ կարող է լինել միջազգային ընկերակցության հուսալի գործընկեր: Լեռնային Ղարաբաղը զգալիորեն նպաստել է Հարավային Կովկասի խաղաղությանն ու կայունությանը...»<sup>9</sup>:

Այն, որ Արցախի Հանրապետությունը, ի տարբերություն Ադրբեջանի, հակամարտության առաջին իսկ օրվանից հավատարիմ է հակամարտությունների խաղաղ

կարգավորման ու ուժի չկիրառման սկզբունքներին, անհերքելի փաստ է: ԼՂՀ իշխանությունները հակամարտության կարգավորման ողջ ընթացքում ցուցաբերել են հավատարմություն խաղաղ բանակցություններին: Արցախի Հանրապետությունը գիտակցում է իր պատասխանատվության չափն ինչպես հակամարտության կարգավորման, այնպես էլ տարածաշրջանում խաղաղության ու անվտանգության հաստատման գործում: Ղարաբաղյան կողմը բազմիցս ադրբեջանական կողմին երկխոսության պատրաստականություն է հայտնել՝ ոչ միայն տարածքների, այլև մի շարք այլ խնդիրների կարգավորման կապակցությամբ, ինչպես օրինակ՝ փախստականների հարցը և այլն: Պաշտոնական Բաքուն, հրաժարվելով երկխոսության մեջ մտնել Արցախի իշխանությունների հետ, ցուցաբերում է հարցի կարգավորման ոչ կառուցողական մոտեցում: Եվ այս ամենն այն դեպքում, երբ հենց Ադրբեջանն է պատասխանատու Արցախի ժողովրդի խաղաղ ինքնորոշման իրավունքի իրականացման գործընթացը ռազմական հակամարտության վերածելու համար: Լինելով Ադրբեջանի սանձազերծած պատերազմի սուբյեկտ՝ Ղարաբաղը պետք է նաև լինի բանակցային գործընթացի լիիրավ սուբյեկտ: Լեռնային Ղարաբաղի՝ հակամարտության լիիրավ կողմ լինելու փաստը ամրագրվել է դեռևս 1994թ.-ին հրադադար հաստատելու մասին Բիշքեկի արձանագրությունում, որը ստորագրվել էր Լեռնային Ղարաբաղի Հանրապետության, Հայաստանի և Ադրբեջանի կողմից ԵԱՀԽ բուդապեշտյան խորհրդաժողովի ընթացքում<sup>10</sup>: Այս փաստը նաև ամրագրվել է ԵԱՀԿ Դեկլար խորհրդի առաջին հանդիպման ընթացքում՝ «գործող համանախագահի 1995թ.-ի մարտի 31-ի որոշման»<sup>11</sup> մեջ: Համաձայն այս փաստաթղթերի՝ ԼՂ հակամարտության կարգավորման գործող մեխանիզմ պետք է դառնան ԼՂ մասնակցությամբ բանակցությունները:

Միջազգային հարաբերությունների ժա-

մանակակից պրակտիկայում գոյություն ունեն մանատիպ հակամարտությունների կարգավորման համանման օրինակներ, որոնք չեն կարող չկանխորոշել որոշակի իրավաքաղաքական հետևանքներ՝ այդ թվում նաև դարաբաղյան խնդրի կարգավորման ենթատեքստում: Խոսքը այնպիսի երևույթների մասին է, ինչպիսիք են.

– անկախության մասին հանրաքվեներ, որոնք կայացել են կամ պիտի կայանան Արևելյան Թիմորում, Էրիտրեայում, Քվեբեկում, Ջիբրալթարում, Ֆարերյան կղզիներում, Արևմտյան Սահարայում, Հարավային Սուդանում, Չերնոգորիայում, Նոր Կալեդոնիայում,

– ազգերի ինքնորոշման իրավունքի սկզբունքի արժեքի բարձրացում. վերջին շրջանում մանատիպ հակամարտությունների կարգավորման ուղիների համեմատական ուսումնասիրությունը, այդ թվում Պաղեստինի ու Կոսովոյի դեպքերը, վկայում են, որ մանատիպ բոլոր հակամարտությունները փաստացիորեն լուծվում են՝ հիմնվելով ինքնորոշման իրավունքի սկզբունքի իրականացման վրա:

Հետաքրքրություն է առաջացնում մի շարք արևմտյան երկրների դիրքորոշումն այն հարցի շուրջ, թե Կոսովոն չի կարող նախադեպ հանդիսանալ այլ՝ հատկապես հետխորհրդային տարածքում ծագած հակամարտությունների համար: Պատճառաբանելով իրենց դիրքորոշումը՝ վերոհիշյալ կողմնորոշման ջատագովները հիմնվում են մի շարք հատկանիշների վրա, որոնցով Կոսովոյի և Ղարաբաղի հակամարտությունները իրարից տարբերվում են: Սա, իհարկե, հակամարտության ձևաչափն ու զարգացումն է, հասարակությունների տրամադրվածությունը, խաղաղության պահպանման ու անվտանգության ապահովման մեխանիզմներն ու նախ և առաջ Կոսովոյի կարգավիճակի նկատմամբ Արևմուտքի մոտեցումները: Այդ, դժվար է չճանաչել սկզբունքային տարբերությունների առկայությունը երկու հակամարտությունների միջև, բայց և չի կարելի մեր-

ժել այն հանգամանքը, որ երկու հակամարտությունների դեպքում գոյություն ունեն մի շարք ընդհանրություններ: Այսպիսով չի կարելի բացառել, որ մեկ խնդրի կարգավորման համար առաջադրված մոտեցումներն ու որոշումները կարող են օգտակար լինել մյուսի լուծման համար: Խոսքը նախ և առաջ այնպիսի հանգամանքի մասին է, ինչպիսին է հանրաքվեի միջոցով ինքնորոշման իրավունքի հաստատումը: Երկու դեպքերում էլ գոյություն ունի պետության, արդյունավետ կառավարում չիրականացնելու արդյունքում, որոշակի տարածքի նկատմամբ միջազգայնորեն ճանաչված իրավունքների կորստի հաստատում՝ հիմնված իշխանությունների կողմից միջազգային իրավունքի հանրաճանաչ սկզբունքների, ժողովրդավարության, մարդու իրավունքների հարգման ու տարածաշրջանային անվտանգության վրա:

Իրականում Ղարաբաղյան հիմնախնդրի յուրահատկությունը այն է, որ ԼՂՀ միջազգային-քաղաքական ճանաչման իրավունքը հավասարապես հիմնվում է և Արցախյան պետականության գործունյա լինելու, և նրա հռչակման ու հետագա զարգացման քաղաքական ու պատմաիրավական հիմքերի անթերիության վրա: Արցախի Հանրապետությունն ունի իրական պոտենցիալ ոչ միայն սեփական երկիրը դեկլարելու, այլ նաև տարածաշրջանային ակտիվ դերակատարության համար, որնցից շատ հեռու է հարևան Ադրբեյջանը: Պաշտոնական Բաքուն, առաջադրելով ամբողջովին անընդունելի պայմաններ, շանտաժի ենթարկելով միջազգային միջնորդներին, օրեցօր մեծացնելով իր, այսպես կոչված, «սև ցուցակը» և հանդես գալով ռազմատենչ հայտարարություններով, բացահայտորեն ցուցաբերում է անկարողություն՝ հակասությունների կարգավորման քաղաքակիրթ ուղիների ձեռքբերման հարցում: Նման վարքագծի առկայությունը ստիպում է մեկ անգամ ևս կասկածի տակ առնել ներկայիս ադրբեյջանական վերնա-

### **ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆԲ**

խավի քաղաքական հասունությունը և խելամիտ տարածաշրջանային քաղաքականություն վարելու նրա ունակությունը, առավել ևս Հարավային Կովկաս - Սև ծով տարածաշրջանում հատուկ դեր ստանձնելու նրա ձգտումը:

Հենց միջազգային հարաբերություններում խաղաղություն ու կայունություն ապահովելու համար էլ ստեղծվել և գործադրվում են ժամանակակից միջազգային իրավունքի նորմերն ու սկզբունքները: Մի շարք փորձագետների կարծիքով, ԼՂ հակամարտության կարգավորումը հնարավոր է իբր թե երկու՝ իրար հակառակ սկզբունքների՝ տարածքային ամբողջականության և ինքնորոշման իրավունքի համադրմամբ: Սա թյուր կարծիք է: Երբ խոսում ենք տարածքային ամբողջականության մասին երկու հիմնական փաստաթղթերի մասին կարելի է վկայակոչել ՄԱԿ-ի Կանոնադրությունը և ԵԱՀԿ Հելսինկյան եզրափակիչ ակտը: Իսկ որքանով են դրանք կիրառելի Լեռնային Ղարաբաղի հակամարտության դեպքում: Կանոնադրությունը իհարկե գերակա է մնացած բոլոր միջազգային փաստաթղթերի նկատմամբ: Այս դրույթն ամրագրված է Կանոնադրության 103-րդ հոդվածում, և ընդունվում է բոլոր անդամ պետությունների կողմից: Կանոնադրության առաջին հոդվածը սահմանում է կազմակերպության նպատակներն ու սկզբունքները: Համաձայն առաջին հոդվածի երկրորդ կետի. «ՄԱԿ-ի նպատակներն են. 1. ... 2. Ազգերի միջև զարգացնել բարեկամական հարաբերություններ՝ հիմնված ժողովուրդների հավասար իրավունքների ու ինքնորոշման իրավունքի սկզբունքների հարգման վրա, և նախաձեռնել այլ համապատասխան քայլեր՝ համաշխարհային խաղաղության ամրապնդման համար»<sup>12</sup>: Պարզ է դառնում, որ ՄԱԿ-ը ժողովուրդների ինքնորոշումը համարում է ոչ միայն իր հիմնական սկզբունքներից մե-

կը, այլ և բարեկամական հարաբերությունների ու համաշխարհային խաղաղության հիմքը: Այսպիսով, ինքնորոշման մերժումը խոչընդոտում է բարեկամական հարաբերություններին ու համաշխարհային խաղաղությանը: Դեռ ավելին, 24-րդ հոդվածի 2-րդ կետը հաստատում է. «Այս պարտականությունների իրականացման ընթացքում Անվտանգության խորհուրդը պետք է գործի ՄԱԿ-ի նպատակներին ու սկզբունքներին համաձայն»<sup>13</sup>: Սա էլ իր հերթին նշանակում է, որ միջազգային խաղաղության ու անվտանգության հաստատման գործում Անվտանգության խորհուրդը պետք է առաջնորդվի ժողովուրդների ինքնորոշման գաղափարով, քանի որ դա իր՝ ՄԱԿ-ի Կանոնադրության կարևորագույն նպատակներից ու սկզբունքներից մեկն է: Իսկ ինչ վերաբերում է տարածքային ամբողջականությանը, ապա այն նույնիսկ ընդգրկված է ՄԱԿ-ի նպատակների ու սկզբունքների ցանկի մեջ: Կանոնադրությունը ներառում է միջազգային հարաբերություններում տարածքային ամբողջականության դեմ ուժի չկիրառման գաղափարը: 2-րդ հոդվածի 4-րդ կետը հռչակում է. «Բոլոր անդամները իրենց միջազգային հարաբերություններում պետք է խուսափեն ցանկացած պետության տարածքային ամբողջականության կամ քաղաքական անկախության նկատմամբ ուժի կամ ուժի սպառնալիքի կիրառումից...»<sup>14</sup>: Այլ կերպ ասած՝ խոսքը ոչ թե պետության տարածքային ամբողջականության պահպանման, այլ մեկ պետության կողմից մյուսի տարածքային ամբողջականության դեմ ուժի կիրառման անընդունելիության մասին է: Այս սկզբունքը որևէ կապ չունի ժողովրդի ինքնորոշման հետ, երբ բնակչությունը ցանկանում է ինքնորոշվել անկախացման միջոցով:

1952թ.-ի դեկտեմբերի 16-ին ՄԱԿ-ի Գերագույն ասամբլեան ընդունել է 637A որոշումը, համաձայն որի. «ՄԱԿ-ի անդամ պետությունները պետք է աջակցեն ժողովուրդների ու ազգերի ինքնորոշման իրավունքին»<sup>15</sup>: Կարևոր է ընդգծել, որ ինքնու-



րոշման իրավունքի հարգումը մեկնաբանվում է որպես պարտականություն, որը բխում է ՄԱԿ-ի Կանոնադրությունից: Մեկ այլ կարևոր հանգամանք է. ինքնորոշման սկզբունքը միջազգային իրավունքի *jus cogens* (ինպերատիվ) նորմերի բաղկացուցիչ մաս է, որը չի կարող փոփոխվել:

Միջազգային մյուս կարևորագույն փաստաթուղթը, որը հաճախ մեջբերվում է ԼՂ խնդրի կարգավորման գործընթացում, 1975թ. օգոստոսի 1-ի ԵԱՀԽ ՅԵԼՍԻՆԿյան եզրափակիչ ակտն է: Ինչպես պնդում է ադրբեջանական կողմը, այս փաստաթուղթն իբր թե պաշտպանում է տարածքային ամբողջականությունը և տարածքների անխախտելիությունը: Իրականում մասնակից պետությունները գտնում են, որ իրենց սահմանները կարող են փոփոխվել միջազգային իրավունքին համաձայն՝ խաղաղ միջոցներով ու համաձայնագրով: Այն պարզաբանում է, որ տարածքային ամբողջականության ու քաղաքական անկախության դեմ ուժի կիրառումը անընդունելի է. «Մասնակից պետությունները իրենց փոխադարձ հարաբերություններում, ինչպես նաև միջազգային հարաբերություններում ընդհանրապես հեռու կմնան ցանկացած պետության տարածքային ամբողջականության ու քաղաքական անկախության դեմ ուժի կամ ուժի սպառնալիքի կիրառումից»<sup>16</sup>:

Այսպիսով միանգամայն պարզ է դառնում, որ ՅԵԼՍԻՆԿյան եզրափակիչ ակտը, ինչպես և ՄԱԿ-ի Կանոնադրությունը քննադատում են տարածքային ամբողջականության նկատմամբ ուժի կիրառումը և ոչ թե տարածքային ամբողջականության պահպանումը: Այստեղ պետք է հասկանալ և հիշել, որ ՅԵԼՍԻՆԿյան եզրափակիչ ակտը և ՄԱԿ-ի Կանոնադրությունը նպատակ են հետապնդում, խուսափելով միջազգային հարաբերություններում ուժի կամ ուժի սպառնալիքի կիրառումից, ամրապնդել համաշխարհային խաղաղությունն ու անվտանգությունը, այլ ոչ թե պետությունների արտաքին սահմանները:

Այսօր ՄԱԿ-ի Կանոնադրության համապատասխան կետը (հոդված 4/2) նույնպես չի երաշխավորում պետության տարածքային ամբողջականությունը այն դեպքերում, եթե տարածքային փոփոխությունները տեղի են ունենում տվյալ տարածքում ժողովրդի կամարտահայտմանը համապատասխան:

ԼՂՀ անկախությունը և Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը գտնվում են տարբեր իրավական հարթությունների վրա: Իրավական տեսանկյունից նախ ԼՂՀ անկախությունը ոչ մի կերպ չի խախտում Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը, քանի որ Լեռնային Ղարաբաղը երբեք չի հանդիսացել անկախ ադրբեջանական պետության մաս: Մերօրյա Ադրբեջանը իրեն հռչակել է 1918-1920թթ. Ադրբեջանի Դեմոկրատական Հանրապետության իրավահաջորդը<sup>17</sup>, որի կազմում Լեռնային Ղարաբաղը չկար. ԼՂ այդ ժամանակ ևս ուներ վիճելի կարգավիճակ: Ինչպես գիտենք, ժամանակին Ազգերի լիգան չի ճանաչել Ադրբեջանը՝ վերջինիս հստակ սահմաններ չունենալու պատճառով: Բացի սրանից, պաշտոնական Բաքուն Ադրբեջանում խորհրդային իշխանության հաստատումը հայտարարել է անօրինական՝ հրաժարվելով խորհրդային քաղաքական ու իրավական ժառանգությունից:

Քննելով զուտ իրավական տեսանյունից՝ կարելի է եզրակացնել, որ միջազգային հանրությունը պարտավոր է ճանաչել Լեռնային Ղարաբաղի ժողովրդի ինքնորոշման իրավունքը այն պարզ պատճառով, որ հակառակ պարագայում դա միջազգային իրավունքի *jus cogens* նորմի մերժում է, քանի որ ինքնորոշման սկզբունքն ու իրավունքը պատկանում են *erga omnes* դասին, այսինքն՝ միջազգային իրավունքի իրավական այնպիսի պարտավորություններ են, որոնք ոչ թե երկկողմ կամ փոխադարձ են, այլ վերաբերում են միջազգային համայնքի բոլոր անդամներին: Ինքնորոշման իրավունքի մերժումը մարդու իրավունքի ոտնահարում է,

### ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ

հետևաբար՝ միջազգային իրավունքի խախտում, որի նկատմամբ հարգանքը պայման է նախ տարածաշրջանային, ապա համաշխարհային խաղաղության համար:

Եվ այն, որ ինքնորոշման տեսքով սեփական ճակատագիրը տնօրինելը ժողովրդի բացարձակ իրավունքն է, և որի համար միջազգային իրավունքը չունի որևէ սահմանափակում, արացուլվեց ՄԱԿ-ի Արդարադատության միջազգային դատարանի 2010 թ. հուլիսի 22-ի եզրակա-

ցության մեջ. «Ղատարանը եզրահանգում է, որ 2008 թ. փետրվարի 17-ի անկախության հռչակումը չի խախտում ընդհանուր միջազգային իրավունքը, Անվտանգության խորհրդի 1244 (1999) բանաձևը կամ Սահմանադրական շրջանակները: Հետևաբար այդ հռչակագրի ընդունումը չի խախտում միջազգային իրավունքի ոչ մի համապատասխան դրույթ»<sup>18</sup>:

Ամփոփելով վերոշարադրումը՝ կարելի է հայտարարել, որ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը կայացած պետություն է ինչպես քաղաքական, այնպես էլ միջազգային-իրավական հիմքերի առկայության առումներով:

<sup>1</sup> Տե՛ս «ԽՍՀՄ կազմից միութենական հանրապետության դուրս գալու հետ կապված հարցերի որոշման կարգի մասին» ԽՍՀՄ օրենք, Մոսկվա, 3 ապրիլի, 1990 թ.:

<sup>2</sup> Վիգեն Քոչարյան, Միջազգային իրավունք, ԵՊՀ իրատ., Եր., 2002 թ.:

<sup>3</sup> Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հռչակման մասին հռչակագիր, Սեփանակերտ, 1991թ. 2 սեպտեմբերի:

<sup>4</sup> Հռչակագիր Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անկախության հանրաքվեի արդյունքների մասին, Ստեփանակերտ, 10 դեկտեմբերի 1991 թ.:

<sup>5</sup> Հռչակագիր Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անկախության հանրաքվեի արդյունքների մասին, 6 հունվարի 1992 թ., Ստեփանակերտ:

<sup>6</sup> Декларация Верховного Совета Азербайджанской Республики “О восстановлении государственной независимости Азербайджанской Республики. от 30 августа 1991 г., Газ. “Бакинский рабочий”, 3 сентября 1991 г.

<sup>7</sup> International Court of Justice, Conditions of Admission of a State to Membership in the United Nations, Article 4/1, May 28, 1948

<sup>8</sup> The European Parliament, Resolution of the European Parliament on Nagorno Karabakh, Resolution on support for the peace process in

the Caucasus, Strasbourg, March 11, 1999, C 175/251

<sup>9</sup> Congressional letter to President George W. Bush, September 28, 2005  
/http://www.nkrusa.org/press\_releases/press\_2005\_10\_03.shtml

<sup>10</sup> Бишкекский протокол о прекращении огня в зоне нагорно-карабахского конфликта, Бишкек, 5 мая 1994 г.

<sup>11</sup> Chairman’s Summary, Senior Council, OSCE, 1-SC/Journal No. 2, Prague, 31 March 1995

<sup>12</sup> Միացյալ Ազգերի Կազմակերպության Կանոնադրություն, 26 հուլիսի 1945թ.:

<sup>13</sup> Միացյալ Ազգերի Կազմակերպության Կանոնադրություն, 26 հուլիսի 1945թ.:

<sup>14</sup> ՄԱԿ-ի Կանոնադրություն:

<sup>15</sup> ՄԱԿ-ի Գերագույն ասամբլեայի որոշում 637A, 16 դեկտեմբերի 1952 թ.:

<sup>16</sup> Եզրափակիչ ակտ, Գլուխ 1, Հելսինկի, 1 օգոստոսի 1975 թ.:

<sup>17</sup> Декларация Верховного Совета Азербайджанской Республики “О восстановлении государственной независимости Азербайджанской Республики, 30 августа 1991 г.

<sup>18</sup> Կոսովոյի վերաբերյալ ՄԱԿ-ի Արդարադատության միջազգային դատարանի խորհրդատվական եզրակացություն, Հաագա, 22 հուլիսի 2010 թ.:

## SEVERAL ISSUES OF FORMATION OF THE NAGORNO KARABAKH REPUBLIC AS STATE

**Narine HAYRIYAN**

*PhD student of the chair of European and International Law, YSU*

---

**D**uring 70 years it was the Soviet Constitution that served as the only international security guarantee for the region. After independence gained by the former Soviet republics, this frail guarantee was lost as there was legal vacuum and now alternative to substitute it. The physical security of the people of Nagorno Karabagh was at stake, as was well demonstrated by the war waged by Azerbaijan against the region and those who it considered to be its own civilians and by the decision of its Parliament to disband the regional autonomy.

In this article the author discusses the aspects of state formation of the Nagorno Karabakh Republic in accordance with international law and presents valid legal and documen-

tary basis for the realization of the right of self-determination in accordance with the norms and main principles of international law by the people of Nagorno Karabakh.

It is stated in the article that the independence of the people of Nagorno Karabakh and the territorial integrity of Azerbaijan are on different legal plane. The article also considers the possibility to use the international practice of the resolution of other similar conflicts as subjects of international law. Therefore, in case of Nagorno Karabagh, when the two principles of territorial integrity vs. self-determination are addressed, it is fully justified to speak about what contemporary international political science calls remedial secession.

The article provides legal conclusion that the Republic of Nagorno Karabakh is a politically and legally independent state, as well as the international-legal basis of the formation of state are not disputable.

---

**Հարգելի հեղինակներ,  
Հանդեսին նյութեր հանձնելիս խնդրում ենք  
պահպանել հետևյալ պահանջները.**

Խմբագրական խորհուրդը և խմբագրությունը կքննարկեն միայն այն նյութերը, որոնք կուղարկվեն էլեկտրոնային փոստով կամ խմբագրություն կներկայացվեն թղթային տարբերակով՝ էլեկտրոնային տարբերակի հետ միասին:

Հոդվածները՝ որպես կանոն առավելագույնը 25.000 տպագիր միջ՝ ներառյալ տողատակերը:

Նյութերն ընդունվում են համապատասխան ԲՈՒՀ-երի ամբիոնների, գիտահետազոտական հիմնարկների բաժինների երաշխավորության, ինչպես նաև մասնագետի կարծիքի առկայության դեպքում: Նյութին կից անհրաժեշտ է ներկայացնել հոդվածի անգլերեն վերնագիրը, համառոտագիրը, հեղինակի տվյալները:

Նյութերի ծավալը որոշելիս խնդրում ենք հիմք ընդունել հետևյալ պահանջները՝ տեքստը տպագրվում է սովորական A4 չափի թղթի վրա, 1.5 տողաչափով, հիմնական տեքստի տառերի չափը՝ 12, տողատակերի տառերի չափը՝ 10, լուսացքները՝ ձախից, վերևից, աջից և ներքևից՝ 2 սմ:

Տառատեսակը՝ հայերեն տեքստերինը՝ «Arial Armenian», ռուսերենինը՝ «Arial LatRus»:

Նորմատիվ ակտեր օգտագործելիս տեքստում պետք է նշել դրա տեսակը (Հայաստանի Հանրապետության օրենք, Հայաստանի Հանրապետության Նախագահի հրամանագիր և այլն), ընդունման ժամանակահատվածը (ըն-

դունման օրը՝ թվերով, ամիսը՝ տառերով, ընդունման տարին՝ քառանիշ թվերով, օրինակ՝ 2003 թվականի դեկտեմբերի 12), չափերտներում նշել լրիվ (առանց կրճատումների) անվանումը (այդ թվում՝ ոչ թե ՀՀ, այլ Հայաստանի Հանրապետություն): Այս դեպքում տողատակում բավարար է նշել հրատարակության արդյուրը:

Տեքստում կարելի է նշել ակտի տեսակը, ամսաթիվը և առանց չափերտների կրճատ անվանումը, որը կտա ճիշտ պատկերացում փաստաթղթի մասին:

Հեղինակներին խստիվ խորհուրդ է տրվում մինչև ուղարկելը մանրամասն ստուգել շարվածքի, ինչպես նաև համապատասխան իրավաբանական հասկացությունների ճշտությունը:

Նյութի առաջին էջում՝ վերնագրից հետո, նշվում են տեղեկություններ հեղինակի մասին, որոնք կարտացուլվեն մեր պարբերականում՝ հեղինակի անուն և ազգանունը ամբողջությամբ, պաշտոնը և աշխատանքի վայրը, առկայության դեպքում՝ գիտական աստիճանը և կոչումը: Օրինակ՝ ԵՊՀ քաղաքացիական իրավունքի ամբիոնի դոցենտ, իրավաբանական գիտությունների թեկնածու ...:

Վերջին էջում հեղինակը պարտադիր դնում է իր ստորագրությունը, նշում կոնտակտային տվյալները:

Հոդվածներն ուղարկել  
petutyun.irav@gmail.com էլեկտրոնային փոստով: